



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼ-ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ
ԲՆՈՒՅԹԸ ՅԵՎ
ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԵՏՀՐԱՏ

1932

ՅԵՐԵՎԱՆ

3հոլ3

U-25

25 AUG 2005

ՅԿՈՒՅ
Ս-25

ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԿՈՒՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼ-ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ
ԲՆՈՒՅԹԸ ՅԵՎ
ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



1932

ՅԵՐԵՎԱՆ

26.07.2013

Սա գրքայից հիմնականում հեղինակի
գեղեցումն է՝ կարդացված Գիտություն-
ների ինստիտուտում 1931 թ. մայիսի
թի 8-ին:

Պետերսոնի տպարան
Դրավիտ 699: (բ)
Հրատարակ. 1934
Պատկեր 6153
Տիրամ 2000

16148-58

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր զարգացման վերջին շրջանի, նեպի նոր և վերջին ետադի-
հասարակական-տնտեսական կյանքի ամենահատկանշական և բնո-
րոշ կողմերից մեկը աշխատավոր գյուղացիների բաղժամիլիոն
ժառանգների կոլտնտեսական վիթխարագուն շարժումն է: Այդ շար-
ժումը սոցիալ-դասակարգային խոր տեղաշարժեր և դասակարգա-
յին ուժերի վերախմբավորում է առաջացնում գյուղում, վորն իր
հյուսիսային ամրացումն է սոցիալիզմի գերբերը, իր սոցիալական
բովանդակությամբ սրբուխարական-սոցիալիստական է:

Մարքսիստական գիտությունը միշտ էլ կանգնած է յեղել այն
տեսակետի վրա, թոր գյուղատնտեսությունն արտադրողական ու-
ժերի իսկական և բուռն զարգացումը կարող է տեղի ունենալ միայն
գյուղատնտեսական խոշոր սոցիալիստական տնտեսությունների հի-
ման վրա, վորոնք շատ առավելություններ ունեն մանր տնտեսու-
թյունների համեմատությամբ: Միայն խոշոր սոցիալիստական
տնտեսությունն է մեջ կարելի յե լրիվ և ռացիոնալ ոգտադործել հզոր
մեքենաները, գյուղատնտեսական բարդ գործիքները. միայն այս-
տեղ կարելի յե եֆեկտով և նպատակահարմար ոգտադործել երկե-
տրոններգիան. միայն այստեղ կարելի յե լայնորեն և անարգել գոր-
ծադրել ագրոնոմիայի և բնդհանրապես գիտություն բոլոր նվաճում-
ները: Գյուղատնտեսական ինվլնտարի և մարդկային ուժի լրիվ և
տնտեսականորեն ոգտադործումը հնարավոր է միայն սոցիալիս-
տական խոշոր տնտեսություններում: Կոլտնտեսությունը, վորպես
սոցիալիստական գյուղատնտեսություն հիմք, լիուլի կարող է ոգտ-
վել (և տդովում է) այս բոլոր առավելություններից, վորոնք աբ-
գեն հսկայական չափով բարձրացրել են աշխատանքի արտադրո-
ղականությունը:

Խոշոր, սոցիալիստական տնտեսությունների ստեղծումն այն
միակ ուղին է, վորով սրբուխարիատը կարող է վերացնել գյու-
ղատնտեսության հետամնաց տեխնիկան և ցածր արտադրողակա-
նությունը: «Յերկու-յերեք անգամ կլնայվեր մարդկային աշխա-
տանքը յերկրագործության համար, յերեք մանր տնտեսությունից
անցում կատարվեր հանրայնականին» (Լենին): Մարքսն ասում է,
վոր մանր անհատական տնտեսությունը «իր բնույթով բացառում է
աշխատանքի հասարակական, արտադրողական ուժերի գարգացու-
մը, աշխատանքի հասարակական ձևերի գարգացումը... Անսանապա-
հությունը խոշոր մասշտաբով, գիտության անոդ ոգտադոր-

ծաւմը...» Վոր նա անխուսափելիորեն ուժեղացնում է «արտադրութեան միջոցների անսահման մատակարարումը և իրենց արտադրող ուժերի ուժասպառումը, մարդկային ուժերի հսկայական վատնումը» (Կապիտալ, 4. 3-րդ, մաս 2, էջ 280) :

Կոյունտշարժման անվիճելի հաղթանակները նոր ձևով են դնում գյուղի և քաղաքի, բանվոր դասակարգի և գյուղացիության փոխհարաբերության հարցը, վորը միշտ ել մեր քաղաքականության հիմնական հարցերից է յեղել: Գյուղացիության նկատմամբ ճիշտ պրոլետարական ղեկավարության ապահովումը—գյուղի սոցիալիստական վերակառուցման հիմնական պայմանն է: Ներկա չքանում այդ ղեկավարությունն ապահովելու համար անհրաժեշտ է պարզ պատկերացնել այսօրվա գյուղի բնորոշ պայմանները, նրա սոցիալական դեմքը ներկա չքանում:

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման պրոբլեմների տեսական մշակումը դեռևս հետ է մ. ում պրակտիկայից: Դասակարգի հեղափոխական պրակտիկան կոյունտշարժման բնագավառում դեռ չունի իր տեսական, գիտահետազոտական բավարար ընդհանրացումները: Մարքս-էնկելսյան տեսությունը միշտ յեղել է և պետք է լինի միասնացած դասակարգի հեղափոխական պրակտիկայի հետ: «Յեթե մենք կարող ենք պարծենալ սոցիալիստական շինարարության պրակտիկ հաջողություններով, ապա չի կարելի մոլորվել ասել մեր տեսական աշխատանքների հաջողությունների մասին եկոնոմիկայի քննադատումը ընդհանրապես և գյուղատնտեսության ասպարիզում մասնավորապես: Դեռ ավելին պետք է ընդունել, վոր տեսական միտքը հետ է մնում մեր պրակտիկ հաջողություններից, վոր մեզանում վորոշ խզում է նկատվում պրակտիկ հաջողությունների և տեսական մտքի զարգացման միջև: Միևնույն ամիսը ասելով, վոր տեսական աշխատանքը վաղ միայն հասնի գործնականի հետևից, այլ և նրանից առաջ անցնի, գիմելով մեր պրակտիկ աշխատողներին նրանց կողմից սոցիալիզմի համար մղվող պայքարում»:

«Թերթիան, յեթե դա իսկապես թերթիա չէ, կողմնորոշման ուժ է տալիս, հեռանկարի պարզություն, աշխատանքի մատակարարում և համար է ներշնչում, վոր մեր գործը հաղթանակելու չէ» (Մտային—ճառ մարքսիստ ազդարնիկների համադրումարում):

Ընկ. Ստայինի այս վճռողական նախադրուշացումը տեսական մտքի հետ միալու մտքին ավելի քան վերաբերում է կոյունտշարժման բնագավառին: Կոյունտշարժումն արագատեմպ թուխքներով նվաճում է իր պատմական դիրքերը սոցիալիստական հարձակողական լայնածավալ ճակատում: Նրա գործնական վճռումներն այնքան շատ են ու անվիճելի, վոր անդամ հակառակորդներն ի վիճակի չեն անտեսելու և սքողելու այն: Նրա փորձը և արդյունքներն այնքան հարուստ են և բազմազան, վոր մարքսիստական տնտեսագիտական միտքը վոչ միայն չի հասնում նրան գիտահետազոտական

առումնասիրության բնագավառում, այլ անդամ փորձի տեսական արձանագրման հարցերում:

Գյուղի սոցիալիստական վերակառուցման սրենթաց վաղըն իր հետեն է թողնում ամենահամարձակ և արժեքավոր տեսական նախատեսումները: Տեսության և պրակտիկայի միջև գոյացած այս ճեղքը միանգամայն անընդունելի և խորթ է մարքսիզմ-լենինիզմի համար: Մարքսիզմն իր տեսական սյուների կառուցել և կառուցում է սովորելով մասնաշաղկապ շարժումից և բոլոր գիտությունների նվաճումներից, քննադատորեն վերամշակելով նրանց արդյունքները, բայց սա յերբեք էլ չի նշանակում, վոր նա շարժման սլոշից է պնացել, հետին թվով ամփոփել նրա փորձը-ընդհանրացումը, մարքս-էնկելսյան տեսության առաջնությունն էլ հենց այն է, վոր նա ընդունակ է նախատեսել գալիքը, մասնաշաղկապ նախապատրաստել դրա համար, տեսականորեն լուսավորել նրա պայքարի ուղին, զինել գալիքի հստակ անալիզով և պարզ պատկերացումով:

Անհրաժեշտ է պարզ պատկերացնել կոյունտշարժման հակառակությունները, տարրեր տեղեկանքների զարգացման պերսպեկտիվները, նրանց ռեզերվները և անտեսական ռեսուրսները, այդ տեղեկանքների սոցիալական արժանիքը. միայն այսպիսի մարքսիստական ճշգրիտ անալիզը մեզ հնարավորություն կտա գիտականորեն հիմնավորյալ քաղաքականություն վարելու կոյունտեսությունները լիակատար սոցիալիստական տնտեսության վերածելու գործում: Պետք է կոյունտեսության հակառակությունները և սոցիալական տեղաշարժերն իմաստավորել դասակարգային սլոշքարի տեսանկյունով:

Դասակարգային հակառակորդները, տեսական մտքի առաջնորդի վնասարարները յերկար ժամանակ փորձել են և կփորձեն շեղել մեր ուշադրությունը սոցիալիստական շինարարության հրատապ պրոբլեմների տեսական մշակման գործից, տեղափոխել մեզ տրտառակտ յսխալաստիկ վեճերի առաջնորդ կտրել տեսական միտքն այս օրվա ակտուալ մարտական հարցերից: Տեսության և պրակտիկայի միջև վիճակ առաջացնելու, մեր ուշադրությունն ամբողջովին հեռավոր անցյալի ապրիորներ տեղափոխելու և այսօրվա իրականությունից կտրելու այդ փորձերը դասակարգային հակառակորդի վտանգություններն են մարքս-էնկելսյան տեսության դեմ, նրանց պայքարի ձևերից մեկը: Ներկայումս «նոր ձևով են դրվում նեպի, դասակարգերի, շինարարության տեմպերի, զարգացման և կուտակելության բազմազանության հարցերը» (Մտային): Մարքս-էնկելսյան տեսական մտքի առաջնակարգ խնդիրն է՝ ուսումնասիրել, մշակել և վերհանել այդ նորը, սոցիալ-դասակարգային տեղաշարժերը մեր յերկրում և ամբողջովին իր ուժերն ի սպաս դնել սոցիալիզմի կառուցման գործին:

Ձի կարելի դասակարգային ճիշտ զնահատական տալ տեսության և պրակտիկայի այն վորոշ կտրվածությունները, վոր նկատվում է մեզանում, առանց նկատի ունենալու այս քննադատում մղվող դա-

ազատագրային պայքարը : Տեսական հակառակում պրոլետարիատի կողմից դասակարգային պայքարը մղվում է նաև տեսութային և պրակտիկայի որդանական միասնությունը պահպանելու համար, մինչդեռ հակառակորդը պայքարում է նաև նրանց մասնակի կտրվածությունը խորացնելու համար : Տեսությունը կտրել դասակարգի հեղափոխական պրակտիկայից, նրա պայքարի և շինարարության մեծ առորդային խնդիրները, դրկել տեսությունը նրա կենդանի վոգի պրակտիկայից, գիտական մաքի ասպարեղը հեռու պահել մատերիալիստական դիալեկտիկայից — սրանք հակառակորդի տեսական պայքարի սիրած պրիմները են : Նրանք աշխատում են անտեսել կենդանի իրականության պրոցեսները, արտադրականների դադարներում սալանել, վորովհետև այդ կենդանի իրականությունը լի յն սոցիալիզմի հաղթանակող փաստերով, իրենց սոցիալական հեարանի վերացման «ցավայի» պատկերներով, իսկ սա իրենց համար վոլինչ լալ բան չի խոստանում :

«Ամենամեծ չարիքներից և դժբախտություններից մեկը, վոր մնացել է մեզ հին, կադիստալիստական հասարակարգից, դա գրեի լրիվ կտրվածությունն և կյանքի պրակտիկայից, վորովհետև մենք ունենինք գրեք, վորտեղ ամեն ինչ նկարագրված էր ամենալալ ձևերով և այդ գրեքը շատ դեպքերում հանդիսանում է յին սմենադրվելի կեղծավոր սուրը, վորոնք կեղծ էյին նկարագրում մեզ կոմունիստական հասարակարգը» (Լենին, հ. 18, էջ 315) : Յեթնայսոր գիրքը, տեսական աշխատանքը մորո, չափով կտրված է մեր անտեսական դարգացման կոնկրետ խնդիրներից, իմպերիալիզմի շրջանի հարցերի և պրոլետարիատի դասակարգային պայքարի պրոբլեմների ուսումնասիրություններից, այդ սա անկասկած վաքաշ տուրք է, վոր տրվում է բուրժուական տեսութայնը, նրա ագդեցութունն է մեր տեսական մտփի վրա : Տեսութայն և պրակտիկայի կտրվածությունը մի նեղք է պրոլետարիատի կողմից դասակարգային հակառակորդ ուժերի դեմ տեսական և պրակտիկ պայքար մղելու նակատում. այդ ձեղքն անհանդուրժելի յն, ետ կտրում է մարքսիստական տեսությունն իր դարգացման աղբյուրից, խանդարում է նրա հարստացմանը և առաջընթացին :

ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ*)

ԼԵՆԻՆԻ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՊԼԱՆԸ ՅԵՎ ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՐՑԸ

Կոլտնտշարժումը կոոպերատիվ շարժման մի մասն է, նրա բարձր աստիճանն ու արտադրական յեղանակը : Վորպես ամբողջի մաս՝ նախքան մասը բնորոշելը ծանոթանանք Լենինի կողմից կոոպերացիայի սոցիալական բնույթին տված բնորոշումներին : «Պրակտիկայում դեռևս շատ ընկերներ գործում են կոոպերացիան կոոպետալիստական իսկադրելու գիրկը» (Մոլոտով — Բայլզևիկ № 22 29 թ.) : Մինչդեռ «կոլտնտշիստարարությունը Լենինի սիստեմական կոոպերատիվ պլանի ամրաժան մասն է և կոոպերացման բարձր միջ» (Նոյեմբերյան պլենումի բանաձևից) :

Կոլտնտեսության սոցիալական բովանդակությունը վորոշելու համար յեղակետ պետք է ունենալ կոոպերացիայի սոցիալ-դասակարգային էությունը պրոլետարական դիկտատուրայի պայմաններում : Կոոպերացիայի սոցիալական բովանդակությունը պայմանավորված է պետարդյունաբերության հետևողական-սոցիալիստական արտադրական հարաբերություններով, այն կապով, վոր կոոպերացիան հաստատում է նրա հետ : Սրանով է բացատրվում այն բոլորովին տարբեր դասակարգային իմաստը, վոր ունի կոոպերացիան բուրժուական և պրոլետարական դիկտատուրայի պայմաններում :

Վորոնք են այն առանձնահատուկ պայմանները, վոր փոխում են կոոպերացիայի բնույթը մեղանում : Դա նախ և առաջ պրոլետարական դիկտատուրայի գոյությունն է, նրա սոցիալիստական վերափոխիչ ներգործությունը տնտեսության և բնդհանրապես հասարակարգի բոլոր ասպարեղներում : Դա հետևողական-սոցիալիստական տիպի ձեռնարկների գոյությունն է՝ հանձին պետարդյունաբերության և խորհանտեսությունների, սոցիալիստական արտադրական հարաբերությունների գոյությունն է նրանցում : Դա այն կապն է, վոր հաստատում է կոոպերացիան օրանց հետ արտադրության և բախման դժով, այն ղեկավարությունն է, վոր նա ստանում է սրանից :

Ընկ. Լենինը կոոպերացիայի մասին գրած իր հոդվածում տաում է՝ «հաղափարված կոոպերատորների կարգը, արտադրության միջոցների հասարակական սեփականության դեպում, պրո-

*) Կոլտնտեսության առիով մենք ամենուրեք նկատի յենք ունեցել գյուղատնտեսական արանը :

լետարիատի բուժօգնության շնորհիվ տառապանքալից հան-
րանակի պայմաններում դա սոցիալիզմի հասարակարգն է:
Այսպիսով ընկ. Լենինը քաղաքակրթված կոոպերատորների հաս-
րակակարգը նույնացնում է սոցիալիստական հետ, յեթե՝ ա) ար-
տադրության միջոցները հասարակությանն են պատկանում: Բ) պրո-
լետարիատը հաղթանակել է բուրժուազիային: Նույն հոգովածում
կարգում ենք «մեր հասարակարգում կոոպերատիվ ձևափոխու-
թյունները տարբերվում են մասնավոր կապիտալիստական ձև-
ափոխություններից վարպետ կոլեկտիվ ձևափոխություններից, բայց
չեն տարբերվում սոցիալիստական ձևափոխություններից, յեթե
նրանք հիմնված են հողի վրա, պետությունը, այսինքն բունվոր դա-
սակառգին պատկանող առտադրական միջոցներով»: Այսպիսով՝
1) յեթե կոոպերատիվ ձևափոխությունները դառնում են պրոլե-
տարական պետության մեջ, վորտեղ արտադրության հիմնական
միջոցները և հողը պետականացված են, 2) յեթե պետական իշխա-
նությունը բանվոր դասակարգի ձեռքումն է և չհաղորդվողների
քաղաքական իշխանությունը տապալված է. 3) ապա մենք իրա-
վունք ունենք ասելու, վոր «կոոպերացիայի պարզ անունը մեզ հա-
մար հավասար է սոցիալիզմի անմանը» (Լենին): 4) Կենտրոնի Լե-
նինը կոոպերատիվ ձևափոխությունները նկատի ունի վոր թե
ինքնին, վորպես ձևափոխություններ, այլ մեր կարգի կապակցու-
թյամբ, այն կապակցությամբ, վոր նրանք գործում են պետու-
թյանը պատկանող հողի վրա մեր յերկրում, վորտեղ արտադրու-
թյան միջոցները պատկանում են պետությանը, և քննելով դրանք
այս կարգով, Լենինը հաստատում է, վոր կոոպերատիվ ձևափո-
խությունները չեն տարբերվում սոցիալիստական ձևափոխու-
թյուններից:

Այսպես է ասում Լենինը կոոպերատիվ ձևափոխություննե-
րի մասին ընդհանրապես մի թե պարզ չէ՞, վոր առավել իրավամար
մեք կարող ենք նույնը ասել նաև մեր ներկա շրջանի կոլտնտեսու-
թյունների մասին» (Ստալին—ճառ մարքսիստ-ադրաքինների հա-
մաժողումում): Այսպիսով, կոոպերացիայի ելուժյան մասին Լե-
նինի տված բնորոշումը հիմք է ծառայում նաև կոլտնտեսու-
թյան սոցիալիստական ելուժյունը վորոշելու համար:

Կոոպերացիայի ելուժյունը և սոցիալիզմի կառուցման գոր-
ծում նրա դերն բորժեկու համար շատ հետաքրքիր են նաև Ենգելսի
կողմից 1886 թվին դրած հետևյալ տողերը. «Ե Մարքսը, և յես յեր-
բեք չենք կասկածել, վոր կոմունիստական տնտեսության անցնե-
լու ժամանակ մեզ անհրաժեշտ կլինի յայն մասշտաբով ոգու-
գործել կոոպերատիվ արտադրությունը վորպես անցողիկ շրջան:
Միայն հարկավոր է այնպես անել, վորպեսզի հասարակությունը,
այսինքն նախ և առաջ պետությունը, իրեն պահի արտադրության
միջոցների սեփականությունը և վորպեսզի այսպիսով առանձին
արտադրողները—կոոպերատիվների մասնավոր շահերը չհակասեն
ամբողջ հասարակության ամբողջական շահերին» (ընդգծումը
ժեն է):

Կոոպերացիայի սոցիալական բնույթը պարզելու համար պետք
է նրան ուսումնասիրել տիրող կարգերի և սոցիալական-արտադրա-
կան հարաբերությունների կապակցությամբ, ինչպես և արել է
ընկ. Լենինը՝ խոսելով մեր կոոպերացիայի մասին: Լենինի ու-
սումները կոոպերացիայի սոցիալական բնույթի մասին կարելի յե-
ծելու բմբունել միայն այն դեպքում, յերբ մեկնման կետ ես ընդու-
նում կոոպերացիայի կապը և համադրածակցությունը տնտեսու-
թյան տվյալ սխեմայի հետ, վորի պայմաններում նա գործում է:

1921 թ. ընկ. Լենինը կոոպերացիան դիտում է դնահատում եր-
պետկապիտալիզմի կապակցությամբ և բնորոշում վորպես «պետ-
կապիտալիզմի մի տեսակը» (հ. 18, մաս առաջին, էջ 202): Հայտնի
յե, վոր մի յերկու տարուց հետո ընկ. Լենինը տվել է կոոպերա-
ցիայի սոցիալիստական ձևափոխ յինելու բնորոշումը: Վոր «լինվ
կոոպերացիան պայմաններում մենք յերկու վտախվ արդեն կա՞-
նամ կլինենք սոցիալիստական հողի վրա» (հ. 19, մաս 2-րդ, էջ
339):

Ինչո՞վ բացատրել Լենինի կողմից կոոպերացիայի սոցիալա-
կան բնույթին տված այս տարբեր բնորոշումները: Այդ պետք է
բացատրել յինելով այն տնտեսական պայմանները, վոր մենք
ունենք ներկայիս անցնելիս և նրանից յերկու տարի հետո, նրանից,
թե ինչ դեր պետք է խաղար կոոպերացիան այդ պայմաններում:

1921 թվին սոցիալիստական արդյունաբերությունը և տրանս-
պորտը քայքայված, կաղմալուծված վիճակումն էլին: Համարյա
նույն դրությունն էր նաև դուրդատնտեսության մեջ: Այդ վերաց-
նելու համար, բացի պետական սոցիալիստական տնտեսության
զարգացումից յենթադրվում էր մեծ չափով ներդրալիլ առտոսա-
մանյան կապիտալ՝ կոնցեսիայի ձևով: ձևափոխությունների մի
մասն արեւելով տալ ներքին կապիտալիստներին և ամենուրեք
զարգացնել ու աշխուժացնել մանր արտադրությունն ու առե-
տուրը:

«Այն պայմաններում, յերբ մենք թույլ ելինք, յերբ մենք չե-
հանջում էլինք, յերբ կապիտալիզմը կատաղի ենեղրիս յեր դար-
դացնում, ձգտելով տիրապետել յերկրի եկոնոմիկային, այս
պայմաններում դուրդատնտեսական մասնատմատնտեսական կո-
ոպերացիան—իսկ այն ժամանակ խոսքը դերադանցալեա նրա մասին
էր—պրոլետարական դեկադարությամբ իրագործելու յեր ապրան-
քախոխանակության փոխկցիաների կաղմալեղալումն վոր միայն
(և վորոշ ժամանակի ընթացքում վոր այնքան) սոցիալիստական
արդյունաբերության և դուրդացիական արդյունաբերության միջև,
այլ նաև (և վորքան) դուրդացիության և պետկապիտալիստա-
կան արդյունաբերության միջև: Այս պայմաններում կոոպերացիան
մանր արտադրության բաղալի մոտ անխտառիկորեն առաժա-
նելու յեր կապիտալիստներ, յինելու յեր ողախ, վորտեղից աճելու
էլին պրոլետարական պետության կողմից կարգավորվող և ահ-
մանախալվող կապիտալիստական հարաբերությունները: Սրա

համար ել այս շրջանում Լենինը՝ կոոպերացիան մտցնում էր խորհրդային եկոնոմիկայի պետկապիտալիստական տնտեսաձևի մեջ: Բայց քանի վոր պետկապիտալիզմի թույլ տալը Լենինը վերցնում էր մեր յերկրում սոցիալիզմ հաղուցելու ընդհանուր միասնական պայանի մեջ, այնպես վոր պետկապիտալիզմը պետք է խաբաս գրվեր սոցիալիզմին, պարզ է, վոր կոոպերացիան ևս վորպես մանր արտադրողների կազմակերպման, նրանց միացումը հեշտացնող գեներ, գրանով խոս սպասարկելու յեր սոցիալիստական շինարարության խնդիրներին» (Բայլըհիկ № 10, 30 թ., էջ 187—Կոնսուլտացիա):

Այն ժամանակ «Լենինը պետկապիտալիզմը համարում էր վորպես մեր տնտեսավարության հնարավոր եիմնական ձև, իսկ կոոպերացիան ուսում էր պետկապիտալիզմի կապակցությամբ» (Ստալին, Լենինիզմի հարցերը):

Այսպիսով Լենինը 1921 թ. կոոպերատիան համարում էր պետկապիտալիստական ձևերից, վորովհետև սոցիալիստական արդյունաբերության քարտաշխմության և պետկապիտալիստական ձևերիցների նախատեսվող լայն ծավալման պայմաններում նա կապակցում էր սպասարկելու յեր մաս միայն տնտեսական արդյունաբերությանը և նրա գյուղատնտեսության հետ ունեցած կապին, այլև պետկապիտալիստական ձևերիցներին առարանց գյուղատնտեսության շուկայի հետ կապելու գործին:

1921—23 թ. մեր տնտեսական դրությունը նշանակելի չափով փոխվել էր, և այդ ժամանակին էր, վոր ընկ. Լենինը գրեց «Կոոպերացիայի մասին» հոդվածը: Պետկապիտալիզմը չստացավ այնպիսի լայն տարածում, ինչպես յենթադրվում էր. արտատոմարում կապիտալը նախատեսվածի չափով չներգրավվեց Կոնցեսիաներում: Այս իսկ պատճառով պետկապիտալիստական տնտեսաձևն իր տեսակարար կշիռով եկոնոմիկայի մեջ այնպիսի մեծ տեղ չգրավեց, վոր կարողանար աղել տնտեսության զարգացման ընթացքի և տնտեսակարգի ընթացքի մաս: Մուս կողմից հետևողական—սոցիալիստական տիպի ձևերիցներն այնքան ամրապրնդվեցին, զարգացան, վոր հիմք ունենալով տնտեսության զեկավարող բարձունքները, ձեռք բերեցին առաջատար դեր ժողովրդական տնտեսության մեջ: Այս պայման երում կոոպերացիան հանդիսանում էր սոցիալիստական արդյունաբերությունը գյուղացիական տնտեսության հետ կապելու և վերջինս սոցիալիստականորեն վերակառուցելու գեներ, վորի համար էլ Լենինն այդ բնորոշեց վորպես սոցիալիստական ձևերից: Այս պայմաններում կոոպերացիան հանդիսանում էր բանվորա—գյուղացիական դաշինքը պրոլետարիատի զեկավարությամբ ամրապրնդելու, միլիոնավոր մանր գյուղացիներին սոցիալիստական շինարարությանը մասնակից անելու և կապիտալիզմի դեմ պայքարելու հոր միջոց: Լենինը գեո 1921 թ. «հնարավոր էր համարում հաջողության զեպում կոոպերացիան դարձնել պայքարի կարեորագույն գեներ... ընդգեմ

կապիտալիստական հարարերությունների» (Ստալին, Լենինիզմի հարցերը): Այն, ինչ հնարավոր էր համարվում 1921 թվին, դարձավ իրականություն յերկու տարուց հետո, չնորհիվ սոցիալիստական շինարարության նվաճումներին:

Ընկ. Լենինի կողմից 1921—23 թվի կոոպերացիայի սոցիալիստական ընթացքի տված վերը հիշված տարրեր բնորոշումների պարզադրությունը վերլուծումից հետո միանգամայն պարզ է նաև տրոցկի—զինովյեվական ոպողիցիայի սխալը կոոպերացիայի սոցիալիստական ընթացքի մասին: Վերջիններս չբանալով Լենինի կոոպերատիվ պլանի ելույթունը, վորձում էին կոոպերացիայի պետկապիտալիստական ձևերի յինելու իրենց բնորոշումը վերադրել Լենինին. մինչդեռ Լենինն այդ բնորոշումը տվել է 21 թվականին, նկատի ունենալով այն ժամանակվա տնտեսական վիճակը և կոոպերացիայի խաղալիք դերը և բոլորովին այլ բնորոշում է տվել 23 թվականին: Հիմք ունենալով փոփոխված պայմանները: Տրոցկի—զինովյեվական ոպողիցիան հաշվի չառնելով այս հանգամանքը, վորձում էր ուղիղից յենթադրել Լենինիզմի կոոպերատիվ պլանը:

Միանգամայն սխալ կլիներ կարծել, վոր ընկ. Լենինը կոոպերացիայի սոցիալիստական ձևերի յինելու բնորոշումը տվել է միայն 1923 թ.: Ընկ. Լենինը 1923 թ. վոչ թե նոր դնահատական է տալիս, կամ փոխում է իր կարծիքը, այլ տեսականորեն ամփոփելով նախկին ասածները, ավարտում և յեղրավակում է իր մտքերը կոոպերացիայի մասին:

Դեո 1918 թ. «Յորհրդային իշխանության հերթական խնդիրները» հոդվածի անհարկում ընկ. Լենինը գրել է. «Կոոպերատիվը, յեթե նա ընդգրկում է ամբողջ հասարակությունը, վորտեղ սոցիալիզացիայի յենթադրված հորը և առգայնացիում են փարքիկաները և գործարանները, հանդիսանում է սոցիալիզմ»:

«Տնտեսագետի դիտողությունների» մեջ ընկեր Բուխարինը պահանջում էր պետական միջոցներն իսպառ վերացնել կոոպերացիայից և գեներ արդյունաբերության մեջ: Այս առաջարկը բղխում էր կոոպերացիայի սոցիալիստական նշանակությունը թերադնահատելուց (յեթե վոչ ժխտելուց) և հակադրվում էր Լենինի ցուցումներին կոոպերացիային ամեն կերպ աջակցելու մասին:

Այլ ոպորտուն իզմը հանձնում ընկ. Բուխարինի միտում էր կալոնտեսության սոցիալիստական բովանդակությունը հենց նրանով, վոր այդ դուրս էր համարում Լենինի կոոպերատիվ պլանից, հակադրում էր նրան, այդ չեր համարում գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման եիմնական ուղին: Նա պահանջում էր այն տեսակետը, վոր գյուղատնտեսության սոցիալիստական ձևերիցներիցիցի հիմնական ուղին, գյուղացիությունը գեպի սոցիալիզմ տանելու գլխավոր ճանապարհը՝ ապրանքաշրջանառության պրոցեսների կազմակերպումն է, սպառողական կոոպերացիան է:

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման բու-
խարինյան տեսությունը չէր գնում խոշոր, հանրային տնտեսու-
թյունների ստեղծումը: Գյուղատնտեսական կոոպերացիայի վերա-
ձուժր արտադրական կոոպերացիայի և կոոպերացիայունների
խորթ եր Բուխարինի կոոպերատիվ պլանին: Լենինի կոոպերատիվ
պլանի կենտրոնական ողակը կոլտնտեսություններն են, ազերը
չընդունելով այդ, ռեվիզիայի յեմ յեմքարկում յեմինիզմը: Լենինի
կոոպերատիվ պլանը յերբեք չի սահմանափակվում չըջանաու-
թյան կոոպերացիանով: Նա իր առջև հիմնական խնդիր և դրել ար-
տադրության կոոպերացիան և հանրայնացումը:

Դիմենը մեջբերումների Լենինի և Բուխարինի կոոպերատիվ
պլանի էությունը պարզելու համար:

«Այստեղ (այսինքն գյուղատնտեսության մեջ — Շ. Ս.) մենք
սոցիալիզմին կհասնենք շրջանառության պրոցեսի միջոցով և վոչ
թե անմիջականորեն արտադրության պրոցեսի միջոցով: Մենք
կհասնենք այ տեղ կոոպերացիայի միջոցով» (Ն. Բուխարին, Տըն-
տեսական քաղաքականության միջանի խնդիրներ): Այստեղ ընկ
Բուխարինը խոսում է սոցիալիստական կոոպերացիայի մասին:

«Քանի ավելի գյուղացիական տնտեսությունը չըջանաու-
թյան պրոցեսի միջոցով կներգրավվի սոցիալիստական չըջանի
մեջ, այնքան ավելի կընթանա դատակարդային սահմանները, վո-
րոնք կլուծվեն ապադասակարդային հասարակության մեջ» (Նույն
տեղը):

«Կոլեկտիվ տնտեսությունը՝ դա գլխավոր մագիստրալը չե,
դա գլխավոր ուղին չե, վորով գյուղացիությունը պետք է գնա
գետի սոցիալիզմ»:

«Հիմնական ուղին գնում է կոոպերատիվ գծով: Գլխավոր
ուղին — դա սոցիալիզմի կադմակերպումն և գյուղատնտեսական
կոոպերացիայի միջոցով (այսինքն գյուղացիական ապրանքա-
չըջանաության կոոպերացիայի — Շ. Ս.) Ն. Բուխարին, Բանվորա-
գյուղացիական դաշինքը և սոցիալիզմի ուղին»:

«Մենք չենք կարող դործն այնպես պատկերացնել, թե կսեղ-
մենք կոլտնտեսական շինարարության վրա և գյուղացին չուտով
կգնա կոլտնտեսությունների միացման ուղիով: Կոլտնտեսու-
թյունները խոշոր դեր են խաղում — սա անկասկած է, մենք պետք
է աջակցենք նրանց: Բայց չի կարելի այնքան, վոր դա գլխավոր
ուղին է, վորով գյուղացիական մասսաները կգնան դեպի սոցիա-
լիզմ» (Ն. Բուխարին, «Մեր գյուղական քաղաքականության նոր
խնդիրները»):

«Ընկերներից շատերն այժմս ել հակամեռ են ռադիալ-կոմու-
նիստականորեն գերազնահատելու կոլեկտիվ արտադրական միու-
թյունների դերը գյուղացիությունը սոցիալիզմին հաղորդակից
անելու գործում: Վոր մենք պետք է ամեն կերպ պրոպագանդ
անենք գյուղացիության մեջ, նրանց կոլեկտիվ տնտեսություն-
ներում միացնելու համար — այդ ճիշտ է, բայց ճիշտ չե, յերբ պըն-

գում են, թե գյուղացիական մասսաներին սոցիալիզմի ուղիով
առաջ շարժելու գլխավոր ճանապարհն այդ է» (Ն. Բուխարին —
Վեր տնտեսական քաղաքականության և նոր խնդիրների մասին»,
Բայշելիկ № 9 1925 թ.):

«Վորպեսզի կոոպերացիան տանի դեպի սոցիալիզմ, հարկավոր
է քաղաքակրթված կոոպերացիա, դրա համար պետք է առևտուր
անել վոչ թե ախացու, այլ յեվրոպացու նման» (Ն. Բուխարին —
«Լենինի քաղաքական կապը»):

Այստեղ մի կողմն ենք թողնում ընկ. Բուխարինի որոշաու-
տական այն թեղը, թե դատակարգերը կվոչնչանան, յերբ մենք
չըջանաության կոոպերացիայի միջոցով ընդգրկենք բոլոր ինք-
նուրույն ապրանքարտադրողներն: Այստեղ մեզ հետաքրքրողն
այն է, վոր ընկ. Բուխարինը միանգամայն անտեսում է ժխտում
է կոլտնտեսարժուժը և քլոկանքապես արատաական պրոցեսների
խմբայնացումը վորպես սոցիալիզմին անցնելու միակ ուղին:
Նրա կարծիքով սոցիալիզմ կստեղծվի միայն այն դեպքում, յերբ
ապրանքա-չըջանաությունը հանրայնացվի:

Լենինը ընդդեմ Բուխարինի: «...Կոոպերատիվ քաղաքակա-
նությունը, հաջողության դեպքում, կառավարյան մանր տնտե-
սության վերելք և կգյուղացին նրա անցումը խոշոր արտադրու-
թյան՝ կամավոր միավորման հիմունքներով» (Լենին, հ. 18, մաս
1-ին, էջ 220):

«...Խուսառտանի տնտեսական կարգի վերակառուցման
ուղին կաշանում է խոշոր, մեքենայացած ինդուստրիայի վրա
կառուցված տնտեսության անցնելու, սոցիալիզմին անցնելու մեջ
(Լենին, հատ. 22, էջ 420, 2-րդ հրատարակություն):

«Մանրիկ տնտեսությունների կոոպերացիայից սոցիալիզմին
անցնելը անցումն է մանր արտադրությունից դեպի խոշորը»
(Լենին, հ. 18, մաս 1-ին, էջ 220):

«Պրոլետարիատի դերն այսպիսի յերկրում այն է, վոր դե-
կավարի այդ մանր տնտեսությունների ա ցումը հանրային, կո-
լեկտիվ, ընդհանուր աշխատանքի» (Նույն տեղը, էջ 118):

«Յեթի գյուղացիական տնտեսությունը կարող է ավելի դար-
գանալ, անհրաժեշտ է հաստատ կերպով ապահովել նաև հետա-
գա անցումը, իսկ հետագա անցումն անխուսափելիորեն նրանումն
է կայանում, վոր ամենից քիչ ձեռնուռ և ամենից շատ հետա-
մնաց մանր մեկուսացած գյուղացիական տնտեսություններն
աստիճանաբար միավորվեն, կադմեն հասարակական խոշոր հո-
ղապրծական տնտեսություն» (Լենին, հ. 18, մաս 1-ին, էջ 189):

Ընկ. Ստալինը քննադատելով Բուխարինի կոոպերատիվ
պլանը և պարզաբանելով Լենինի մտքերը, ասում է «... Վեճը
գյուղի սոցիալիստական զարգացման գլխավոր ճանապարհին
մասին՝ օխոլաստիկական վեճ է, արժանի Այսենվաղի և Սլեպ-
կովի տիպի մանր-բուրժուական ջահել յերբերաներին: Պարզ է,
վոր քառի կոլտնտեսական մասսայական շարժում չկար, գլխա-

վերջին հանգամանակները, մատակարարողական և սպառողական կոոպերացիան, իսկ յերբ հրապարակ դուրս յեկավ կոոպերացիայի բարձրագույն ձևը, նրա կոլտնտեսական ձևը, վերջինս դարձացման «դիսպոզիտիւն» դարձավ: Առանց չակերտների ասելով, դուրսի սոցիալիստական դարձացման դիսպոզիտիւն ճանապարհը Լենինի կոոպերատիվ պլանն է կազմում, վեր ընդգրկում է գյուղատնտեսական կոոպերացիայի բոլոր ձևերը, ստորինից (մատակարարողական-սպառողական) սկսած մինչև բարձրագույնը (արտադրական-կոլտնտեսական): Կոլտնտեսութունները կոոպերացիային հակադրել— նշանակում է ծաղրել լենինիզմը և իր սեփական տղի-տութունը իր ստորագրութեամբ հաստատել» (Սալային—«Մեծ քեզման տարին», էջ 13):

Այսպես է աջ ուղորդունիլով և մարքսիզմ-լենինիզմի կոոպերատիվ պլանի ելուցիւնը: Մենք կատարեցինք յերկար մեջբերումներ, վորպեսզի սկզբնաղբւրքի հիման վրա ցույց տանք նրանց հակադրութիւնը: Մեջբերումներից հետո այդ արդէն պարզ է ընթերցողին, կոմկոմարիաների կարիք չկա:

Ընկ. Բուխարին անհաջող փորձ կատարեց իր կոոպերատիվ պլանը Լենինին վերադրելու: Մի ուրիշ տեղ նա պնդում է, վոր ընկ. Լենինն ունեցել է յերկու կոոպերատիվ պլան. առաջինը կազմված նկարի սնցնելու չրջանում 1921 թ. և մյուսը «բոլորովին տարրեր» պլան նա առաջադրեց 1923 թ.: Վոր իբր թե այս յերկու բոլոր պլանը չրջանառութեան պրոցեսի միջոցով գյուղատնտեսութիւնը սոցիալիզմին անցնելու վրա յե հենված: Մենք դառնում ենք, վոր միանգամայն սխալ է և փաստորեն հակասող խոսել Լենինի յերկու կոոպերատիվ պլանի մասին: Ով փորձում է ընկ. Լենինի 1923 թ. կոոպերացիայի մասին գրած հոդվածը հակադրել այն բոլորին, ինչ նա դրել է ասել և մինչև այդ, նա անընդհանրապէս և հակալենինյան դործ է կատարում: Ընկ. Բուխարին փորձում է առնջացնել յերկու պլանի լեզենդան, վորպեսզի ապարեղ հանի լենինիզմի հետ առնչութիւն չունենցող իր կոոպերատիվ պլանը:

ԿՈՒՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՏԻՊԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Կոլեկտիվ շարժումը, վորպես մանր արտադրողներին սոցիալիստական շարժում, հակաառութիւնների և դասակարգային պայքարի մեծ ասպարեղ է, վորի հիմքն այդ շարժման սոցիալիստական և մասնավոր-սեփականատիրական տենդենցների բաղխումն է կոլեկտիվացման պրոցեսի սոցիալական իմաստն էլ հենց այդ բաղխումն է, և այդ հիման վրա սոցիալիստական կողմի անընդհատ ուժեղացումը և հաղթանակը:

«Ի՞նչ է կոլեկտիվ շարժումը: Կոլեկտիվ շարժումը մանր արտադրողների շարժում է: Բայց կարելի չէ ալտակող վերջակետ

դնել: Բացարձակորեն անթույլատրելի չէ: Պետք է խելույն եկթ վերցնել նաև կոլտնտեսարժման մյուս կողմը, այլ կերպ մենք կը կանգնենք մանր բուրժուազիայի տեսակետի վրա, մանր բուրժուազիայի իդեոլոգիայի տեսակետի վրա: Հստակ է արդյոք իրեն մանր բուրժուազիայի այդ շարժումը: Իդեոլոգիա է արդյոք այդ նրա ներքին բնույթից, անկախ պրոլետարական ղեկավարութիւնից, թե նա վորպես մասսայական շարժում, հնարավոր է միայն պրոլետարիատի դիկտատուրայի սլայմաններում և իր սոցիալիստական բովանդակութիւնն ստանում է այն չափով, վորքանով այդ շարժումը ղեկավարում է պրոլետարիատը, ղեկավարում է բանվոր դասակարգը: Ահա այն հարցերը, վորոնք բաժանում են կոլտնտեսարժման ճիշտ մարքսիստական հեղափոխական տեսակետը, սխալ նարոդնիկական ուղորդունիստական տեսակետներին:

Կոլտնտեսարժումը բնորոշելու համար մենք անպայման պետք է մի կողմից վերցնենք այդ շարժման, վորպես մանր արտադրողներին շարժման բնորոշումը, և մյուս կողմից, նրա վորպես սոցիալիստական բնորոշումը, հենց շնորհիվ պրոլետարիատի դիկտատուրայի, շնորհիվ պրոլետարիատի ղեկավարող ներգործութեան:

«...Կոլեկտիվիզացիան դա մանր բուրժուազիայի հակամարտութեան շարժումն է. դա մանր բուրժուազիայի սոցիալիստական շարժումն է, վորում մանր բուրժուազիան պրոլետարիատի ներգործող ղեկավարութեամբ ինքն իրեն լիկվիդացիայի յե յենթարկում: (Մարքսիստ աղբարնիկներին համադրումարի ալխատութիւններ, հ. 1-ին, էջ 12): Այստեղ անհրաժեշտ է մի լրացում: Նա վոչ միայն մանր բուրժուազիայի սոցիալիստական շարժումն է, այլևս յուղատնտեսական պրոլետարիատի, վորը ղեկավար զեր ունի այդ շարժման մեջ: Պրոլետարիատը ղեկավարում է կոլտնտեսարժումը վոչ միայն դրսից, վոչ միայն սոցիալիստական ինդուստրիայի միջոցով, այլև իրեն՝ գյուղատնտեսութեան մեջ դործող պրոլետարիատով: Կոլեկտիվացումը նախ և առաջ նշանակում է վերացնել շահագործման հիմքը, վերացնել մանր արտադրութիւնը, վերացնելով մասնավոր սեփականատիրութիւնը՝ այդ վերածել հասարակական սեփականութեան: վերացնել բանվորական ուժի անջատումը արտադրական միջոցներից և այդ յերկուսին միացնել հասարակական, հանրային սոցիալիստական արտադրութեան բաղադրի վրա:

Ամենակարևոր հարցը, վորի անալիզի հիման վրա մենք կարող ենք բնորոշել կոլտնտեսութեան սոցիալիստական բնույթը, դա արտադրական հարաբերութիւններին ելուցիւն և սեփականութեան ձևերի հարցն է, արտադրութեան սոցիալիստական ձևի փոփոխումը միևնույն ժամանակ բանվորական ուժի դեպի արտադրութեան միջոցներն ունեցած հարաբերութեան փոփոխումն է: Իսկ արտադրութեան միջոցների սեփականութեան հարցը այն

տմենակարևոր հանգույցն է, վերջ պարզելու յն կոլտնտեսության ելույթը:

Ինչո՞ւ և ու արդյունքում տնտեսական սխալները, եղբայրներն ու արտադրողներն իրարից: Բանվորական ուժի դեպի արտադրության միջոցներն ունեցած հարաբերությունով: «Բանվոր դասակարգի հարաբերության փոփոխումը դեպի արտադրության միջոցները նշանակում է (Յ. Մ. Մ.) տնտեսական հեղաշրջումներ արտադրության հասարակական ձևն ինչպիսին էլ վոր լինի, բանվորները և արտադրության միջոցները միշտ մնում են վորպես նրա ֆակտորներ: Բայց դառնալով իրարից բաժանված փնտրում, և մեկը և մյուսը նրա ֆակտորներն են հանդիսանում միայն հնարավորության մեջ: Վորպեսզի արտադրեն, նրանք պետք է միանան: Այն հատուկ բնույթը և միջոցը, վորով իրականացնում է այդ միացումը, տարբերում է առանձին տնտեսական ելույթները և ստրուկտուրաները» (Մարքս, Կապիտալ, հատոր 2-րդ, էջ 10):

Մեզանում, քաղաքում սոցիալ-տնտեսական հեղաշրջումը հիմնականում արդեն կատարվել է, փոխվել է բանվորական ուժի և արտադրության միջոցների հարաբերությունը վերջինս ամբողջ բանվոր դասակարգի սեփականությունը դարձնելու շնորհիվ, սրա հետևանքով ստեղծվել են հետևողական-սոցիալիստական հարաբերություններ արդյունաբերության մեջ: Գյուղատնտեսության սոցիալիստական ուղեւորությունը կատարում է այդ հեղաշրջումը նաև մանր արտադրողի նկատմամբ: Արտադրության հիմնական միջոցների և աշխատանքի հանրախառնումը նոր ելույթ է առաջացնում, նոր տնտեսական ստրուկտուրա յն կազմում գյուղատնտեսության մեջ, հաստատում է սոցիալիստական արտադրական հարաբերություններ:

Մեզանում, սոցիալիստական քաղաքը և քրոլետարիատի դեկլարություններ պայմանավորում են նաև գյուղի սոցիալիստական զարգացումը: «Արդյունաբերության մի ճյուղի արտադրության յնդանակի մեջ կատարված հեղաշրջումը պայմանավորում է մուլյախի հեղաշրջում և մյուս սփերաներում» (Մարքս, Կապիտալ, հատոր 1-ին, էջ 290): Իհարկե մեր պայմաններում, անցողիկ շրջանի եկոնոմիկայի հատուկ որոնքների կապակցությամբ, այդ ձևով և իրագործվում այն: Սորհրդային տնտեսության մեջ յնթե սոցիալիստական արտադրական հարաբերությունների հնոց ժողովրդի իր որինակով չվերափոխի նաև գյուղը, այդ կնշանակի, վոր կապիտալիստական տնտեսության և դարգացման հնարավորությունների աճման պայմանները չեն առնված պրոլետարիատի հաղթանախույ և ներգործող շրջանակի մեջ: Իհարկե, այսպես և հարցի արտաբերող դրուժով. մեր դարգացման իրականությունը անժրկանիւրեն ապացուցում է, վոր սոցիալիզմի հաղթանակն ապահովված է կատարելապես և անհնար է հնի վերականգնումը կապիտալիստական տարրերի ներքին ուժերով:

Շնորհիվ կոլտնտարծման, մանր արտադրողը վերացնում է իր բազան, փոխում է իր բնույթը, վերականգնում է իր սոցիալական ելույթը կոլեկտիվ արտադրության հիման վրա: Կոլեկտիվացման շնորհիվ մանր արտադրողն իրեն բաժանում է մասնավոր սեփականատերերից և միացնում կոլեկտիվ սեփականությանը: Կոլեկտիվացումը հեղափոխություն է մտցնում մանր արտադրողի արտադրական հարաբերությունների մեջ. արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը վերածվում է հասարակական (անբաժանելի ֆոնդի), խմբակային սեփականության (բաժանելի ֆոնդի) և վորոշ չափով պահպանվում է արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը: Այսպիսով կոլտնտեսություններում փոխվում է բանվորական ուժի հարաբերությունը դեպի արտադրության միջոցները, սրա հետ մեկտեղ սեփականության մեկ ձևը (անհատական) տեղի յն տալիս մի ուրիշ ձևի (հասարակական և կոլեկտիվ): Բանուժի և արտադրության միջոցների հարաբերության այս հեղափոխական հեղաշրջումն է, վոր կոլտնտարծմանը սոցիալիստական բովանդակություն է տալիս:

Այս բնույթից հետևում է, վոր կոլտնտեսություններում միաժամանակ գոյություն ունի յերեք տիպի սեփականություն՝
1. հասարակական սեփականություն (անբաժանելի ֆոնդ),
2. խմբակային սեփականություն (փայ կամ բաժանելի ֆոնդ),
3. մասնավոր սեփականության մնացորդներ: Սեփականության այս տարբեր ձևերը տարբեր հարաբերության մեջ են դառնում բանուժի հանդեպ, սակայն հասարակական և խմբակային-կոլեկտիվ սեփականության նշանակությունը պրակտիկայում նույնանալով, նույնանում է միաժամանակ նրանց հարաբերությունը դեպի արտադրության միջոցները. իսկ սրանք հիմնական և ելական են բանուժի և արտադրական միջոցների հարաբերությունը վորոշելու համար: Սեփականության այս ձևերի մեջ հիմնականը և հաղթանախույը հասարակականն է, իսկ մյուս ձևերն աստիճանաբար կիփխանցվեն նրան, և այսպիսով կոլտնտեսությունը կվերածվի լիակատար սոցիալիստական տնտեսության:

Վրոմանք կարծում են, յերեք ասում ենք կոլտնտեսությունը սոցիալիստական տիպի տնտեսություն է, սրանով վոշ թե նրա արտադրական հարաբերությունների բնույթն ենք վորոշում, այլ դարգացման հետանկարը, վոր պետք է դառնա սոցիալիստական: Իհարկե, այսպիսի հարցադրումը միանգամայն սխալ է: Վորո՞նք են այն հիմունքները և հատկանիշները, վոր մեզ իրավունք են տալիս կոլտնտեսության սոցիալ-տնտեսական ելույթությունը բնորոշելու վորպես սոցիալիստական տիպի տնտեսություն: Կոլտնտեսությունների արտադրական հարաբերությունների բնույթը համապատասխանում է այդ վորակմանը թե վոշ. վորո՞նք են այն պայմանները, վոր իրավունք չեն տալիս մեզ կոլտնտեսությունը բնորոշելու վորպես հետևողական-սոցիալիստական տիպի տնտեսու-



թիւն: Ինչո՞վ է վորոչվում տվյալ տնտեսութեան տիպը, սոցիալական բնույթը:

1. Տնտեսութեան տիպը, նրա սոցիալական բովանդակութիւնը վորոչվում է նրա արտադրական հարաբերութիւնների բնույթով. այն հարաբերութեամբ, վոր գտնվում են մարդիկ արտադրութեան պրոցեսում: «Ինչո՞վ է վորոչվում տնտեսութեան տիպը: Ակներել է, վոր արտադրական պրոցեսի մեջ մարդկանց ունեցած հարաբերութեամբ» (Ստալին): Կոլտնտեսութեան մեջ այդ հարաբերութեան ելութիւնն այն է, վոր բոլոր կոլտնտեսականներն աշխատավորներ են և այդ աշխատանքով կառուցում են սոցիալիզմ: Մյուս կողմից այն, վոր արտադրութեան հիմնական միջոցները հանրաշնայած են և կոլտնտեսականները միեւնոյն հարաբերութեան մեջ են գտնվում դեպի այդ համասարաչափ ողավում են նրանցից. կոլտնտեսականներն արտադրութեան միջոցների գծով չեն հակադրվում իրար՝ ինչպէս մենատնտեսաւորները: Կոլտնտեսութիւնում մարդիկ չեն բաժանված այնպիսի սոցիալական խմբերի, վորոնցից մեկը տիրապետելով արտադրութեան միջոցներին, չա՛հագործում է մյուսներին: Այնտեղ չկա «արտադրական միջոցների տեր դասակարգ և արտադրական միջոցներից զուրկ դասակարգ» (Ստալին): Կոլտնտեսութիւնը դերժ է չահագործողական հարաբերութիւններից: Այս հատկանիշները պայմանավորում են կոլտնտեսութեան արտադրական հարաբերութիւնների սոցիալիստական բնույթը:

2. Կոլտնտեսութիւնում յեկամտի բաշխումը կատարվում է սոցիալիստական բաշխման սկզբունքով—ըստ աշխատանքի, հաշվի առնելով նրա քանակը և վորակը: Վորպէս կանոն, բաշխման գործում կոլտնտեսականների մուտքի և փայտվածքը դեր չի խաղում: Կոլտնտեսութեան սոցիալական բովանդակութիւնը պարզելու համար այս շատ կարևոր մոմէնտ է, վորովհետեւ այս վոչ թե բուրժուական, մանր-բուրժուական համասարութեան, այլ բաշխման սոցիալիստական սկզբունքն է: Սոցիալիզմի ժամանակ տոմարում են ըստ աշխատանքի, ասում է Մարքսը. այս պայմանը կոլտնտեսութիւններում հիմնականում կիրառված է:

Ենթե այդ բաշխումը կատարվեր ըստ փայտվածքի ու անդամավճարի, այսինքն ըստ կոլտնտեսութիւն բերած արտադրական միջոցների և փողի, ապա հիմք կլիներ, վոր ունեւոր կոլտնտեսականները չահագործէին չբաւորներին և բատրակներին. բաշխման այսպիսի սկզբունքը վոչ միայն չէր նպաստի կոլտնտեսութեան սոցիալիստական դարգացման հետագա գործին, այլև կըսլաւ յերան:

Արտելի կանոնադրութեան մեջ սոցիալիստական բաշխման այս սկզբունքից կատարված է մեկ բացառութիւն—այն, վոր բերքի 5 տոկոսը բաշխվում է ըստ կոլտնտեսականների մուծած փայլի, իսկ համատարածի չըջաններում՝ 2 տոկոսը: Սա ժամանա-

կալոր դիջում է, վորի նպատակն է տարահովել միջակների ավելի լայն մասսաների վճռական մուտքը կոլտնտեսութեան մեջ: Այս բացառութիւնը հաշվի չի առել այն հանգամանքը, վոր ամհնար է մեկ անդամից վերացնել սեփականատիրական ձգտումները, անդամ կոլտնտեսութեան ներսում: Հիմնական կանոնի նկատմամբ կատարած այս բացառութիւնը յերկրորդական և յենթակա դեր է կատարում, նա չի փոխում բաշխման հիմնական սկզբունքը, նա յեկամտի շատ փոքր մասն է ընդգրկում և կվերանա կոլտնտեսութեան ամբողջական գուղահեռ: Հասկանալի չէ, վոր այդ մոմէնտը չի փոխում կոլտնտեսութեան բնույթը և սոցիալիստական արտադրական հարաբերութիւնները: Սա այն մոմէնտներից մեկն է, վորովհետեւ փայտվում են կոլտնտեսութեան վոչ-հետևողական-սոցիալիստական իրենքը:

Բաշխման վերահիշյալ սկզբունքը կլինի հետևողական սոցիալիստական, յեթե պետադրութեան նման՝ ամբողջ սպառողական Փոնդը, աշխատավարձը, սպառման և կուտակման Փոնդերի հարաբերութիւնը—կատարվէին պրոլետարական պետութեան կողմից անմիջապէս: Ներկայումս այդ բոլորը (վորոշ տարբերութեամբ և սահմանափակումներով) կատարում են տվյալ կոլտնտեսականները, վորոնց վորոշումը վորպէս կանոն չհակադրվելով պրոլետարական պետութեանը, չի նույնանում նրան: Կոլտնտեսականներն ընդունելով որինակելի կանոնադրութիւնը, կարող են նրա մեջ մտցնել լրացումներ և փոփոխութիւններ, բերքի բաշխումը սահմանում են իրենց վորոշումը, իհարկէ հիմք ունենալով կուտակցական, պետական և կոլտնտեսական մարմինների վորոշումները և հրահանգները. սպառողական և կուտակման Փոնդերի հարաբերութիւնները կարող են փոփոխել, յենելով կոլտնտեսութեան կոնկրետ պայմաններից: Ահա այս մոմէնտները և այն, վոր կա յերկու և հինգ տոկոսային բաշխումն ըստ փայլի, պայմանավորվում են բաշխման-հետևողական-սոցիալիստական բնույթը:

3. Կոլտնտեսութիւնները բացի անհատական սպառման Փոնդից ունեն նաև հավելյալ մթերք, վորի մի մասն ողտադործվում է արտադրողականորեն—տնտեսութիւնը լայնացնելու համար, իսկ մյուս ավելի փոքր մասն ստանում է պետութիւնը հարկերի և կոնտրակտացիայի ձևով: Իհարկէ այդ հավելյալ մթերքը վոչ մի կապ չունի հավելյալ արժեքի հետ: Վերջինս կապիտալիստական չահագործման հետևանք է, իսկ կոլտնտեսութեան արտադրական հարաբերութիւնները հիմնովին բացասում են չահագործումը. այստեղ հավելյալ մթերքը պատկանում է իրենց արտադրողներին:

Կոլտնտեսական արտելի կանոնադրութեան համաձայն բոլոր կուտակումները վոչ թե բաշխվում են անհատական փայլի վրա, այլ մտնում են անբաժանելի Փոնդի մեջ: Սա նշանակում է, վոր

ընդլայնված վերաբաղությունը կոլտնտեսություններում լինելու յե սոցիալիստական արտադրական հարաբերությունների ընդլայնած վերաբաղությունը և անընդհատ դուրս ե վանելու մասնավոր սեփականատիրական հարաբերությունների մնացորդները:

4. Կոլտնտեսություն մտնողների վաշի մեկ բաժնուրդը—կեռը, համաձայն կանոնադրության, մտնում ե անբաժանելի ֆոնդի մեջ, և յեթե կոլտնտեսականը դուրս ե դալիս, կամ կոլտնտեսությունը քայքայվում ե, այդ ֆոնդը չի բաժանվում, այլ հանձնվում ե կոլտնտեսություններին, վորպես կոլտնտնարժաման ուժեղացման հասարակական ֆոնդ: Այս անբաժանելի ֆոնդը հասարակական սեփականություն ե և կազմում ե սոցիալիստական միջոցների հիմնական զուգարը: Վորքան շատանում ե անբաժանելի ֆոնդը, հատկապես արտադրության միջոցների հաշվին, այնքան ուժեղանում ե ամբողջում են սոցիալիստական արտադրական հարաբերությունները կոլտնտեսությունում: Անբաժանելի ֆոնդի աճման հաջորդությունները պայմանավորված են պրոլետարական ղեկավարության ուժեղությունով: այդ ֆոնդի աճումը պրոլետարական ղեկավարության աճում ե, դա փաստորեն «պրոլետարական ղեկավարության մասերիալիզացիան ե»: Սակայն յեթե կոլտնտեսության արտադրական միջոցները 100 տոկոսով ել անբաժանելի ֆոնդ լինեն, այս հանդամանը նրան խիստ մոտեցնելով հետևողական—սոցիալիստական տիպի տնտեսություններին, այնուամենայնիվ դեռ աշխատին չի դարձնում, վորովհետե հետևողական—սոցիալիստական տիպի տնտեսության արտադրական միջոցներն ամբողջ հասարակության—պետության սեփականություն են, իսկ նա վորոշ չափով նորից տվյալ չընանի կոլտնտեսություններինը:

5. Լենինը պրոլետարական ղեկատուության պայմաններում կոոպերացիան համարում ե սոցիալիստական տիպի ձևոնարկություն: այս բնութագրումն ավելի քան կարող ե տարածվել կոլտնտեսությունների վրա, վորպես արտադրական կոոպերացիայի ավելի բարձր ձևի: «Կոլտնտեսությունները վորպես տնտեսական տիպ, սոցիալիստական տնտեսության մեքից մեկն են» (Ստալին):

Կոլտնտեսությունները կառուցված են պրոլետարական պետությանը պատկանող հողի վրա: Նրանք ամբողջովին կապված են հետևողական—սոցիալիստական տիպի արդյունաբերության և պրոլետարական պետության հետ, նրանց են տալիս իրենց ավելցուկը ե նրանցից ստանում են իրենց անհրաժեշտ գործիքները ե սպառման առարկաները: ահա այս կապը կոլտնտեսությունը—սոցիալիստական բովանդակություն հաղորդող մոմենտներից մեկն ե:

2ի կարելի կոլտնտնարժուժը բնորոշել անկախ պրոլետարական ղեկատուության շարժարեր փոխերի կապակցությունից, անկախ հետևողական—սոցիալիստական տիպի արդյունաբերության հետ ունեցած կապից, առանց նրա գերակշռող և առաջնորդող դերի, և առանց յեթման կես ունենալու Լենինի կոոպերատիվ պլանը: Մեզ մոտ այդ շարժումը—սոցիալիստական բնույթ ե կրում, վորով

հետև նա կատարվում ե այդ շարժարեր փոխերի ղեկավարությունը, նրանց ներգործող և վերափոխող գործունեությունը, վորովհետև այդ շարժումը ղեկավարում ե սոցիալիստական պրոլետարիատը ե նրան հակադրելով բուրժուական և մանր—բուրժուական տարրերին, տանում ե դեպի հետևողական—սոցիալիստական տնտեսություն:

Յեթե կոլտնտեսությունը դիտենք արատալիստական, առանց նկատի ունենալու յերկրում գերիշխող արտադրական հարաբերությունները ե պրոլետարիատի ղեկատուության վոյությունը, վորն առաջադրում ե կոլտնտեսության կառուցման սկզբունքները ե վորոշում կարգացման ընթացքը, ապա, իհարկե, կոլտնտեսությունը վոշնչով չի տարբերվի մասնավոր տնտեսություններից: Այս դեպքում մասնավոր սեփականությունը կոլեկտիվ սեփականության ե վերածվում—չփոխելով արտադրական հարաբերությունները: իսկ յեթե այդ դիտենք մեզանում տիրող սոցիալիստական արտադրական հարաբերությունների, սոցիալիստական արդյունաբերության ղեկավարության լույսի տակ, իհարկե կոլտնտեսությունները, վոր կառուցվել են տիպական կանոնադրության հիմունքներով, ունեն սոցիալիստական արտադրական հարաբերություններ և սոցիալիստական տնտեսության նախնական տիպն են դուրսա տնտեսության մեջ:

Վտանգավոր իլյուզիա կլինել կարծել, վոր կոլտնտեսությունն ավարտված սոցիալիստական տնտեսություն ե: Կոլտնտեսությունը դեռևս պետք ե զարգանա լրիվ հետևողական—սոցիալիստական տնտեսություն դառնալու ուղղությամբ: Կոլտնտեսությունում դեռևս պայքար մղվելու յե մանր սեփականատիրական հողերանություն և տնտեսների մնացորդների դեմ, կոլտնտեսությունը սոցիալիստական դարգացման բարձր աստիճան տեղափոխելու համար: Կոլտնտեսություն կազմակերպելն առաջին և վճռական քայլն ե սոցիալիստական հարաբերություններ ստեղծելու ուղղությամբ, սակայն դեռ նոր ե սկսվում հասարակական նոր ղեկավարիչայի գործը: «...2ի կարելի իդեալականացնել արտելը: 2ի կարելի բանը պատկերացնել այնպես, վոր արտելն ավարտված սոցիալիստական տնտեսություն ե» (Յակովլևի—գեկուցում 16-րդ համագումարում):

«Արտելում չի ավարտվում, այլ միայն սկսվում ե հասարակական նոր դիացիալիստական ստեղծման գործը, գյուղացիներին սոցիալիստական շինարարություն սովորեցնելու գործը» (16-րդ համագումարի բանաձևը Յակովլևի գեկուցման առթիվ):

Յեթե մենք չունենանք կոլտնտնարժաման ներկա ետապի հստակ գնահատականը, չկարողանանք վորոշել ներկա ետապի տեղը լիակատար սոցիալիստական տնտեսություն ստեղծելու շղթայի մեջ, տեսականորեն անալիզի չենթարկենք այն հաջորդ ետապը, դեպքեր դնում ենք, ապա մենք յերեք չենք կարող մարքսիստորեն

ըմբռնել կոլտնտեսությունների բնույթը: Յեթե մենք ներկայիս կոլտնտեսությունները հայտարարենք լիակատար սոցիալիստական տնտեսություններ և անտեսենք նրա հակասությունները, դատա-կարգային պայքարի տարրերը, ապա կնշանակի հրաժարվել նրանց սոցիալիստական դարգացման համար պայքարելուց:

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՎ ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆ-ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Կա՞ տարբեր տարրերություն «հետևվողական-սոցիալիստական տիպի ձեռնարկներ» և «սոցիալիստական տիպի ձեռնարկներ» հաս-կացողությունների միջև: Այո՛, կա: Վրո՞մանք այդ տարբերու-թյունն այն իմաստով են մեկնաբանում, վոր «հետևվողական» բա-ռը չեղավում է, վորպես սոցիալիստական բովանդակությունը բուլցնող և բերի բողնող մոմենտ, վոր իբր թև կենդանի պիտ-անոնարկները բնորոշվի «հետևվողական» բառով ուղեղ և ցույց տալ նրանց սոցիալիստական բովանդակության վոչ կատարյալ, կիսատ լինելը: Սա, իհարկե, սխալ է: «Հետևողական» բառի նշա-նակում է, վոր այդ սոցիալիստական դարգացման ավելի քարձը աստիճանն է, նա ցույց է տալիս, վոր ներկա կատարում հետևվո-ղականորեն կենսագործված են սոցիալիստական արտադրական հարաբերությունները: Լենինի «հետևվողական» բառը նշանակում է վոչ թե նոր պեսք է հետևի և սոցիալիստական, դառնա, այլ է և ավելի հետևվողականորեն է իրագործված, նա ցույց է տալիս այդ հարաբերության հետևողականությունը:

Սոցիալ-տնտեսական իմաստով, կա՞ վորեք տարբերություն կոլտնտեսության և պետական արդյունաբերության ու խորհրդա-տնտեսությունների միջև, թե չկա: Այդ տարբերությունը հետևյալն է: Կոլտնտեսությունները սոցիալիստական տիպի տնտեսու-թյուններ են, սակայն վոչ հետևողական-սոցիալիստական տիպի ինչպես պետգործարանները և խորհրդատնտեսությունները: «Հետև-վողական-սոցիալիստական» արտահայտությունը ցույց է տալիս այն ամենաբարձր, ներկա ետապում ավելի հետևվողականորեն կիրառված սոցիալիստական արտադրական հարաբերությունների ձեվը, վորի համեմատությամբ կոլտնտեսությունները սոցիալիս-տական արտադրական հարաբերությունների ավելի ցածր ձեվն են ներկայացնում» (Բայկելիկի առաջնորդողը № 10, 13 թ.): Հե-տևողական-սոցիալիստական տիպի տնտեսությունները տարբեր-վում են սոցիալիստական տիպի տնտեսություններից նրանով, վոր՝

1. Նրանց «արտադրության միջոցները, հողը, վորի վրա կա-ռուցված է ձեռնարկը, և գործարանն ամբողջովին պատկանում են պետությանը» (Լենին): Պատկանում են պետականորեն կազմա-կերպված բանվոր դասակարգին: Պետարդյունաբերության առան-ձին գործարանները պատկանում են վոչ թե բանվոր դասակարգի ստանձին խմբերին—այլ՝ ամբողջ դասակարգին՝ հանձնին պետու-թյան:

Այսպես չէ դրությունը կոլտնտեսություններում. այստեղ հանրայնացման պրոցեսները դեռ առաջին աստիճանումն են գըրա-նըվում և նրանց իրական տերը (բացի հողից) վոչ պետությունն է, վոչ էլ կոլտնտեսական սխեման (բացի անրաժանելի ֆոնդից), այլ արտերում և կոմունայում կազմակերպված աշխատավորների ա-ռանձին խմբեր:

2. Պետարդյունաբերության և խորհրդատնտեսությունների աը-տագրանքը վոչ թե բանվորների առանձին խմբերի սեփականու-թյունն է, այլ ամբողջ դասակարգի: Իսկ կոլտնտեսության մեջ յեկամուար տվյալ կոլտնտեսականների սեփականությունն է: Այն-տեղ սպառման և կուտակման համար, ինչպես և կապիտալ շինարա-րություն ծավալը վորոշում է պետությունը միասնական պլանով, իսկ այստեղ կոլտնտեսականների տվյալ խումբը— յեկնելով կոլ-տնտեսության հնարավորություններից և շահերից, իհարկե հիմք ունենալով կանոնադրությունը:

3. «Ի տարբերությամբ խորհրդատնտեսություններից, վորումք պետական ձեռնարկներ են, ստեղծվել են պետական միջոցներով, կոլտնտեսությունները կառավար հասարակական միավորներ են, ձեռնարկություններ, վոր ստեղծվել են իրենց՝ գյուղացիների մի-ջոցով, սրանից բխող բոլոր առանձնահատկություները» (16-րդ համագումարի բանաձևը Յակովլեվի ղեկուցման աթիվ): «Միա-ժամանակ համագումարը մատնանշում է խորհրդատնտեսությունների և կոլտնտեսությունների միջև տեղի ունեցող հսկայական տարբե-րությունը զարգացման տվյալ շրջանում: Խորհրդատնտեսությունները պետական ձեռնարկություներ են, և ոլետությունը նրանց լիակա-տար տերն է հանդիսանում, սրանից բխող բոլոր հետևանքներով, և այդ տեսակետից նրանք վոչնչով չեն տարբերվում արդյունա-բերական տիպի վորեվ մի այլ սոցիալիստական ֆաբրիկայից: Իրա ընդհակառակն են հանդիսանում այն ձեռնարկություները, վոր հիմնում են գյուղացիները, հոժար կերպով հանրայնացնելով իրենց արտադրական միջոցները և իրենց տնտեսությունը, աշխա-տում են պետությանը պատկանող հողի վրա: Միաժամանակ կոլ-տնտեսությունների տերն են հանդիսանում կոլտնտեսականները, վորոնք բանվորա-գյուղացիական կառավարությամբ ամեն տեսակի աջակցություն է ցույց տալիս, նրանց լավագույն հոգամասեր հատկացնելով, գգալի արտոնություններ է տալիս ուժեղ տեխնիկա-կան բազա ստեղծելով պետական մեքենա-տրակտորային կայանների միջոցով» (Խորհրդերի 6-րդ համագումարի բանաձևը խորհ-տընաշինարարության մասին):

4. Կոլտնտեսություններում կա ունեցվածքային անհավասա-րություն. անհավասարության տարրեր կան նաև խորհրդատնտե-սություններում, սակայն այս բոլորում է աշխատողների տարբեր վո-րակից, իսկ կոլտնտեսություններում բացի սրանից բոլորում են նաև չհանրայնացված անհատական տնտեսություններից: «ԽՍՀՄ ֆաբրիկա-գործարանների բանվորների միջև պահպանվող անհա-

վասարաբյուրն հիմնականում բղխում է աշխատափ տարբեր-
քանակից և վորակից, բանվորների տարբեր վորակից: Իսկ արտե-
լում, վորտեղ հանրայնացված տնտեսաբան յեկամուտը բաշխ-
վում է հիմնականում աշխատանքի և վորակի համաձայն, գոյու-
թյուն ունի նաև այդ անհավասարաբյուրն, և բացի սրանից թա-
լրացուցիչ անհավասարաբյուրն, վորը բղխում է տարբեր ունեց-
վածքային վիճակից, չֆալորի և միջակի անհատական տնտեսու-
թյան տարբեր չափերից: Չունենի այս, հավասարագոր է նրան,
վոր դժվարաբյուրնները ֆալարկել, գունավորել դրությունն ար-
տելում» (Յակովլև—կոլտնտեսական շարժման մասին):

Իհարկե, աստիճանաբար կվերանա կոլտնտեսության և խորհ-
տնտեսության տարբերությունը. այդ վերացման հիմնական
միջոցներն են՝ պլանային ղեկավարությունը, մեքենատրակտորային
կայանների աճումը, ագրո-ինդուստրիալ կոմբինատների կազմա-
կերպումը և այլն: Կոլտնտեսության ներսում ևս աճում են այդ
տարբերությունը վերացնող գծերը՝ անրաժանելի ֆոնդի աճումը,
տեխնիկական բազայի ուժեղացումը, հանրայնացման գործընթակի
խորացումը, կոլտնտեսության մասնագիտացումը և խոշորացումը:
Ոոսելով սոցիալիստական և հետևողական-սոցիալիստական
տիպի տնտեսությունների տարբերության մասին, չպետք է մո-
ռանալ նաև նրանց սկզբունքային նույնությունը: Այդ յերկուսումն
էլ արտադրական հարաբերությունները հիմնականում նույնն են՝
սոցիալիստական են: Նրանց միջև կա արմատական նույնություն և,
չկա անհաշտելի հակասություն:

Այսպիսով թե կոլտնտեսությունը և թե խորհտնտեսություն-
ները սոցիալիստական տիպի տնտեսություններ են, սակայն խորհ-
տնտեսությունը սոցիալիստական տնտեսության ավելի բարձր
աստիճանն է կոլտնտեսության համեմատությամբ. կոլտնտեսու-
թյունը հետևողական-սոցիալիստական տիպի տնտեսություն
կզատնա այն ժամանակ, յերբ կոլտնտեսականները դառնան հա-
տարական աշխատողներ, յերբ նրանք տնտեսությունը վարեն
վոչ թե տվյալ խմբի կոլտնտեսությունների, այլ ամբողջ հասարա-
կության ոգտին. յերբ կոլտնտեսությունները դառնան ամբողջ
հասարակության սեփականությունը: «Կոլտնտեսությունները դեռ-
ևս համառ աշխատանքի մի ամբողջ պատմական շրջան պետք է անց-
նեն, վորպեսզի դառնան եետեվողական. սոցիալիստական տիպի
ձեռնարկներ» (Բալլչևիկի առաջնորդողը № 10, 30 թ.):

Այսպիսով մենք պարզեցինք, վոր կոլտնտեսություններում
տիրապետող արտադրական հարաբերությունները սոցիալիստա-
կան են: Իսկ մենք պետք է յեխենք գերակշռող, տիրապետող և ա-
ճող հարաբերություններից և վոչ թե հնի աննշան և մահացող
մնացորդներից:

Դեռևս չի յեղել մի տնտեսական ֆորմացիա, վորտեղ լինելին
միայն մի տեսակի արտադրական հարաբերություններ. միշտ ել
նախորդ տնտեսական ֆորմացիայում գերակշռող արտադրական

հարաբերությունների մնացորդները յեղել են հաջորդ հասարա-
կակարգում և անհետացել յերկար դիմադրելուց ու համառ պայ-
քարից հետո: Ներկայումս վոչ մի տեղ բացարձակորեն մաքուր
կոպիտալիզմ դոյություն չունի, սակայն բոլոր յերկիրներում
(բացի ՍՍՀՄ-ից) արտադրության գերակշռող և տիրապետող յե-
ղանակը կապիտալիստականն է:

Ներկայումս նույն պատկերը կարելի յե դիտել մեզանում,
իհարկե տարբեր սոցիալական բովանդակությամբ, պայքարի
տարբեր ձևերով ու նպատակներով: Հայտնի յե, վոր ընկ. Լենին-
նը, 1918 թ. անալիզի յենթարկելով մեր տնտեսակարգը, թվել է
նրա հինգ կենսաձևերը: Կարելի յե ասել, վոր մեր եկոնոմիկան ներ-
կայումս ունի այն պատկերը, ինչ այն ժամանակ, յերբ Լենինը գրեց
իր հոդվածը: Իհարկե վոչ: Այն ժամանակ թե քանակով և թե ար-
տադրանքով գերիշխում էր մանր ապրանքային տնտեսությունը:
Ներկայումս նա յերկրորդական տեղ ունի գյուղատնտեսության
մեջ, իսկ սոցիալիստական հատվածը բացարձակ գերակշռություն
է ձեռք բերել: Կապիտալիստական սեկտորը, վոր այն ժամանակ
և հատկապես նեպի առաջին շրջանում զգալի մեծություն էր ներ-
կայացնում, ներկայումս իր մալրամուտի վերջին որերն է ապրում
և աննշան տեղ գրավում մեր եկոնոմիկայի մեջ: Իսկ նահապետա-
կան կամ նատուրալ կենսաձևի նմուշները դառնելու համար «ճրա-
դով պետք է ման գալ»:

Այստեղից յերևում է, վոր մեզանում ևս կան նախկին հասա-
րակակարգերի արտադրական բոլոր հարաբերությունների մնա-
ցորդները, սակայն տիրապետողը և գերակշռողը սոցիալիստական
հարաբերություններն են, հատկապես ներկայումս, նեպի վերջին
ետապում և սոցիալիզմի առաջին շրջանում:

Կան մարդիկ, վորոնք առաքելով և կասկածի տակ առնելով
հանրայնացված սեկտորի սոցիալիստական բնույթը, սխալաստի-
կորեն հարցնում են «ցույց տվեք մեզ մաքուր, ավարտված սոցիա-
լիստական հարաբերություններ, վորտեղ հնի մնացորդները չը-
նեն»: Սրանք փնտրում են 100-տոկոսայինը, «ավարտվածը», «մա-
քուրը» առանց հասկանալու, վոր հնի մնացորդները նախ աննշան
են իրենց տեսակարար կշիռով և յերկրորդ՝ անընդհատ վերանում ու
նվազում են, վոր տնտեսության տիպը վորոշվում է վոչ թե նրան
խորթ արտադրական հարաբերությունների աննշան մնացորդներով,
այլ նրանում գերակշռող արտադրական հարաբերություններով:
Իհարկե, սա չի նշանակում, վոր կոլտնտեսություններում, անպա-
լիտձեռնարկներում սոցիալիստական հարաբերություններն իրենց
ավարտված գարգացման են հասել. ընդհանրապես նման հարցա-
դրումը չառ սխալաստիկ է և անիմաստ, թեկուզ և այն պատճա-
ռով, վոր սոցիալիստական արտադրական հարաբերությունների
գարգացումը յերբեք չի կարող այնպիսի մակարդակի համեմել,
վորը հարկավոր ու անհրաժեշտ դարձներ նրա հետագա գարգա-
ցումը, կատարելագործումը և սոցիալիստական առաջնադացումը:

Մարքսիստ ազդարնիկները համազումարում են, Լարինը կոլոնիալիզմի շրջանները բնորոշում է վորպես մասնավոր-կապիտալիզմի ձեռնարկներ. նա ասում է. «Համատարած կոլեկտիվացման շրջանների կոլոնիալիզմի շրջանները տարբերվում են առաջինն այն առանձնահատկությամբ, վոր նրանք մեծ են և կապիտալիզմի, ընդ-վորում կոլոնիալիզմի և արտադրության շրջանները նրանց արտադրական միջոցները և պրոդուկցիան միևնույն ժամանակ պատկանում են մասնակի մարդկանց խմբին, և նրանք մեծ մասամբ կառուցված են առանձին անդամների փայերից: Վորոշ պայմաններում աշխատի տնտեսության շահերն իր անդամների կողմից կարող են հաղթարկվել սոցիալիստական պետության ամբողջական շահերին»: «Վորոշ շրջանի կոլոնիալիզմի շրջանները կարող են այս կամ այն չափով իրենց հակադրել պետության քաղաքականությանը՝ կոնսերվատիվացի, մատակարարման, բաշխման և այլ առարկաներում» (ճառ մարքսիստ ազդարնիկների համագումարում):

Յեթե ընդ-Լարինը խոսեր առանձին կոլոնիալիզմի շրջանների մասին, այդ կարող եր այս կամ այն չափով ճշմարիտ լինել. յեթե այդ նա ասեր կեղծ կոլոնիալիզմի շրջանների մասին, այդ վոր մի-այն ճշմարիտ կլիներ, այլև մեղմ. սակայն նրա սխալն այն է, վոր այդ գնահատականը նա տարածում է ներկա շրջանի բոլոր կոլոնիալիզմի շրջանների վրա: Լարինը մոռացել է, վոր կոլոնիալիզմի շրջանները նոր հարաբերություն են ստեղծում, վորը անհնար է դարձնում չափադործումը: «Մի՞թե կոլոնիալիզմի շրջաններում կա արտադրական միջոցների տեղ մարդկանց դատակարգ և արտադրության միջոցներից դուրս մարդկանց դատակարգ: Մի՞թե կոլոնիալիզմի շրջանում կա չափադործողների և չափադործվողների դատակարգ, մի՞թե կոլոնիալիզմի շրջանը արտադրական հիմնական միջոցների հանրայնացում չի հանդիսանում այն հողի վրա, վոր վոր նույն պետությանն է պատկանում: Ի՞նչ եիմք կա պնդելու, վոր կոլոնիալիզմի շրջանները, վորպես տնտեսության տիպ, սոցիալիստական տնտեսության ձեռքից մեկը չեն հանդիսանում» (Ստալին):

Նույնպիսի սխալ է կատարում Գրիգորյանը, ըստ վորի կոլոնիալիզմի շրջանը վոր թե սոցիալիստական տնտեսությանն է, այլ սոցիալիստական պետությանն է դառնալ ասպագայում: Այս ընկերներն ըստ էության կրկնում են ալերի և «ձախերի» սխալը կոլոնիալիզմի շրջանի բնույթի խնդրում: Ընդ-Լարինը իր դրույթներով այս խնդրում աջ տեսակետների յե հանդում: Նա սկսում է նրանից, վոր անհրաժեշտ է սկզբունքորեն պարզեցում մտցնել կոլոնիալիզմի շրջանի սոցիալ-դատակարգային բնույթի հարցերում, և դրոնում է, վոր «գլխավորապես սոցիալիստական սկիզբում» կամ «սոցիալիստական գլխավորապես» բնույթի շրջանները

սխալ են և չեն համապատասխանում կոլոնիալիզմի շրջանի արտադրական հարաբերությունների բնույթին: Նա չփոխելով տարբեր հասկացությունները, ասում է, վոր համատարած կոլեկտիվացումը «չերբեք էլ չի նշանակում սոցիալիզմ, սոցիալիստական տնտեսություն, գաղված սոցիալիստական տիպի տնտեսություն»: Այստեղ սոցիալիզմը նույնացված է հետևողական-սոցիալիստական տիպի տնտեսության հետ և վերջինս նույնացվել է սոցիալիստական տիպի տնտեսության հետ: Իհարկե այդ համա-ցույցություններն արտահայտելով տնտեսության սոցիալիստական բովանդակության տարբեր ետապներ, տարբերվում են իրարից: Լարինը վորոշ հակում է ցույց տալիս դեպի սխալատիկան. «կամ—կամ», կամ կոլոնիալիզմի շրջանները հետևողական — սոցիալիստական տիպի տնտեսությանն են, կամ մասնավոր: Իսկ վորովհետև նրանք առաջինը չեն, այս յերկրորդն են:

Ըստ Լարինի, կոլոնիալիզմի շրջանը անհատական տնտեսության շրջաններից դեպի սոցիալիստական տնտեսությանն անցող ճանաչողիկ ձև է: Մինչդեռ կոլոնիալիզմի շրջանները սոցիալիստական տիպի տնտեսությանն են, հետևողական-սոցիալիստական տիպի տնտեսությանն են միջոցով դառնալու յին լիակատար սոցիալիստական հասարակարգի տնտեսական որդանիղմի բնույթը:

Ըստ Լարինի կոլոնիալիզմի շրջանները տարբերվում են անհատականից, վորովհետև «պլուգրեսիվ տնտեսություններ են». վոր դրանք «մասնավոր տնտեսությունների խոշոր միավորների սեփականություն են». և «այն չափով են տարբերվում սոցիալիստական գյուղացիական տնտեսություններից, վոր նշանակալի չափով հեշտացնում են նրա վերականգնումը սոցիալիստական ելևեղումների ավելի դարձացման կողմը» (տես Լարինի յերբերված մարքսիստ ազդարնիկների համագումարում): Յեթ վերջապես «Համատարած կոլեկտիվացումը գյուղում սոցիալիզմ կառուցելու ճանապարհի անհրաժեշտ և կարևոր ետապն է հանդիսանում. նա վոր մի դեպքում չի հանդիսանում վոր սոցիալիզմ, վոր սոցիալիստական տնտեսություն, վոր էլ սոցիալիստական տիպի տնտեսություն» — ահա Լարինի յերբերվածի աղբյուրը: Այսպիսով համատարած կոլեկտիվացումը, ըստ Լարինի, վոր թե սոցիալիզմի կառուցումն է գյուղում, այլ մի փոխանցիկ ետապ դեպի այդ կառուցումը, իսկ կոլոնիալիզմի շրջանները սոցիալիստական տիպի տնտեսությանն են համարվել չեն կարող: Ընդ-Լարինը ժխտում է կոլոնիալիզմի սոցիալիստական ելույթները. նա կոլոնիալիզմի շրջանը տարբերում է անհատականից միայն նրանով, վոր մեծ է խոշոր է. նա բոլորովին անտեսում է այդ խոշոր տնտեսության մեջ առեղծված արտադրական նոր հարաբերությունները: Նա կոլոնիալիզմի շրջանի միայն պրոդուկցիայի յիններն է տեսնում, իսկ պրոդուկցիայի կարող են լինել նաև բուրժուական խոշոր տնտեսությանները մանրերի հանդեպ: Նա կոլոնիալիզմի շրջանը համարում է անհատների հավաք-

կան տնտեսությունն և վոչ ավելին, այսինքն այդ համարում է սովորական աղյուսակների ընկերություն: Վերջապես ըստ Լա-րենի կոլտնտեսություններում կան միայն սոցիալիստական տար-րեր, վորոնք դարձանարով ապագայում կհեշտացնեն նրա սոցիա-լիստական վերակառուցումը: Այս կապակցությամբ նա կազա-րում է նաև այս սխալը, թե կոլտնտեսությունները սոցիալիստա-կան կրառնան, յերբ խորհակոտեսությունների վերադավեն, իսկ կո-պերացիան հակադրում է կոլտնտեսություններին, վերջինս համա-րելով Լենինի կոոպերատիվ պլանից դուրս:

Լարենը գտնում է, վոր ներկայումս «կոլտնտեսությունները գյուղացիական տնտեսությունների գոյության նորմալ ձևն են... սովյալ շրջանի գյուղական տնտեսությունների գոյմարը»: Մարք-սիստ աղբարնիկները կոնֆերենցիան իր բանաձևում դատապար-տելով ընկ. Լարենի յեղեյթը, գրում է. «կոլտնտեսությունների բուռն վերելքը, խոշոր կոլտնտեսությունների կազմակերպումը, մի շարք շրջանների անցումը համատարած կոլեկտիվացման դյուղա-տնտեսության սոցիալիստական ձևերի ուժեղացման պրոցես են հանդիսանում: Այդ պրոցեսի տարրերից առանձնահատկությունը դյուղացիության անցումն է արտադրական միջոցների անհատա-կան սեփականությունից հասարակական սեփականության, չու-կայական հարաբերություններից դեպի դյուղի և քաղաքի պրո-դուկցիայի փոխանակության պլանային-կազմակերպված ձևե-րին: Կոլեկտիվացման աճում սոցիալիստական տարրերի աճումն է և կապիտալիզմի աճման բաղադրի բանդումը, վորն սրմատացել է մանր-գյուղացիական տնտեսության մեջ: Ընկ. Լարենի վորձերը՝ համատարած կոլեկտիվացումը պատկերացնելու վորպես խոշոր, կոոպերատիվ-մասնատիրական տնտեսությունների կազմակեր-պում, Լենինի կոպերատիվ պլանի ռեվիզիան է հանդիսանում, նրա սոցիալիստական բովանդակության աղճատումը (выхолащивание): «Քաղաքակրթված կոոպերատորների հասարակարգը, արտադրության միջոցների ընդհանուր սեփականության դեպքում, պրոլետարիատի դասակարգային հաղթանակի դեպքում բուրժու-ազիայի վրա՝ դա սոցիալիզմի կարգն է» (Լենին, հատ. 18, մաս 2-րդ, էջ 149):

Լարենի վորձերը՝ հակադրելու համատարած կոլեկտիվացու-մը պրոլետարական պետության շահերին՝ դների, կոնտրակտա-ցիայի, մատակարարման, բաշխման և այլ դժեբույ, ժողտնտեսու-թյան սոցիալիստական և մասնատիրական սեկտորների հակասու-թյան միջանկիական փոխակցումն է սոցիալիստական սեկտորի ներ-սը, վորն սքողում է կոլտնտեսություններից դուրս յեղած դասա-կարգային պայքարի և կոլտնտեսության մեջ յեղած դասակար-գային պայքարի տարրերի տարբերությունը, չուկայական տնտե-սության տարերային որենքները փոխադրում է դյուղատնտեսու-թյան և արդյունաբերության միջերենների փոխանակության պլա-նայնորեն կազմակերպված պայմանները, պրոլետարիատի և սոցիա-

լիստական արդյունաբերության տաղանտար դերի՝ բաղադրումն և դյուղացիական տնտեսության սոցիալիստական ռեկոնստրուկցիա-յի գործում» (բանաձև ընկ. Միլյուկինի դեկլոցման առթիվ):

Ամփոփենք: Ըստ ընկ. Լարենի կոլտնտեսությունը՝

1. Անհատների խոշորացված կոլեկտիվ տնտեսություններ են, մի տեսակ աղյուսակների ընկերություններ, վոր կազմված են փախերի հիման վրա, վորտեղ արտադրական հարաբերությու-նները չեն տարբերվում անհատական տնտեսություններից:

2. Դրանք վոչ թե սոցիալիստական տնտեսություններ են, այլ պրոդերսիվ խոշոր տնտեսություններ, վորոնք փոխանցվելու-յին սոցիալիստական տնտեսության: Համատարած կոլեկտիվացու-մը վոչ թե սոցիալիստական շինարարություն է, այլ նախապատ-րաստական աշխատանք հետագայում այդ շինարարությունը կա-տարելու համար: Կոլտնտեսությունը վոչ թե սոցիալիզմի կառուց-ման շարժում է, այլ նախապատրաստական աշխատանք այդ կա-ռուցման համար:

3. Կոլտնտեսությունները սոցիալիստական կրառնան, յեթե խորհոտնտեսությունները վերածվեն:

Լարենը կոլտնտեսությունները դուրս համարելով Լենինի կոոպերատիվ պլանից և հակադրելով նրան, ռեվիզիայի յե յեն-թարկում լենինիզմը:

5. Ըստ Լարենի կոլտնտեսությունները համարյա նույն դիրքը կրեն են պետության քաղաքականության նկատմամբ, ինչ անհա-տականները, հակադրվելով նրան դների, կոնտրակտացիայի, հարկերի և մատակարարման դժույ:

Ընկ. Լարենը հավաքական կերպով արտահայտեց աջերի տե-սակետը կոլտնտեսության ընդլիցի մասին. սակայն այդ տեսա-կետների «պատիվն» իրաք ընկ. Բուխարինի գլխավորած աջ ուղ-ղիցիային է պատկանում: Իր ժամանակ աջերը պնդում էին, վոր կոլտնտեսությունները վոչնչով չեն տարբերվի սովորական մանր բուրժուական տնտեսություններից, վոր նրանք պետության վար-կը վճարելուց հետո չուկայում հանդես կդան վորպես մասնավոր տնտեսություն (տես Ռիկովի յեղեյթը 1929 թ. ապրիլյան պլե-նումում): Այս «պատիվից» դերժ մնաց նաև Սիրցով-Լոմինաձե-յական աջ-«ձախ» ընդկը, վորի կարծիքով «կոլտնտեսություն մտած դյուղացիներն ամենուրեք դեմ պետք է յինեն պրոլետարա-րական պետության պլանային սկզբունքին» (Սիրցով):

Ընկ. Ռիկովը կարծում էր, վոր պետության քաղաքականու-թյանն աջակցելու կամ ընդդիմադրելու գործում կոլտնտեսու-թյունների և անհատականների միջով գործնականում տարբերու-թյունը կվերանա, հատկապես հացի միջերման, կոնտրակտացիայի և դների խնդրում:

Աջերը նույնպես Լենինի կոոպերատիվ պլանը հակադրում է-յին կոլտնտեսություններին, վերջինս չհամարելով դյուղացիա-կան տնտեսությունների սոցիալիստական վերակառուցման հիմնա-կան ուղին: Ընկ. Բուխարինը գրում է. «մեզանում վորաջ ընկեր-

ներ դառնում են... վոր սոցիալիզմի դիտարկումը ուղին կոյունտեսու-
թյուններն են: Յեւ այդ պնդումը համարում եմ սխալ: Հիմնական
ուղին կրթական սովորական կոոպերացիայի միջոցով — դեռում,
բաշխում, վարկ—մի խոսքով՝ գյուղատնտեսական կոոպերացիայի
միջոցով» (Ընթացիկ մոմենտը և մեր քաղաքականությունը հի-
մունքները, էջ 28): Այս տեսակետը նա պաշտպանում է նաև «Լե-
նինի քաղաքական կտակը» ճառի մեջ, վորտեղ սոցիալիզմին հաս-
նելու գլխավոր միջոցը համարում է ապրանքաշրջանառությունը,
յեկոպերական ձևով առևտուր անող կոոպերատորները:

Ըստ աջ ուղորտունիստների տեսութան կոյունտեսությունը
սոցիալական վորակով գյուղացիական տնտեսությունների մի տե-
սակն է: Դա մանր սեփականատերերի մասնավոր—խմբակային
տնտեսությունն է, վորտեղ արտադրության միջոցները մասնավոր
գյուղացիների կողմից են պատկանում, վորն ոգտագործվում
և կազմակերպված մենատնտեսատերերի ոգտին, ինչպես անհա-
տական տնտեսություն մեջ եր: Այստեղ տարբերությունն այն է,
վոր արտադրության միջոցները և յեկամուտը պատկանում են մաս-
նավոր մարդկանց խմբակին և վոչ թե առանձին մասնավոր աղե-
տեսատերերին: Վոր կոյունտեսությունում գյուղացին դադարում
է կապիւն միայն այս կամ այն կոոր հողի ու արտադրության մի-
ջոցների հետ—վորովհետեւ նա այդ միացրել է: Սակայն այս
տալքերությունն արևատական և սկզբունքային չէ, նրան սոցիա-
լական նար բնույթ չի տալիս, վորը տարբերքն անհատական տըն-
տեսություններից: Չնայած այդ տարբերությանը, նրանք յերկուսն
էլ համարյա հախաբարպես ընդդիմադրելու յեն սոցիալիստա-
կան արդյունաբերությանը և պետական ձեռնարկումներին: Կոյ-
ունտեսությունները և կոյունտեսականները ևս ձգտում են ան-
հատական հարստացման: Կապիտալիստական զարգացման տե-
ղենցիան նրանց համար նույնքան ընդունելի յե վորքան մենատըն-
տեսատերերի:

Կոյունտեսության բնույթի այս աջ—ուղորտունիստական տե-
սությունից էլ բխում է նրանց պրակտիկ առաջարկները կոյունտե-
սիսարարության մասին: Յեքե կոյունտեսությունը սոցիալիստա-
կան տնտեսության մի տեսակը չէ, ապա պարզ է, վոր կոյունտե-
սիսարարությունն էլ սոցիալիստական շինարարությունն չէ: Յե-
քե կոյունտեսությունների կառուցումը սոցիալիզմի կառուցումը
չէ, ապա, իհարկե, մասսայական կոյունտարժոււնը սոցիալիստա-
կան շարժումն չէ: Յեթե այս բոլորն այսպես է, ապա վոչ մի կա-
րէք չկա հսկայական գումարներ ծախսել, կադրեր դրողեցնել,
ուժ գործադրել և ժամանակ վատնել, ագիտացիա անել և կուլա-
կության հետ կատարել պայքարի բռնիւն կոյունտեսությունների
համար:

Այստեղից յեզրակացություն, վոր հիմնովին սխալ է կու-
սակցության գիծը կոյունտիսարարության և սրան ամենուրեք
ողնելու ու կուլակությունը վերացնելու համար: Վոր անհրա-
ժեշտ է գյուղացիությունը թողնել իր խաղաղ զարգացման ըախ-

տին, սղենլով անհատական տնտեսություններին, — վորոնք մեղ
ավելի—չուտ հաց կտան: Վոր անհրաժեշտ է ամենուրեք ծախսել
վաճառամատակարարման կոոպերացիան վորպես սոցիալիզմի հիմ-
նական ուղի: Այսպես է աղերի կոնցեպցիան կոյունտիսարարու-
թյան և կոյունտեսության եյության հարցերում:

Աղերը չեն տեսնում, վոր նախկին մենատնտեսատերերի ար-
տադրական միջոցների համայնացումն ամբողջովին փոխում է
արտադրական հարաբերությունները, վոր անհատական տնտեսու-
թյունը գյուղի յերտավորման և չուկայական կապերի պայմանե-
րում չաճողորժողական կուլակային տնտեսություն դառնալու
տենդենց ունի: Ինչպեւ կոյունտեսությունը, վորպես սոցիալիս-
տական տիպի տնտեսություն, իր տենդենցով դնում է հետևողական
սոցիալիստական դառնալու ուղղությունը: Վոր կոյունտեսության
արտադրական միջոցները և յեկամուտը չեն ոգտագործվում չա-
հագործման ու անհատական ուռճացման համար: Արտադրական
միջոցները, յեկամուտը և ալխատանքային հարաբերություններն
այն հիմնականն են, վոր կոյունտեսությունը տարբերում են անհա-
տականից և անՊարին են դարձնում չահագործումը: Աղերն անտե-
սում են նաև մի հանգամանք. — կոյունտեսություններում ամբողջ
յեկամուտը չի բաժանվում կոյունտեսականների վրա: յեկամուտի
միայն մի մասն է կազմում սպառողական Փոնդը, իսկ մյուս մա-
սը գնում է արտադրական նպատակների վրա՝ կոյունտեսությու-
նը յայնացնելու, նոր շինարարություն կատարելու և գործիքներ
դնելու համար:

Աղերը չեն ընդունում, վոր կոյունտեսությունը սոցիալիստա-
կան տնտեսության մի ձև է, վորն առաջանում է կապիտալիզմից
սոցիալիզմին անցնելու շրջանում պրոլետարական պետության
աջակցության և ղեկավարության շնորհիւ: Նա հիմնված է կոյ-
ունտեսականների միատեղ ալխատանքի և արտադրության մի-
ջոցների հանրայնացման վրա, վորից մի մասը պատկանում է
պետությանը մյուսը՝ կոյունտեսական սիստեմին, մյուս մասը՝
առանձին կոյունտեսություններին: Նա այն ամենապարզ և մատ-
չելի ուղին է, վորով մանր և ցրված գյուղական չքավոր—միջակա-
յին տնտեսությունները պրոլետարիատի ղեկավարությունը դնում
են իսկական և լիակատար սոցիալիստական տնտեսություն
ստեղծելու համար: Կոյունտեսությունը սոցիալիստական տիպի
տնտեսություն համարելն այն տեսական հիմնական յերակետն է,
վորը կուսակցությունը հակադրում է այդ մանր—բուրժուական
տնտեսություն համարող աջ և «ձախ» ուղորտունիստներին:

Կոյունտեսության սոցիալիստական բովանդակության ժրխա-
ման ավելի քան ցալաուն դերք են բռնել տրոցկիստները: Տրոց-
կիզմը ժխտելով կոոպերացիայի սոցիալիստական ձեռնարկ լի-
նելը, հետևողականորեն ժխտում է նաև նրա բարձր աստիճանը
արտահայտող կոյունտեսությունների սոցիալիստական բնույթը:

Տրոցկիզմը չի ընդունում Լենինի կոոպերատիվ պլանը և վոչ
էլ նրա սոցիալիստական բովանդակությունը: Նա մեր կոոպե-

բացիան պետկապիտալիստական ձեռնարկ է համարում. միտումն է կապիտալիզմի և մեր կոոպերացիայի տարբերությունը: Նրանց այս սխալը բխում է նկատի նախանշ համարելու, մեր հեղափոխության սոցիալիստական բովանդակությունը և մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորությունը ժխտելուց:

Ըստ Տրոցկու (ինչպես և փաստաբար Չայանովի և ուրիշների) կոլտնտեսություններում գյուղացիական տնտեսությունները վոչ միայն չեն փոխում իրենց մանր-բուրժուական բնույթը, այլ ընդհակառակը, այն ավելի լայն և շեշտված ձևով հանդես են բերում և ուժեղացնում: Կոլտնտեսություններում չքաղվորը և միջակը վոչ միայն չեն հաղթահարում իրենց մանր-բուրժուական բնույթը, այլ ուժեղացնում են: Ըստ Տրոցկու, կոլտնտեսությունները վոչ միայն սոցիալիստական չեն, այլ և կուլակային շահագործման քննի են, վարտեղ շերտավորումն ավելի ուժեղ է գնում, քան առաջ, վարտեղ բացարձակ շահագործումը փոխարինված է սեփական շահագործումով և նոր շահագործողների առաջացման նպատակով: Երբ և անդժված: Տրոցկու կարծիքով մեզանում իսկական կոլտնտեսությունները բացառություն են, իսկ կեղծ կոլտնտեսությունները կանոն, վոր՝ կոլտնտեսությունների մեծ մասը կեղծ կոլտնտեսություններ են:

«Իրությունը կուսակցության մեջ և ձախ ուղղիցիայի խնդիրները» հոդվածում Տրոցկին ասում է. «Ներկա արտադրության միջոցներով ապրանքային տնտեսության պայմաններում, կոլեկտիվներն անխուսափելիորեն պետք է առաջացնեն գյուղացի շահագործողների նոր շերտ: Արտակոլտնտեսական կուլակի վարչական ջանքերով վոչ միայն չի վերափոխում գյուղացիության տնտեսական հյուսվածքը, այլև չի կարող խանգարել կուլակությունը գարգալումը կոլտնտեսության ներքին: Հայտարարելով կոլտնտեսությունը սոցիալիստական ձեռնարկություններ, ներկայիս ղեկավարությունը գրանցում իսկ ասպարեզում է ներկայումս տական կուլակների քողարկումը»:

Իհարկե, այստեղ Տրոցկին բացարձակորեն զրպարտում է՝ կուլակության վորդես դասակարգի վերացումը սոսկ վարչական ակտ համարելով. ինչպես հայտնի չէ, միայն Տրոցկու մեթոդություններով առաջնորդվող «ձախ» շեղիչները հայտնաբերեցին կուլակությունը սոսկ վարչական միջոցներով վերացնելու «տաղանթ»:

Ինչպես հայտնի չէ, կուսակցությունը և նրա կենտկոմը դասեցին և կարգի հրավիրեցին տարածած «ձախ» ուղմինստրատորներին և ցույց տվին կուլակության գեմ արշավելու բայլչեիկյան արմատը: Նույնպիսի զրպարտություն է նաև, վոր մենք ունենք ներկայումս կուլակներ և այդ որինականացված է ու պարարտ հող է ստեղծված նրա զարգացման համար: Ինչպես հայտնի չէ, մենք կուլակներին կոլտնտեսություն չենք բնութաւում և անբնական դուռն ենք սողոսկածներին: Իսկ վոր տիպական կանոնադրություն հիման վրա կառուցված կոլտնտեսություններում

հնարավոր չէ նոր չահագործողների շերտի առաջացումը, դա պարզ է կոմունիզմի համար մարտնչող ամեն մի մարտիկի:

Տրոցկին կարծում է, վոր կոլտնտեսությունը սոցիալիստական ձեռնարկ համարելը վոչ թե պայմանավորված է նրա արտադրական հարաբերությունների բնույթով, այլ տակտիկական նշանակություն ունի և կուսակցությունը դրանով ուղղում է ըողարկել ներկայումս կուլակին: Իհարկե, կոլտնտեսության բնույթի հարցի նման լուծումը վոչ մի կապ չունի մարքսիզմ-լենինիզմի հետ, իսկ կուլակների ըողարկման մասին արած բարբալանքը միայն սոցիալական դեմագոգիա չէ, «ձախ» փետուրնեւրով վարագործելու համար:

Չէ վոր կոլտնտեսությունը կառուցվում է արտադրական հիմնական միջոցների հանրայնացման և համատարածի միջոցով կուլակության, վորպես դասակարգի, վերացման հիման վրա. չէ վոր ներկայումս կուլակի առաջացումը կանխված է կոլտնտեսական կանոնադրությամբ. չէ վոր, շնորհիվ բոս աշխատանքի բաշխման սկզբունքի, վերանում է անհավասարությունը կոլտնտեսության ներսում: Ուրեմն ինչպես կարող է տիպական կանոնադրության հիման վրա կազմված կոլտնտեսությունը կուլակի առաջացման պարարտ հող լինել, կամ շերտավորումն այստեղ ավելի արագ ընթանալ, քան առաջ: Տրոցկու հարցադրումը ցույց է տալիս, վոր նա ամբողջովին կորցրել է յերկու յիշերը մարքսիստորեն վերլուծելու և ուսումնասիրելու վերջին մեթոդները:

Ինչպես հայտնի չէ, ըստ Չայանովի և Չեխնցեվի, գյուղացիական տնտեսությունները կոլտնտեսության մեջ վոչ թե վերափոխում են իրենց մանր-բուրժուական բնույթը, այլ նրանց սանձարձակման և զարգացման ավելի լայն հնարավորություններ են ստեղծվում: Տրոցկու դատողությունների սոցիալական արմատները պարզելու համար շատ հետաքրքիր է այս մոմենտը. սոցիալիստական շինարարության յերգվյալ հակառակորդ, կապիտալիզմի վերականգնման դավերգու և կուլակության իդեոլոգ Չայանովն ու Չեխնցեվը կոլտնտեսության սոցիալական բնույթի մասին նույն կարծիքն են, ինչ Տրոցկին: Մենք կարծում ենք, վոր այստեղ ավելի շուտ Տրոցկին է կանգնել նրանց տեսակետի վրա, վորովհետև այդ նրանք ձևակերպված արտահայտել են Տրոցկուց շատ առաջ:

Վերջապես Տրոցկին կորցնելով մարքսիստական մտածողության վերջին նշույնները, հոգուտ կուլակի և համաշխարհային բուրժուազիայի հայտարարում է. «Եթե կոլտնտեսությունը տա նշանակալից ոգուտ փոշիացած տնտեսությունների համեմատությամբ, այս շերտավորումը կոլտնտեսություններում կչա ավելի արագ, քան եր միջն կիմա» (ուղղիցիայի բյուրետեն փետրվար-մարտ 30 թ.): Այստեղ է ասված «վերկիւ մեզ այսպիսի բարեկամներին, իսկ հակառակորդներին ինքներս կհաղթենք»: Այստեղ շատ հետաքրքրական է ձախության հավակնություն ունեցող Տրոցկու «յեթե»-ն: Նրա համար դեռ ապացուցված չէ մարքսիստա-

կան տնտեսադիտութեան աշխարհական սկզբունքը, վոր կոչուրն տեսութեանը շատ առաջնութեանը ունեն անհատականի նկատմամբ: Նա ժխտում է գլուղի սոցիալիստական վերակառուցման մարքա-լենինյան հիմնական ուղին: Իսկ յետ «հանկարծ» պատահեց, վոր աշխարհ յեղաւ, ապա կուլակ մի վատնա, ինտեր-վենցիոնիստներ, ձեր հոլոսերը մի կտրեք, աշխարհ «չերտաւորումն» ավելի արագ կընա, քան առաջ եր: Մանր-բուրժուական ռադիկալի այս դատողութեանը կողմնակցութեան բնույթի մասին միանգամայն բոլորովն են դեպի գլուղացիութեան ունեցած նրա հա-յացքից, այն մեթոդոլոգիայից, վոր նա բանեցնում է մեր հեղա-փոխութեան բնույթը և շարժիչ ուժերը պնդատելու գործում, այն տեսակետից, վոր մի յերկրում սոցիալիզմ կառուցել չի կարելի:

Յեթե յերբեմն տրոցիկստները չեն կարողանում բացերաջ փաստերին դեմ դնալ, ժխտել կամ սքողել կուսակցութեան դժի հաղթանակները, ապա նրանք բռնում են այդ նվաճումներին նշանա-կութեանը, արժեքը փոքրացնելու և նսեմացնելու ուղին: Նրանք փորձում են սալացուցել, վոր խորհրդային դիկտում տնտեսական և հասարակական հարաբերութեանները մեջ վոչ մի լուրջ փոխո-խութեան չի մտել: Վոր բեկումը և կոլեկտիվացումը քանակական նվաճումներ տվել են, բայց նրա վորակը, կշիռը և արտաբերողա-կանութեանը աշխարհին է, վոր սոցիալական վոչ մի լուրջ տեղա-շարժ չի առաջացրել: Վոր գլուղացիութեան մեջ վոչ մի կամավոր մասնակցական շարժում չկա, դեպի կողմնակցութեանը, այնպես վոր խոսել սոցիալիստական շինարարութեան հաղթանակի մասին գլուղատնտեսութեան մեջ անհիմն է:

ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԿՈՒԵՏԻՎ ՁԵՆԱՐԱՐՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Կարո՞ղ են արդե՞ր կապիտալիզմի պայմաններում աշխատավոր-ների կողմնակցութեանը կոլեկտիվ ձեռնարկները սոցիալիստական բո-վանդակութեան ունենալ, սոցիալիստական ուղիով զարգանալ: Ի-հարկե վոչ: Իսկ ինչն իսկ իսկապես եր մանր-բուրժուական կողմնակցութեանը, վորովհետեւ նրանք կարծում էին, վոր կո-պերացիան կապիտալիզմի պայմաններում պաշտպանում է աշխա-տավորութեանը կապիտալիզմից և հակադրվում է կապիտալիզմին: Վոր իբր թե նա զարգանալով կապիտալիզմի կողքին, աստիճանա-բար դուրս է վանում նրան և դրաւում տնտեսութեան դեկալար-բարձունքները: Վոր կողմնակցութեան չի յենթարկվում կապիտալիզմի զարգացման որեւէնքին, այլ հակակապիտալիստական ձեռնարկ է և ստեղծում է սոցիալիստական հարաբերութեաններ կապիտա-լիզմի պայմաններում:

Ինչինքն ֆանտաստիկ և սխալ է համարում հին կողմնակցա-տորներին, վորոնք յերազում էին «ժամանակակից հասարակակար-գը խաղաղ վերակառուցելու սոցիալիզմով, առանց հաշիւ առնելու աշխարհի հիմնական հարցեր, ինչպիսին է դատակարարային պայ-

քարի հարցը, բանվոր դատակարարի կողմից քաղաքական իշխանու-թեան գրավումը, շահագործողների դատակարարի տիրապետութեան տապալումը» (Լենին):

Մանր-բուրժուական կողմնակցութեանը այս տեսութեանը միայն մի իմաստ ունի՝ չեղել բանվոր դատակարարի և չքավորու-թեան ուշադրութեանը կապիտալիզմի դեմ անմիջական հեղափո-խական պայքար մղելուց, պատրանքներ սերմանել, վոր կապի-տալիզմից կարելի չի ազատվել և առանց հեղափոխական պայքա-րի—կողմնակցութեան միջոցով, վորն աստիճանական զարգացման կարգով մեղ կիտանցի սոցիալիստական հասարակակարգ:

Ինչ կասեմք, վոր կողմնակցութեան կապիտալիզմի պայմանե-րում անխուսափելիորեն յենթարկվում է կապիտալիզմի զարգաց-ման որեւէնքին և հանդիսանում է կապիտալիստական ձեռնարկ-ների տեսակներից մեկը: «Կապիտալիզմի կապիտալիստական պե-տութեան պայմաններում կապիտալիստական կոլեկտիվ իմաստը ե հանդիսանում»: «Մասնավոր կապիտալիզմի պայմաններում կողմնակցութեանը կապիտալիզմի տարբերվում են կապիտալիստականից, ինչպես կոլեկտիվ ձեռնարկները մասնավոր ձեռնարկներից» (Լենին) — կողմնակցութեան մասին: Այսպիսով կապիտալիզմի պայմանե-րում կոլեկտիվ ձեռնարկները տարբերվում են կապիտալիստական ձեռնարկներից միայն իրենց կոլեկտիվ լինելով: «Մանր արտա-դրողների կողմնակցութեան անխուսափելիորեն առաջացում է մանր-բուրժուական, կապիտալիստական հարաբերութեաններ, ոժանդա-կում է նրանց զարգացմանը, առաջին պլանի վրա չի փաշում կա-պիտալիստներին, նրանց է ավելի շատ ոգուտ տալիս» (Լենին): Այսպիսով կապիտալիզմի պայմաններում կողմնակցութեան կուլակա-յին ընդ են, նրանց են ոգուտ տալիս, նրանք են դրանց միջոցով վաճառում իրենց ապրանքները:

Յենթադրենք Ամերիկայում մի խումբ միջակ և չքավոր դի-կացիներ կարճեցին կոլեկտիվ տնտեսութեան: Դա կլինի՞ սոցիա-լիստական տիպի տնտեսութեան, թե վոչ: Ձի լինի, վորովհետեւ՝

ա) Ձիա պրոլետարական դիկտատուրան իր սոցիալիստական ներգործող, կազմակերպող և վերափոխող ուժով:

բ) Ձիա հետեւողական սոցիալիստական արդյունաբերութեանը, վորի հետ կապ պահպանելու և ոժանդակութեան ու դեկալարու-թեան ստանալու միջոցով նա կդառնա սոցիալիստական:

գ) Ձիա կոլլեկտիվային այն կանոնադրութեանը, վորի սահմա-նում կանոններն անհնար են դարձնում շահագործումը և անհա-վատարութեան անումը անհնար են դարձնում շերտավորումը և ան-հատական կուսակցութեան:

դ) Վորովհետեւ «մանր արտադրողների մասնաշաղկան կոլեկ-տիվ շարժումը, առաջին՝ կարող է առաջանալ միայն պրոլետա-րիատի դիկտատուրայի պայմաններում, յերկրորդ՝ կարող է սո-ցիալիստական բովանդակութեան և զարգացման սոցիալիստական տեղեկանքներ ստանալ միայն բանվոր դատակարարի կողմից դեկալար-վելու դեպքում»: Ապա ի՞նչպիսի տնտեսութեան կլինի վերահի-շյալը: Դա կլինի մանր սեփականատերերի միացրած տնտեսութեան:

մանր-բուրժուական տնտեսափարութեան կոլեկտիվ ձև, բուրժուական-չափազործողական տնտեսութեան զառնարու հետևակարող: Սյուտեղ արտադրական հարաբերութեան շին փոփոխում: Կոլեկտիվի յեկամուտը բաշխվում է ըստ մուտքի և փայլի: Իսկ սա-չափազործողական հարաբերութեան շին ամենապարարտ հոգն է: Կապիտալիզմի պայմաններում մանր արտադրողների միացումն առաջացնում է կապիտալիզմական կոլեկտիվ ձեռնարկներ:

Մարքսն սկզբունքորեն, արտադրական հարաբերութեան շին ամենակետից, վոչ մի տարբերութեան չի դնում (կապիտալիզմի պայմաններում) կոլեկտիվ և անհատական ձեռնարկների միջև: Բնութագրելով մանր-գյուղացիական տնտեսութեան տիպը և արտադրական հարաբերութեան շին, Մարքսն ասում է՝ «արտադրութեան կապիտալիստական յեղանակի պայմաններում անկախ գյուղացին և արհեստավորը բաժանվում են յերկու մասի: Վորպես արտադրութեան միջոցների տեր, նա կապիտալիստ է, վորպես բանվոր՝ նա իր սեփական վարձու բանվորն է: Նա վճարում է իրեն իր աշխատավարձը փորպես կապիտալիստ, չափ և ստանում իր կապիտալից, այսինքն ինքն իրեն չափազործում է»: (Մարքս-Հակելյալ արժեքի տեսութեանը, մաս 1-ին, էջ 225): Իսկ կոոպերատիվ ձևը նարկներ և նրանց անդամների մասին ասում է. «բանվորները վորպես ասոցիացիա հանդիսանում են իրենց սեփական կապիտալիստները, այսինքն ոգտագործում են արտադրական միջոցներն իրենց սեփական աշխատանքն ոգտագործելու համար» (Կապիտալ, հատոր 3-րդ, էջ 343):

Կապիտալիզմի պայմաններում գյուղատնտեսութեանը յենթարկվում է կապիտալիզմի զարգացման որենքներին, «վորովհետև գյուղը, գյուղացիական տնտեսութեանը, կախման մեջ է քաղաքից, ինդուստրիալից, քաղաքում և նրա տնտեսական միջոցներից: Բնութագրելով (Մարքս)՝ նա յենթարկվում է կապիտալիստական քաղաքին, «վորտեղ թագավորում է բուրժուազիան, կապիտալիստական արդյունաբերութեանը, կապիտալիստական պետական իշխանութեանը» (Մարքս, Լենինիզմի հարցերը): Սյուտիսի պայմաններում մանր արտադրողների կոոպերացիան ևս յենթարկվում է կապիտալիզմին, զարգանում նրա որենքների համաձայն:

ԿՈՒՆՏԵՍՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Ամեն մի տնտեսութեան արտադրական հարաբերութեան շին բնույթը վորոշվում է մարդկանց դեպի արտադրութեան միջոցներն ունեցած հարաբերութեամբ: մեզ անհրաժեշտ է պարզել, թե կոլեկտիվացման հետևանքով գյուղացիների տարբեր շերտերի հարաբերութեան ինչպես է փոխվում դեպի արտադրութեան միջոցները:

Նախկին մանր արտադրողը կոլտնտեսութեան մտնելով, փոխվում է իր հարաբերութեանը դեպի արտադրութեան միջոցները նրանով, վոր անհատական աշխատանքի գործիքները դարձնում է հասարակական-կոլեկտիվ աշխատանքի զենք, մեկուսացած ան-

հատ աշխատավորի աշխատանքը դարձնում է հասարակական-կոլեկտիվ աշխատանք, շնորհիվ կոլեկտիվորեն ոգտագործվող արտադրական միջոցների: Իսկ սա փոխում է նաև սեփականութեան ձևերը և առաջացնում բաշխման տարբեր յեղանակ:

«... Մանր արտադրողը վերափոխվում է կոլեկտիվ արտադրողի՝ շնորհիվ իր արտադրութեան միջոցների փոխանցման, անհատականից կոլեկտիվ սեփականութեան և իր բանվորական ուժի ոգտագործման կոլեկտիվ արտադրութեան պրպեսով: Հետևապես կոլեկտիվորեն կազմակերպված բանվորական ուժը և կոլեկտիվ արտադրական միջոցները նախկին անհատական արտադրողի սոցիալիստական զարգացման անմիջական հատկանիշներն են: Իսկ արտադրական միջոցների կոլեկտիվացման և անդամների բանուժի կոլեկտիվ տնտեսութեան մեջ ներգրավելու աստիճանն ուղղակի ցուցանիչ է ծառայում այն բանի, թե նախկին անհատական արտադրողը զարգացման տվյալ մոմենտում վոր՞չափով է արդեն վերափոխվել կոլեկտիվ արտադրողի» (Նա ագրարնում Փրոտես № 3, 1931 թ.):

Կոլտնտեսականի սոցիալական բնույթը վորոշելու համար անհրաժեշտ է պարզել, թե դեպի արտադրական միջոցներն ունեցած վերաբերմունքի և արտադրական հարաբերութեան շին գծով ինչ տարբերութեան կա վոչ-կոլտնտեսական գյուղացիների և կոլտնտեսականների (արտել) միջև: Սյուտարբերութեանը հիմնականում հետևյալն է.

1. Կոլտնտեսութեան շիններից դուրս գյուղացիների միջին անհալ վասալությունը դասակարգային-անտագոնիստական բնույթ ունի: Նա հիմք է ծառայում կապիտալիստական հարաբերութեան շին առաջացման և զարգացման համար, լինելով դասակարգային շերտավորման հետևանք՝ նա հիմք է ծառայում նրա խորացման և անհալասարութեան հետագա աճման համար: Կոլտնտեսականների անհալասարությունը դասակարգային անտագոնիստական բնույթ չունի, նա հիմնականում կոլեկտիվ արտադրութեան մեջ ներգրավված աշխատավորների իմքակալին անհալասարությունն է, վորից կապիտալիստական-չափազործողական հարաբերութեան շին առաջանում, շերտավորումը վոչ միայն չի ուժեղանում, այլև վերանում է:

2. Կոլտնտեսականներն արտադրական միջոցների, աշխատանքի հանրայնացման, բաշխման և աշխատանքի կազմակերպման գծերով հիմնականում սոցիալիստական արտադրական հարաբերութեան շին մեջ են իրար հանդիպ: Իսկ մենատնտեսատեր մեկուսացած աշխատավորն այս հարցերում հակադրվելով մյուսներին, դտնվելով մանր-բուրժուական հարաբերութեան շին շրջանակում՝ կապիտալիզմին սնուկ տվող պարարտ հող է հանդիսանում:

3. Կոլտնտեսականն արտադրական հիմնական միջոցները հանրայնացրել է. կոլեկտիվ սեփականութեան և դարձրել: Բոլոր կոլտնտեսականները միեկուն հարաբերութեան մեջ են գտնվում դե-

պի արտադրութեան միջոցները և այս դժուր իրար չեն հակադրու-
վում: Մինչդեռ մենատնտեսատեր աշխատավորներն արտադրու-
թեան միջոցներէ մասնավոր սեփականատեր լինելով՝ հակադրու-
մէ մշտնեղեն:

4. Վոչ-կոլտնտեսական դյուզացին անհատական մանր արտա-
դրող է, օրրանքակալիստական տնտեսական կրող, նա իր
այս կողմով դաշնակցում է կապիտալիզմին և հակադրվում պրո-
լետարիատին: Կոլտնտեսականը հիմնականում դադարել է մտնը
ապրանքարտադրող լինելուց: Նա վոչ միայն հրաժարվել է ալ-
րանքակալիտալիստական տնտեսականից, այլև համար պայքար
է մղում նրա դեմ, աշխատում է դուրս վանել նրա մնացորդները
կոլտնտեսութուններից և վերացնել դեռևս իր մեջ պահպանված
տնտեսական այդ ուղղութեամբ:

5. Ենթակի արտադրութեան միջոցներէ մասնավոր սեփակա-
նութեան, մեկուսացած, մանր արտադրող աշխատավոր լինելուն
և ալրանքակալիտալիստական ու աշխատավորական տնտեսա-
ների բաղադրանք, վոչ-կոլտնտեսական դյուզացին անվերջ տատա-
վում է սոցիալիզմի և կապիտալիզմի միջև, գտնվում է «յերկու վա-
ղու» պայթելի և հակասութեան ցանցի մեջ:

Կոլտնտեսական դյուզացին լինելով հիմնականում կոլեկտի-
վ արտադրող, հայեցակէքով իր մանր-բուրժուական սահմանա-
փակվածութեան հիմնական դժվարութեանները, կուլակի դեմ մղու-
թած վճռական պայքարում կոլտնտեսութեան մտնելով, հիմնակա-
նում դադարեց սոցիալիզմի և կապիտալիզմի միջև տատանվող լի-
նելուց:

Նրա աշխատավորական և ալրանքակալիտալիստական տն-
տեսականի պայքարի հետևանքը առաջինի հաղթանակը յեղով
յերկու ուղիով: «յերկու վոչ» պայքարը վորդից սոցիա-
լիզմի ուղին: Նա անցնելով պրոլետարիատի սոցիալիստական դիր-
քերը՝ հակադրվում է իր նախկին դիրքերում դեռևս համարող-
ներին:

6. Վոչ-կոլտնտեսական դյուզացին ամբողջովին անհատական
տնտեսութուն է վարում՝ սրանից բխող բոլոր հետևանքներով:

Արտելի անդամը միայն մասնակի անհատական տնտեսութուն
ունի, վորը յերկուրդական դեր է խաղում ստացած յեկտարի
ամբողջ գումարի մեջ: Թոսելով արտելի անդամի անհատական
տնտեսութեան մասին՝ պետք է միշտ նկատի ունենալ նրա արտա-
դրական սահմանափակ հնարավորութեանները: Հաճախ այդ մնա-
ցորդները պայմանավորված են լինում տեխնիկական-կազմակերպ-
չական նկատառումներով՝ այն, վոր արտելը դեռ պատրաստ չէ
այդ հանրայնացնելու, վոր գլխավորն է, նրանց արտադրական
հիմքերը մեծ չեն: Այդ տնտեսութեան ամենաեղանակ և սոցիալա-
կան նշանակութուն ունեցող մասն անհատական արտադրական մի-
ջոցներն են: Հայտնի չէ, վոր նրանց հիմնական մասը կոլեկտի-
վացված է, իսկ չհանրայնացվածը յերկուրդական նշանակութուն
ունի:

Յ. Խոստամենայնով սխալ կլիներ անտեսել թեկուզ այդ մնա-
ցորդները, վորովհետեւ «անդամների անհատական արտադրական
միջոցները հանդիսանում են մասնատիրական տնտեսականի ուժի
իրացած արտադրութեանը կոլտնտեսութեանում և կարող
են բազա ծառայել հետագայում վոչ թէ կոլեկտիվ, այլ անհատա-
կան տնտեսութեան վերարտադրութեան համար և սրանով իսկ լայ-
նացնել կոլտնտեսութեան դարգացման հիմնական սոցիալական
հակասութեանը» (Նա աղբարնում ֆրոնտե № 3, 1931 թ.):

Կոլեկտիվ մտած չքալորն իրեն ապատում է պրոլետարացման,
պառնակիցացիայի վտանգից: Նա վտաք է դնում ինքնաբացա-
ման ուղին՝ վորպէս բանիւր դասակարգի և միջակ դյուզացու
միջին շերտ: Նա կոլտնտեսութեան մտնելով՝ դանց է անում քա-
ջայումն ու աղքատացումը, վորք է դնում սոցիալիստական տրն-
տեսութեան աշխատավոր դառնալու ուղին ու ձեռնամուխ է լինում
իր մանր-բուրժուական հատկութեանների դեմ պայքարելու գոր-
ծին: Նա կոլտնտեսութեան մեջ դադարում է կիսապրոլետար լինե-
լուց, դառնալով կոլեկտիվ արտադրական միջոցների սեփականա-
տեր: Նրա սոցիալական նախկին հատկութեաններն սկսում են մա-
հանալ: Սակայն նա դեռևս սոցիալիստական տնտեսութեան աշխա-
տավորի կատարյալ տիպ չէ: Ուստի է սկսում իր նախկին սոցիա-
լական տիպից այդպիսին դառնալու ուղիով ընթանալ: Ուստի գտնվում
է իր սոցիալ-տնտեսական ելուքում լիովին փոխակերպվու-
թեանում:

Կոլտնտեսութեան մտած միջակն ապահովում է իրեն քա-
ջայումից և պրոլետարացումից: Վճռականորեն ձեռնարկում է իր
նյութական և կուլտուրական դրութեան բարելավմանը, կանգնում
է իր մանր-բուրժուական սահմանափակվածութեան հաղթահար-
ման և մասնատիրական հոգեբանութեան ու տնտեսական վերաց-
ման ճանապարհին: Նա ինքն է լծվում իր սոցիալիստական վերա-
դաստիարակման ու կերպարանափոխման գործին: Կամավոր կեր-
պով պրոլետարիատի դեկավարութեամբ ալրում է այն կամուրջնե-
րը, վոր կարող են վերադարձնել մասնատիրական և մանր-ապրան-
քային արտադրութեան սխառեմին: Մտնելով կոլտնտեսութեան, մի-
ջակ գյուղացին ժխտում է իրեն վորպէս մանր արտադրողների դա-
սակարգ, աստիճանաբար դադարում է մանր բուրժուա լինելուց և
վերափոխվում է կոլեկտիվ տնտեսութեան աշխատավորի: Կոլտն-
տեսական միջակն անցողիկ սոցիալական տիպ է, նա թեւակոխել է
մանր արտադրողների դասակարգի մահացման և սոցիալիստական
տնտեսութեան աշխատավորի ուղին:

Սակայն միանգամից չէ, վոր նա դադարելու չէ մանր արտա-
դրող, մանր բուրժուա լինելուց: Անցնելով կոլտնտեսութեան
դռնից, միջակը դեռևս վորոշ չափով պահպանում է իր նախկին
սոցիալական ելուքները: Նա վերանալով վորպէս մանր արտա-
դրողների դասակարգ՝ ձեռք է բերում սոցիալիստական աշխատա-
վորի նոր հատկութեաններ, սակայն դեռևս վերջնականապէս չի
ազատվել իր դասակարգային բոլոր հատկութեաններից և սոցիա-
լիստական տնտեսութեան աշխատողի տիպ չի դառնել:

«... Սխալ կլինե՞ր կարծել, թե կոլտնտեսությունների անշարժական արդեն սոցիալիստներ են դարձել: Վա՛յ, կարի՛կ կա դեռևս շատ աշխատանք կատարելու, վարպետի մշակեմ կոլտնտեսական գյուղացուն, շտկեմ նրա ինդիվիդուալիստական հոգեբանությունը և պատրաստեմ նրանից սոցիալիստական հասարակություն իսկական աշխատավոր: Իսկ այդ կատարվի այնքան արագ, վա՛րժան աշխատե՛լ մեքենայացվեն, վարժան արագ տրակտորացվեն մեր կոլտնտեսությունները» (Ստալին, ճառ մարքեթստ ագրարիկներին համագումարում):

Մարքեթիզմն ուսուցանում է, վոր կեցությունն է վորոշում գիտակցությունը: Անկասկած նոր հասարակական և տնտեսական կեցությունը կփոխի նաև կոլտնտեսություն մտած դյուզացու գիտակցությունն ու հոգեբանությունը, նրան կդարձնի սոցիալիստ: Սակայն այս պրոցեսը միանգամից չի կատարվում, սա ձեռք կբերվի յերկարատև աշխատանքով:

Կոլտնտեսականին մենատնտեսատերից տարբերող այդ շատ երկան հատկանիշները դեռևս նրան «սոցիալիստ չեն դարձնում»։ Ըստ դեռևս սոցիալիստական տնտեսության լիակատար աշխատողների տիպ չի:

Արտելի անդամին իր նախկին սոցիալական տիպին հետ կապող մի շարք արտադրական, գաղափարական, հոգեբանական մոմենտներ և և վորոշվե՞նք դեռ յերկար մամանակ իրենց զգալ կտան կոլտնտեսության մեջ: «Հրաշք կլինե՞ր, յեթե միանգամից, մեկ կամ յերկու տարում յերեկվա մանր տնտեսատեր գյուղացին, վորի մեջ տատնակ սերունդների ընթացքում ստեղծվել են վորոշ հակումներ, սովորություններ, մտածելակերպ, վոր ալ գյուղացին միանգամից դառնար հանրայնական տնտեսության ձրինակելի աշխատող: Նա պետք է արտելում անցնի հասարակական աշխատանքի գլորցը, նա պետք է դործավարձային սխտեմի, յեկամուտն ըստ աշխատանքի բաշխելու, հարվածայնության և սոցիալիստական մրցակցության հիման վրա, վոր կոլտնտեսականին շահադրագուծ է իր աշխատանքի արդյունքով, ընտելանա հասարակական տնտեսությանը... Դեռևս տեղի կունենան դեպի աշխատանքը, դեպի հասարակական տնտեսության յեկամուտները կորոդողական վերաբերմունք ունենալու հաղարավոր դեպքեր: Տեղի կունենան դեռ հաղարավոր դեպքեր, յերբ կոլտնտեսականները հասարակական աշխատանքի վրա կնայեն վորպես ոտարի աշխատանքի, կնկատեն այն վորպես մի աշխատանք, վոր «պետք է գլխից մի կերպ ռադանի», վորից պետք է վորքան կարելի յե՛ շատ կորդել և այնուհետև փախչել» (Յակովլև, գեկուցում խորհուրդների 6-րդ համագումարում):

16-րդ համագումարում, կոլտնտեսական շարժման և գյուղատնտեսության վերելքի մասին արած իր գեկուցման մեջ ընկ. Յակովլևն ասում է՝ «Չի կարելի իդեալականացնել արտելի անդամներին. արտելի անդամը յերեկվա մանր տնտեսատերն է, մանր սեփականատերը: Դատկերացրե՛ք ձեզ նրա հոգեբանությունը:

Հասկանալի յե, վոր սկզբում նրա մտքերը հաճախ ուղղված կլինեն այն նպատակին, գործեցի շունչ զաշի մանր տնտեսության զայլաշի աշխատանքից, թափ տա իրեն, կյանքի ավելի բարեքներ վերցնի, վոր չի տեսել մանր տնտեսության մեջ, վորը կարող է տալ արտելը: Նա հաճախ կաշխատի գուրի, ծուլանալ, աշխատանքն ուրիշներին վրա գցել և այլն: Այս յերեկվային անկասկած յերկար ժամանակ լուրջ բնույթ կկրի և շատ տարածված կլինի»:

Ներկայիս արտելի անդամները նախկինում մանր արտագրող գյուղացիների տարբեր կատեգորիաներն են կազմել: Միջակի, չքավորի և բաղրակի սոցիալիստական վերափոխման յենթակա հյուսվածքը, տարբեր միջնույն կազմն ու չափը չունեն: «Քանի վոր միջակն ավելի շատ անհատական տնտեսություն ունի, քան թե չքավորը, սրա հետևանքով սրան (չփափորները) արագ կվերացնեն մանր-սեփականատիրական նախապաշարումները, մյուսները (միջակները)՝ դանդաղ. սրան (միջակները) շատ կենթարկվեն կոլակաշին ներգործության, մյուսները (չփափորները)՝ քիչ, սրան (միջակները) շատ կփաշեն անհատական տնտեսության գաղափար կողմը, մյուսները (չփափորները)՝ քիչ» (Յակովլև, գեկուցում 16-րդ համագումարում):

Այս նշանակում է, վոր սոցիալիստական կերպարանափոխման գծավորության իմաստով՝ կոլտնտեսականները հետևյալ աստիճանականությամբ են դասավորվում. — միջակ, չքավոր, բաղրակ: Կոլեկտիվացման պրոցեսի խորացման գուրահե՛ք՝ այդ կերպարանափոխման պրոցեսը ևս մի աստիճանից մյուսին է անցնում և սրա հետ մեկտեղ կոլտնտեսականներն ավելի բյուրեղանում են վարպետ սոցիալիստական միասնական տիպ և կարգում միմյանցից տարբերող իրենց գծերը:

Կոլտնտեսական տարբեր եռապնեղում տարբեր է լինում նաև կոլտնտեսականի սոցիալիստական վերափոխումը: «Հիմնականում կարելի յե նշել սոցիալիստական վերափոխման պրոցեսի հետևյալ յերեք ստադիաները:

Առաջին ստադիան նշանակում է շերտափոխման այնպիսի աստիճան, վորտեղ մանր արտագրողը և շահագործվող պրոլետարները թույլ են շաշափվում սոցիալիստական հարաբերությունների նոր տիպով և իրենց մասնատնտեսական կապերով դեռ պահպանում են մինչ կոլեկտիվացումն իրենց սոցիալական բնույթին հատուկ բնորոշ գծերը: Չարդացման այս աստիճանին հիմնականում համապատասխանում է կոլեկտիվ տնտեսության ստորին ձևը՝ համայնականորեն հող մշակող ընկերությունները: Հենց սրա համար էլ կոլեկտիվ շարժման առաջին շրջանում, յերբ միջակն իր համար ընդունելի յե համարում գլխավորապես առաջին ստադիան, ընկերություններն առավել չափով տարածումն են ստանում, ալապիսով հանդիսանալով այն ձևը, վորտեղ արդեն սկսվում են նախկին մանր սեփականատերերի սոցիալիստական վերափոխումը, բա՛ց վորտեղ մեծ չափերով դեռ պահպանվում են մասնատնտեսատիրական

Հայրաբերությունների տարբերը» (Նա աղբարնում ֆրոնտե № 3, 1931 թ.):

Այսպիսով, առաջին ստադիայում կոլտնտեսականները մասնա-
կիսված ընդգրկվելով կոլեկտիվ արտադրության մեջ, հիմնական-
ում մնում են անհատական-մանր արտադրող, վորն ստանալով
կոլեկտիվ արտադրութունից վորաջ բաժին, իր յեկամտի հիմնական
և գլխավոր մասն ստանում է անհատական արտադրությունից:

«Վերափոխման 2-րդ ստադիան հետևյալն է, զարգացման
ավելի բարձր աստիճանը, վորտեղ արդեն սկսում է ջնջվել նախ-
կին միջակի և չփավորի միջի յեզրը, բայց դեռ պահպանվում են
մասնատնտեսատիրական կապերի տարբեր միջակային և չբավորա-
կան խմբակներում, վորպես կոլեկտիվ տնտեսության հատկում,
իրենց մոտ մնացած անհատական տնտեսության շնորհիվ» (Նույն
տեղ): Այսպիսով, յերկրորդ ստադիայում հիմնականում կոլտնտե-
սականներն ընդգրկվում են կոլեկտիվ արտադրության մեջ, մաս-
նակիորեն մնալով կապված անհատական արտադրության հետ:
Յրանց յեկամտի գլխավոր և հիմնական մասն ստացվում է կոլեկ-
տիվ արտադրությունից, սակայն ստանում են յեկամուտ նաև ան-
հատական տնտեսությունից, բայց վերջինս յերկրորդական տեղ է
գրավում:

«Վերջապես վերջին, զարգացման յերրորդ ստադիան հետե-
վանք է անհատական արտադրության և մասնատնտեսատիրական բու-
լար տեսակի կապերի լրիվ անհետացման: Կոլտնտեսական գյուղա-
յին յանկան նախկին սոցիալական պատկանելությունից (բաժնակ, չբավոր, միջակ) վերածվում է լրիվ կոլեկտիվ արտադրողի միաս-
նական սոցիալական տիպի, իսկ սրա համապատասխան էլ գյուղա-
տնտեսական արտելը վերածում է շարժման ամենարարձր ձևի-
գյուղատնտեսական կոմունայի» (Նա աղբարնում ֆրոնտե № 3, 1931
թիվ): Յերրորդ ստադիայում կոլտնտեսականն ամբողջովին ընդ-
գրկվում է կոլեկտիվ արտադրության մեջ, խզելով մանր արտա-
դրության հետ իրեն կապող բոլոր գծերը. սրանց յեկամտի միակ
աղբյուրը կոլեկտիվ արտադրությունն է:

Այսպիսով, կոլտնտեսականի սոցիալիստական վերափոխման
աստիճանի վորոշման հիմնական հատկանիշը և մեթոդորգիական
մեկնակետը նրա հասարակական-կոլեկտիվ արտադրության մեջ
ներգրավվելու և արտադրության նախկին սիստեմից կտրվելու
չափի մեջ է կայանում: «Այսպիսով, կոլտնտեսության անդամի սո-
ցիալական դեմքը պետք է վորոշվի նախ՝ նախկին մանր և մանրա-
գույն արտադրողին սոցիալիստական տիպի հարաբերությունների
շրջանակի մեջ ներգրավելու աստիճանով, յերկրորդ՝ անհատական
արտադրության մնացորդների չափով, յերրորդ՝ անհատական
արտադրության գծով շրջապատի բնակչության հետ ունեցած
փոխհարաբերության բնույթով» (Նույն տեղը):

Կոլտնտեսություն մտնելը պայմանավորում է յերեկվա մանր
արտադրողի զարգացման նոր՝ սոցիալիստական ուղին: Իսկ սա
նշանակում է՝ սկիզբ դնել նաև նրա սոցիալական բնույթի հիմ-

նովին վերափոխմանը: «... Գյուղացիական մասսայի մեջ բեկում է
առաջացել, վորի հետ մեկտեղ գյուղացիական մասսան սկսել
է դառնալ կոլտնտեսական մասսա: Սրանով իսկ սկսել է փոխվել
նախկին գյուղացու հասարակական կերպարանքը: Մանր սեփա-
կանատերի դարավոր ավանդությունների և սովորությունների դան-
դալ վերացումով հանդերձ մեր գյուղացի կոլտնտեսականը շատ հե-
ռու յե նրանից, ինչ նա յեղել է առաջ: Վորչ, կոլտնտեսականներից
ստեղծվում է նոր սոցիալիստական տիպի՝ հասարակական շերտ
և այդ կոլտնտեսականներին այլևս չես վերադարձնի նախկին վո-
րումելի մանր-բուրժուական կյանքին: Նրանք սլոնում են առաջ
դեպի սոցիալիզմ» (Մոլոտով, զեկուցում խորհուրդների 3-րդ հա-
մագումարին):

Ինչպես բանվոր դասակարգը գրավելով իշխանությունը և
տիրանալով արտադրական միջոցներին «դադարում է բանվոր դա-
սակարգ լինելուց, այդ խառնի միշտ գիտական առումով» (Մոլո-
տով), այնպես էլ կոլտնտեսության ուղին բռնած և արտադրական
միջոցները համայնացրած գյուղացին կորցնում է «նախկին գյու-
ղացու հասարակական կերպարանքը» (Մոլոտով): Այստեղ փայտուն
կերպով ազդեցություն է հնի անհետացման և նորի առաջացման
պրոցեսը հասարակական, դասակարգային հարաբերությունների
բնագավառում:

Արտելի անդամն անցնելով կոլտնտեսության շեմքից, ձեռք
է բերում և աստիճանաբար պիտի զարգացնի նոր՝ սոցիալիստա-
կան հատկություններ և համառ ու յերկրամյա պայքարի միջո-
ցով պիտի վերացնի դարերով ժառանգած մանր սեփականատիրա-
կան սովորությունները: Այդ նշանակում է, վոր կոլտնտեսականը
վարպես սոցիալական տիպ, կոլտնտեսական ներկա ետացում հա-
կասական միասնություն է: Կոլտնտեսական լինելու հանգամանքով
նա մտնում է հանրային արտադրության և սոցիալիստական հարա-
բերությունների շրջագծի մեջ, դեռևս չհանրայնացված տնտեսու-
թյան շնորհիվ նա անհատական արտադրող է, վորը մասնակցում
է աշխատանքի հասարակական բաժանմանը նրա ապրանքային ձե-
վի միջոցով:

Սա նշանակում է, վոր կոլտնտեսականը դադարելով Նախկին
մանր արտադրողի սոցիալական տիպ լինելուց, դեռևս չի դառնել
«կոլեկտիվացված գյուղի աշխատավորների միասնական ջակատի»
անդամի սոցիալական տիպը: Նա իր մեջ ամփոփելով վերջինիս
զարգացող դեմքը և առաջինի անհետացող հատկությունները՝ այս
յերկուսի պայքարով ու հատկությամբ էլ պայմանավորում է իր
սոցիալական ելույթյունը: Կոլտնտեսականը նոր, անցողիկ սոցիա-
լական կատեգորիա յե, վորը մի կողմից բնորոշվում է սոցիալի-
տական հարաբերությունների մեջ ներգրավվելու աստիճանով,
մյուս կողմից նախկին, մասնատիրական հարաբերությունների
մնացորդների չափով ու Երանց վերացման աստիճանով:

Կոլտնտեսությունների (արտել) զարգացման ներկա շրջա-
նում ներկայիս կոլտնտեսական նախկին միջակը, չբավորը և
բաժնակը պահպանում են իրենց նախկին սոցիալական տիպի հետ-

«Բերն այն չափով», վարձանով գոյութիւն ունի կոլեկտիվ արտա-
դրութեան կողմէն նաեւ անհատական արտադրութիւն: Վարձան
շատ է անհատական արտադրութեան չափը, այնքան մեծ և զգալի
յեւն սոցիալական անցյալի մնացորդները: Վորքան շատ է կոլեկտիվ
արտադրութեան բաժինը, այնքան աննշան են անցյալի հետքերը:
Ներկայիս կոլտնտեսական նախկին բատրակը բացի կոլեկտիվ
արտադրութեան մեջ աշխատելուց, յերբեմն վաճառում է իր բան-
վորական ուժը կոլտնտեսութեանը՝ դուրս՝ մենատնտեսու-
թեան: Վարձան շատ է այդ վաճառման չափը, այնքան շատ են
նրան իր անցյալի հետ կապող մնացորդները: Նրա պակասեցման
դուրսհանումը նաեւ այդ մնացորդները:

Սա նշանակում է, վոր միանգամից չէ, վոր ներկայիս կոլ-
տնտեսականները խողովակով իրենց սոցիալական անցյալը՝ ուկտ-
է կոլեկտիվ արտադրողների սոցիալատական ընտանիքի լիակա-
տար անդամը դառնան: Նրանք գտնվում են վերամշակման պրո-
ցեսի մեջ: Վորք չափով պահպանելով իրենց նախկին սոցիալական
տիպը՝ նրանք վնասակար և վորքող քայլեր են արել սոցիալիստա-
կան տնտեսութեան աշխատավորի տիպ դառնալու ուղղութեամբ:
Կոլեկտիվ մասած բատրակն ալիւս բատրակ չէ: Նա արտադրութեան
կոլեկտիվ միջոցների տեր է: «Ինչ վերաբերում է կոլտնտեսու-
թեանը՝ դրանով միջակներին և չքավորներին, ապա կոլտն-
տեսութեան մեքենայացման և տրակտորացման դուրսբերումը»
նրանք կմիաձուլվեն և կկազմեն կոլեկտիվացած գյուղի աշխատա-
վորների միասնական ջոկատը: Դրան համարատարադրան, ապագա-
յում մեր լոգոնդներին պետք է վերանան «միջակ» և «չքավոր»
հասկացողութեանները» (Ստալին: «Պատասխան սվերդլովցիների
հարցերին»):

Կոլտնտեսականի սոցիալական դեմքը բնորոշվում է նրանով,
վոր նա հիմնականում կոլեկտիվ արտադրող է: Այս նշանակում է,
վոր նա ալիւս նախկինը չէ: Բայց նա սոցիալիստական-կոլեկտիվ
արտադրութեան աշխատավորի լիակատար տիպն էլ չէ: Նա գըտ-
նելում է առաջինից յերկրորդին փոխանցվելու պրոցեսում, բնդվո-
րում այդ փոխանցման պրոցեսում նրա բնույթը վորքելու հիմնա-
կան չափանիշը կոլեկտիվ արտադրող լինելուց բղխող նախա-
դրյալներն են:

ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԸ ՆՈՐ ԴԱՍԱԿԱՐԳ ԶԵՆ ԿԱԶՄՈՒՄ

«Պրավդայի» ապրիլի 20-ի համարում Դավ. Լուրեն դրում
է՝ «Գյուղացի կոլտնտեսականներն իզուր չէ, վոր գյուղացի կո-
լումն են կրում: Նրանք պրոլետարներ չեն դառել, նրանք դեռ
շարունակում են մնալ դասակարգ, վոր տարբերվում է պրոլե-
տարիտից, բայց գնում են նրա հետ ձեռք-ձեռքի և նրա ղեկա-
վարութեամբ՝ վորպէս նրա հիմնական և գլխավոր հենարան»: Վոր
կոլտնտեսականները տարբերվում են պրոլետարիատից՝ սա կա-
կածից վեր է, վոր նրանք պրոլետարիատի ղեկավարութեամբ են
առաջ դնում, վոր նրա գլխավոր հենարանն են, սա ևս կասկածի

յեթեղ չէ: Բայց ստել, վոր նրանք կրելով գյուղացի կոլումը,
դեռևս շարունակում են մնալ գյուղացիական դասակարգ, նշա-
նակում է առնվազն հարցերը խնդրել և չտեսնել կոլտնտեսականի
նոր փոխանցվող սոցիալական տիպը:

Նախ սխալ է բոլոր կոլտնտեսականներին գյուղացիներ և ապա
անանձին դասակարգ անվանելը: Նրա համար, վոր ալդտեղ կան
նախկին քաղաքակներ, վորոնք բանվոր դասակարգին են պատկա-
նում, և յեթե նրանք մտել են կոլտնտեսութեան մեջ և կոլեկտիվ
սեփականատեր են դառել, դրանով վոչ թէ դադարել են բանվոր
դասակարգին պատկանելուց կամ հեռացել են նրանից, այլ ավելի
քան մոտեցել են նրան և, վորպէս բանվոր դասակարգի մի մասը,
լծվել են սոցիալիզմի կառուցման գործին գյուղում: Կոլտնտեսա-
կանների մյուս խումբը նախկին չքավորներ են, այսինքն՝ կիսա-
պրոլետարներ, վորոնք չմտնելով բանվոր դասակարգի մեջ՝ չեն
մտնում նաեւ «գյուղացիական դասակարգի մեջ», կաղմելով այս
յերկուսի միջև առանձին դասակարգային խավ: Կաղմելով սոցիա-
լական առանձին չէրա՝ նրանք չափազանց մոտ են պրոլետարիա-
տին և նրա միակ հենարանն ելին անցյալում: Այդ խավը նախկի-
նում չպատկանելով գյուղացիական դասակարգին, լինելով պրո-
լետարիատի հենարանը, ներկայումս մտնելով կոլտնտեսութեան
մեջ, ավելի քան մոտեցել է պրոլետարիատին: Մինչդեռ յեթե նա
կոլտնտեսութեան մեջ գյուղացիական դասակարգին պատկանել,
կնշմանկի ավելի պիտք է հեռացած լինի պրոլետարիատից: Մեզա-
նում գյուղացիական դասակարգ ստելով հասկանում ենք վոչ-կոլ-
տնտեսական միջակին, նա յե, վոր կազմում է գյուղացիական դա-
սակարգը մեզանում: Հարց է առաջանում՝ կոլտնտեսական միջակն
ե՞ր պատկանում է գյուղացիական դասակարգին, թե՞ վոչ: Դավ.
Լուրեն հակված է նրան ևս գյուղացիական դասակարգի շարքը
դասելու: Իսկ մենք կարծում ենք, վոր սա միանգամայն սխալ է, սա
նշանակում է քերականապես կոլտնտեսական և վոչ-կոլտնտեսա-
կան միջակի տարբերութեանը, չտեսնել դասակարգային բնույթի
այն փոփոխումը, վոր կատարվում է միջակի կոլտնտեսութեան
մտնելուց հետո՝ արտադրութեան հիմնական միջոցների և աշխա-
տանքի հանրայնացման հետեւանում: Կոլտնտեսութեաններում
դասակարգեր չկան, այնտեղ կան նախկին դասակարգային հարա-
բերութեաններ, մնացորդներ, դասակարգային անհավասարու-
թեան տարրեր, դասակարգային պայքարի և խմբակային անհա-
վասարութեան մնացորդներ, վորոնք աստիճանաբար վերանում են:
Ահա ինչո՞ւ, Դավ. Լուրենի «Դասակարգերը խորհրդային գյուղում»
ներկա ետադրում հուշածի ալդ մասը սխալ է և վտանգավոր:
Ահա ինչո՞ւ մենք կարող ենք իրեն վերադարձնել իրեն իսկ խոս-
քերը, վոր «վտանգավոր և աթուղատրելի յե, ինչպէս թերազնա-
հատումն այն նոր սոցիալական բովանդակութեան, վորը հատուկ
է ալդ նոր սոցիալական տիպին, այնպէս և հակառակը, ալդ ու-
ցիալական նորը դերազնահատելը, նախկին տնտեսական ֆորմա-
ցիաների մնացորդները չտեսնելը...»:

Կոլտնտեսականի սոցիալիստական բովանդակությամբ թերա-
պևտիկ և նորի անտեսման դեմ նրա ուղղած նիդակներն ու-
ղիվ հասցեյով չեն գնում, վորովհետեւ նա կոլտնտեսականներին
առանձին դասակարգ անվանելով՝ ինքն և գլորվում գերագնահատ-
ման գիրքը: Իսկ նրա այն թեզը, վոր «աջ ուղորտունիստական
սխալ կլինեն» թերադնահատել կատարված բեկման սոցիալիստա-
կան բնույթը», համարում ենք ամբողջովին ճիշտ, սակայն ուղ-
ղում ենք հեղինակի հասցեյով և դրանով վորակում ենք նրա սխալի
բնույթը:

Կոլտնտեսական միջակը և չբավորը դեռևս ունեն դասակար-
դային առանձին դեքեր, վորոնք նրանց տարբերում են պրոլետարիա-
տից: Խմբակային կոլեկտիվ սեփականութան, ինչպես և յուրա-
ման ու արտադրութան կազմակերպման մի շարք յուրահատկու-
թյուններ, կոլտնտեսականների և արտադրական միջոցների հա-
րաբերությունը—ահա այս հարցերում նրանք տարբերվում են
բանվորներից:

Սակայն այդ տարբերությունը դեռևս հիմք չի տալիս հնա-
րեքու ինչ-վոր մի նոր դասակարգ—կոլտնտեսականների դասա-
կարգ, բացի այն յերկու հիմնական դասակարգերից, վոր ասում
և լենինը «եկոնոմիկան և քաղաքականությունը պրոլետարիական
դիկտատուրայի որով» և «ինչպես վերակազմել Բանդյուզոնեցու-
թյունը» հոգովածներում: (Պրոլետարիատը և միջակ գյուղացիու-
թյունը վորպես հիմնական դասակարգեր, բուրժուազիան վորպես
նախկին դասակարգի մնացորդ, վորը նույնպես դասակարգ է, սա-
կայն վոչ հիմնական դասակարգ): Կոլտնտեսականներին պրո-
լետարիատից տարբերող դեքեր, չդարձնելով նրան «նոր» դասա-
կարգ, կազմում են նախկին մանր արտադրողների դասակարգային
գծերի մնացորդները (միջակներ), վորոնք՝ արագորեն վերանա-
լով կոլտնտեսութան հանրայնացման պրոցեսների խորացման
զուգահեռ՝ նրան դարձնում են սոցիալիստական տնտեսութան աշ-
խատավոր: Կոլտնտեսականին պրոլետարիատից տարբերող այդ
գծերը դասակարգային հակադրության ու անտագոնիզմի չեն վե-
րաձվում: Կոլտնտեսականը վորպես տնտեսական և սոցիալական
սխալանցվող տիպ, պրոլետարիատի դեկավարությամբ վերացնե-
լով ինքն իրեն, «մեռնելով» դասակարգայնորեն, կոլեկտիվ ար-
տադրութան միջոցով քայլում է սոցիալական նոր տիպ դասակարգ
ուղղությամբ:

Ինչպես կոլտնտեսությունը դեռևս հետեւողական-սոցիալիս-
տական տնտեսություն չէ, այնպես էլ կոլտնտեսականը դեռևս
սոցիալիստական տնտեսության աշխատավորի տիպ չէ: Ինչպես
կոլտնտեսությունը հիմնովին տարբերվում է անհատական տնտե-
սությունից, այնպես էլ կոլտնտեսականը տարբերվում է վոչ կոլ-
տնտեսական չֆավորա-միջակային շերտերից:

Ներկոլտնտեսական գյուղացիութան սոցիալական նոր եյու-
թյան նման պարզաբանումն ու ըմբռնումը տեսականորեն լինելով
սխալ, քաղաքականապես միանգամայն վտանգավոր է և ըստ եյու-
թյան ուղորտունիստական: Այդ տեսակետն ավելի ցայտուն արտա-

հայտվեց «Պող-դենամենեմ մարքսիզմ» ամսագրի 1930 թվի №3-ում
քնն. Կիրպոտինի հոգովածում: Նա գրում է. «քանի վոր խոր-
հըրդային գյուղում գնում է հիմնական չբավորում-միջակային մաս-
տայի կոնսոլիդացիա և կոլեկտիվիզացիա, այսինքն էլ և մի-
ջակները և չբավորները մի դասակարգ են կազմում... Կոլտնտե-
սություն մտած բատրակը կոլտնտեսական գյուղացիության դա-
սակարգի անդամ է, այսինքն չբավորում-միջակային գյուղացիու-
թյան»:

Այսպիսով ըստ ընկ. Կիրպոտինի բատրակն էլ, վոր բանվոր
դասակարգին եր պատկանում, կոլտնտեսություն մտնելով՝ հեռա-
ցավ բանվոր դասակարգից և մտավ կոլտնտեսական գյուղացիա-
կան դասակարգի մեջ: Մենք արդեն ասացինք, վոր նրանք, այ-
սինքն չբավորն ու միջակները կոլեկտիվիզ գուրս էլ մի դասակար-
գի մեջ չեն ամփոփվում, իսկ կոլեկտիվի ներսում խոսել նրանց մի
դասակարգ կազմելու մասին, վորտեղ ընդհանրապես դասակարգեր
չկան, նշանակում է առնվազը թերադնահատել կատարված բեկ-
ման սոցիալական արժեքը:

Չբավորում-միջակային մասսաները բռնելով սոցիալիզմի ուղին,
մտնելով կոլտնտեսություն, չմիաձուլվելով դեռևս սոցիալական
նոր շերտի մեջ, վորոչ չափով պահպանելով իրենց սոցիալական
անցյալի դիմագծերի շարիխները, հիմնականում արդեն միաձուլ-
վել են վորպես կոլեկտիվ արտադրողներ: Նրանց դարգացման ուղ-
ղությունը միևնույնն է, նրանք սկսում են մահանալ վորպես դա-
սակարգային կատեգորիաներ, նրանց սոցիալական բնույթի, սո-
ցիալիստական վերափոխման հետևանքով, ստացել և զարգացնում են
ապագադասակարգային հասարակակարգի աշխատավորի հատկանիշ-
ները: Այս պայմաններում խոսել նրանց առանձին դասակարգ լի-
նելու մասին, նշանակում է ակտեսելով նորը՝ գերագնահատել հի-
մնացորդների տեսակարար կշիռը: Այդ նշանակում է նախկին
մնացորդների տեղեկեցով վորոշել այսպիսի իրականությունը.
մինչդեռ մարքսիստի համար պարտադիր է վոչ քե տեղեկեցով
իրականությունը վորոշելը, այլ հիմք ունենալով ռեալ իրականու-
թյունը, վերլուծել և ուսումնասիրել նրա տեղեկեցները:—Կոլտնտե-
սականին բնորոշելու հիմքը վոչ թե նրա յերեկվա անցյալն է, այլ
այստեղ կոնկրետ իրականությունը և անխուսափելի ապագան:

Յեթե սխալ է կոլտնտեսականի ապագայի հիման վրա վորոշել նրա
սոցիալական այստեղ, ապա ավելի քան աններելի սխալ է այդ հիմ-
քը անցյալի մեջ վորոշելը:

Ի՞նչ կատարվեք, յեթե մենք ասեյինք, թե բանվորները կարկտա-
լիզմի պայմաններում առանձին դասակարգ չեն, վորովհետեւ զար-
գացման տեղեկեցներով դառնալու յեն ապագադասակարգային հա-
սարակակարգի աշխատավորներ. կամ՝ գյուղացիությունը վորպես
ամբողջություն ֆեոդալիզմի պայմաններում դասակարգ չէ, վո-
րովհետեւ կապիտալիստական դարգացման տեղեկեցի իրականու-
թյուն դառնալու զուգահեռ՝ նա շերտավորվելով, դադարում է
միասնական դասակարգ լինելուց: Այդ կնշանակի մոտանալ պատ-
մականությունը, կոնկրետությունը ու ըստ եյության հակա-

մարքսիստական մեթոդով զեկավարվել յերևույթներն ու փաստերն ուսումնասիրելիս: Կնշանակել, վոր մենք վաչ քե իրականութիւնն ենք հիմք ընդունում և վորոշում տեսնեցները, այլ ընդհակառակը:

Այստեղ մի կողմն ենք թողնում կոմսոլիդացիայի և կոլեկտիվացման պրոցեսների միանգամայն սխալ նույնացումը ընկ. Կիրպիլովի կողմից: Մրանք տարբեր յերևույթներ են. կոլեկտիվացիան սոցիալիստական զարգացման պրոցես է, միջոցառում կոմսոլիդացիան վոչ միայն աշխատին չէ, այլև մանր-բուրժուական տնտեսութեան հարաբերական ամրացման և բյուրեղացման պրոցես է: Իսկ «մանր տնտեսութեան զարգացումը մանր-բուրժուական զարգացում է, կապիտալիստական զարգացում» (Լենին 4. 1-ին, էջ 215):

Միանգամայն սխալ է նաև այն կարծիքը, թե կոլտնտեսականները սոցիալիստական տնտեսութեան աշխատողները կզառնան, յեթե վերածվեն պրոլետարների: «Յեթե կողեք, և կոլտնտեսականները կիսապրոլետարներ են, այսինքն սոցիալիստական տնտեսութեան կիսաաշխատավորներ» (Մ. Միրոնով, Պող. դեմոստենի մարքսիզմա № 9, 30 թ.):

Ըստ Միրոնովի կոլտնտեսականները սոցիալիստական տնտեսութեան կիսաաշխատավորներ են, վորովհետև կիսապրոլետարներ են: Տրամաբանութիւնը պահանջում է կարծել, վոր նրանք լրիվ աշխատավորներ կդառնան լրիվ պրոլետարներ դառնալուց հետո: Վոր կոլտնտեսականները կիսապրոլետարներ չեն, վոր նրանք կոլեկտիվ արտադրութեան միջոցների տերեր են—սա հանրահայտ ճշմարտութիւն է: Վոր մենք աշխատավոր գյուղացիներին տանում են սոցիալիզմ, զանց առնելով նրանց պրոլետարականացման աստիճանը, սա ևս հայտնի յե մարքսիզմ—լենինիզմի աշխուրհից: Յերեկ ընկ. Միրոնովը կարծում է, վոր սոցիալիստական տնտեսութեան մեջ բոլոր մարդիկ պրոլետարներ են դառնալու. սա իսկապես վոր «նոր» կարծիք է, վորը հակադրվում է գիտական սոցիալիզմի հիմնադիրների ուսմունքին, ըստ վորի վոչ թե պրոլետարներ, այլ սոցիալիստական տնտեսութեան աշխատողներ և հասարակական անփականութեան լիահամար անդամներ են լինելու: Մեր պայմաններում վոչ միայն կոլտնտեսականները պրոլետարներ չեն դառնալու, այլև պրոլետարները, այսինքն բանվոր դասակարգը դադարել է պրոլետարների դասակարգ լինելուց՝ այդ հասկացութեան գիտական առումով: Չէ վոր մեզանում բանվոր դասակարգն արտադրութեան միջոցների տեր է, պետութեան ղեկավարող դասակարգ: Ինչպես կոլտնտեսականը, այնպես էլ բանվոր դասակարգն աստիճանաբար կորցնում են իրենց դասակարգային աստիճանահատկութիւնները և ապագայում կմիաձուլվեն՝ կազմելով սոցիալիստական տնտեսութեան աշխատողներ ժխանական ջուրհատ:

«Միջակի մուտքը կոլտնտեսութիւն, աշխատող, նշանակում է անցումն, ձիշտ է դեռ վոչ բոլորովին լրիվ, ուրիշ դասակարգի շարքերը» (Մ. Միրոնով, նույն տեղը): Ըստ ընկ. Միրոնովի կոլ-

տնտեսականները դրանք կիսապրոլետարների դասակարգն է կազմում, իսկ միջակը մտնելով կոլտնտեսութիւն, մանր արտադրողների դասակարգից անցնում է կիսապրոլետարների դասակարգի շարքը: Իդեմա ընկ. Միրոնովի այս մոտեցման մենք գործ ունենք վոչ թե կոլտնտեսութեան ներսի սոցիալիստական հարաբերութիւններին և կոլտնտեսականի բնույթի մարքսիստական ուսումնասիրութեան, այլ ոպորտունիստական խեղաթյուրման հետ:

«Գյուղացիութիւնը կոլտնտեսութիւններում, ինարկե, դեռ դասակարգ է, բայց նա արդեն լրիվ դասակարգ չէ», ... Կոլտնտեսական գյուղացիութիւնը դեռևս դասակարգ է: Յերեկվա միջակը կոլտնտեսութիւններում դեռևս պրոլետար չէ և վոչ էլ ապագայում կարգային սոցիալիստական տնտեսութեան արտադրող» (Կիրպիլով, Պող. դեմոստենի մարքսիզմա № 5, 30 թ.):

Ինչ է նշանակում «դեռևս նրանք պրոլետարներ չեն»: Ուրեմն նրանք պետք է դեռ պրոլետարներ դառնան: Յերեկ կարծում է, վոր միայն այն դեպքում նրանք սոցիալիստական տնտեսութեան արտադրողներ կլինեն, յեթե պրոլետարներ լինեն: Այդ յերկուսի անալոգիան այնպիսի կոնտրադիկցիոն մեջ է դրված, վոր ուրիշ կերպ հասկանալ չի կարելի:

Գյուղացիութիւնն ինքն իրեն, իր ներքին բնույթի որիմաշափութեամբ ու ինքնագարգացման որեմքով չէ, վոր գնում է դեպի սոցիալիզմ և կոլեկտիվացման ուղին է բռնել: Գյուղացիութեանը այդ ուղիով տանում է պրոլետարիատը, այդ ուղին վոչ թե նա ինքնաբերաբար է ընտրել, այլ նրան ցույց է տվել կոմունիստական կուսակցութիւնը: Ըստ էությունից սպորտուսիզմի, մանր-բուրժուական լիբերալիզմի գիրկն է ընկել ընկ. Կիրպիլովը, յերբ փորձում է մեզ համոզել, վոր «գյուղացիութիւնը սոցիալիզմ է գնում վոչ քե պրոլետարական, այլ իրեն հատուկ ուղիով, վորը հարմարեցված է նրա մանր-անփականատիրական բնույթին (նույն տեղը):

Գյուղացիութիւնը սոցիալիզմ չի գնում պրոլետարացման, բայց գնում է պրոլետարիատի ուղիով: Ասել, վոր նա սոցիալիզմ գնալու ուղիւն ուղի ունի, անկասկա պրոլետարիատից, նշանակում է կանգնել նարդնիկական-խեթական տեսակետի վրա: Պրոլետարիատի ուղի տեսլով չպետք է հասկանալ, վոր նա պետք է անցնի անպայման ույն աստիճաններով և փոխանցման այն ուղիներով, ինչ պրոլետարիատը: Այս առումով, այսինքն սոցիալիստական վերափոխման աստիճանահատկութիւնների տեսակետից, իհարկե, զգալի տարբերութիւն կա: Այստեղ էլ պետք է, վոր շարժման ուղիւն չափազանց, բովանդակութիւնը, վերափոխման միջոցների գումարը պրոլետարական-սոցիալիստական են: Իհարկե պրոլետարիատը գյուղացիութեանը սոցիալիզմ է տանում վորոշ չափով այլ ուղիներով, քան ինքն է գնում. բայց վոր կոլեկտիվացումը չի հարմարեցվում գյուղացու մանր անփականատիրական բնույթին, այլ հակադրվում է այդ բնույթին,

ուս վաղուց հայտնի չե մարքսիստներին: Ընկ. Կիրպոտինը նույն հոգևածում ըստ ելուծյան նարոդնիկորեն խոսում է միջակի բնածին սոցիալիստական հատկությունների մասին, վոր նա կարող է ինֆանտուլիստիկ հաղթանակել իր մանր-բուրժուական բնույթը և այլն: Լսենք Կիրպոտինին. «Կարելի չե վորձել ուժով, հակառակ նրա սեփական ցանկության, նրան կոլխող քշել, միայն չհավատարմով միջակի իր բնույթը սոցիալիստական վերափոխման յենթարկելու բնդունակությամբ»: Այդպիսով միջակը ինքնահասի որենքով, ինքն է սոցիալիստական վերափոխման յենթարկելու իր բնույթը. սա պրոլետարիատի և սոցիալիստական արդյունաբերության դեկավարող դերի անհրաժեշտության աջ-ոպորտունիստական ժխտման մի ցայտուն արտահայտություն է: Ընկ. Կիրպոտինը յերեկ դիտե, վոր կուսակցությունը «ուժով» և «հակառակ նրանց կամքի» չի կատարում կոլեկտիվացումը: Ի՞նչ խմատ ունի այդ դատողությունը ներքե հետո ավելացնել միջակի սոցիալիստական բնդունակությամբ չհավատարմ յենթարկելու քեզը: Միթե այս կապակցությամբ մեջ այդ չի՞ նշանակում՝ «քույր տվեք միջակին, նա ինքն իրեն ել կգնա սոցիալիզմ»: Իհարկե՝ այո: Այդ դատողություններն առկա իրենց ցույց և տալիս ինֆանտուի աջ-ոպորտունիստական տեսությամբ:

Սրանք դուրսանտեսություն զարգացման սոցիալիստական կամ կապիտալիստական ուղիների հարցը պայմանավորում են բացառապես շրջապատի արտադրական հարաբերությունների բնույթով, ընդ վորում այս վերջինս վերցվում է վոր թե ախտիվներգործությամբ առումով, այլ վորպես ինֆանտուիստական ինֆանտուի կարգով առաջ մղող ուժ:

«Գյուղացիական տնտեսությունը կարող է վերաճել կապիտալիստական կամ սոցիալիստական տնտեսության—կախված միջավայրից... Ինչպես կապիտալիստական քաղաքը գյուղը տանում էր կապիտալիզմ, այսպես ել պրոլետարական դիկտատուրայի պայմաններում սոցիալիստական քաղաքը գյուղը տանում է դեպի սոցիալիզմ» (Ա. Բիցենկոյ, ԽՍՀՄ դուրսանտեսություն կոլեկտիվացման տեսության և պատմության մասին, էջ 15): Վոր պրոլետարական դիկտատուրան և նրա չքաղաքը դուրսանտեսության սոցիալիստական զարգացման հիմնական պայմանն է, սա շատ հասկանալի չի: Վոր բուրժուազիայի դիկտատուրայի պայմաններում գյուղատնտեսությունը վաչ քե սոցիալիստական; այլ կապիտալիստական ուղիով է զարգանում, սա ևս անատարկելի չի: Սակայն ինչո՞ւն է ընկ. Բիցենկոյի սխալը: Նրանում, վոր նա կարծում է, վոր յերեկ տված է պրոլետարական դիկտատուրայի շրջապատ, ուրեմն դրանով իսկ, ապառիկված է գյուղատնտեսության սոցիալիստական զարգացումը, ինֆանտուիստական զարգացումը կգնա սոցիալիզմի ուղիով: Սա կոլտնտչարժման զարգացման ինֆանտուի աջ-ոպորտունիստական տեսությամբ: Սա դուրսանտեսության զարգացման վրա պրոլետարական ներգործություն ունեցող գործադրման վրա պրոլետարական ներգործություն ժխտումն է: Այստեղ նու-

յից հանդես է գալիս պրոլետարական դեկավարության թերազնահատումը:

Ընկ. Բիցենկոյի նմանների աջ-ոպորտունիստական այդ ինքնազոտ տեսությունը նկատի ունեք ընկ. Ստալինը, յերբ մարքսիստ ազդարնիկների համադումարում ասում եր՝ «այդ թեորիայի հեղինակները քարոզում են մոտավորապես հետևյալը.

Կար մեզանում կապիտալիզմ, դարգանում էր ինդուստրիան կապիտալիստական բազայի վրա, իսկ գյուղը հետևում էր կապիտալիստական քաղաքին տարերայնորեն, ինֆանտու կերպով, վերակառուցվելով կապիտալիստական բազայի նմանությամբ: Յեթե այսպես եր կատարվում կապիտալիզմի որով, ապա ինչո՞ւ մույնը չի կարող կատարվել նաև խոթերգային տնտեսության որով, ինչո՞ւ չի կարող գյուղը, մանր-գյուղացիական տնտեսությունն ինֆանտու նմանադրելով հետևել սոցիալիստական բազային, տարերայնորեն վերակառուցվել սոցիալիստական բազայի նմանությամբ: Այս թեորիայի հեղինակներն այս հիման վրա պնդում են, վոր գյուղը կարող է հետևել սոցիալիստական բազային «ինֆանտուի» կարգով»:

Այստեղից ել հարց է ծագում.—արժե՞ արդյոք, վոր մենք այդքան արդուն պրոլետներ խորհանտեսություններ և կոլտնտեսություններ ստեղծելու համար, արժե՞ արդյոք, վոր մենք նիգալներ կտրեմք, յերե գյուղն առանց դրան ել կարող է հետևել սոցիալիստական բազային: Ահա ձեզ մի թեորիա ևս, վորն որչեղիվորեն նպատակ ունի մոր զեմե տալու գյուղի կապիտալիստական տարերի ձեռքը կոլտնտեսությունների դեմ մղված նրանց պայքարում: (Ընդգծումն իմն է):

«Պող զնամենեմ մարքսիզմ» Ժուրնալի 1931 թ. № 4-5-ի առաջնորդող շոչվում է նաև կոլտնտեսականի սոցիալական լոնդիլի հարցերը:

Ահա ինչ է ասված այնտեղ կոլտնտեսականներին վորպես դատակարգ համարող, կամ նրանց պրոլետարիատի հետ նույնացնող «տեսությունների» մասին. «Ծայրահեղ սխալ կլինեք կոլտնտչարժման հաջողությունների փաստից յեղրակացնել (ուրն, ի դեպ, յերեմն արվում է), վոր ներկա ետապում արդեն վերացել է, բանվորների ու գյուղացիների, բանվորների և կոլտնտեսականների միջի տարերայնությունը: Չափազանց սխալ է հանդիսանում նաև այն դրույթը, վոր յերեմն տեղի ունի, վոր համարի կոլտնտեսականի մեմե ունեմ դատակարգային մոր կատեգորիա, մոր կոլտնտեսական դատակարգ: Առաջին դրույթը չի հասկանում սոցիալիստական և հետևողական սոցիալիստական տնտեսությունների տարերայնությունը, լոնդիլների, վորոնք զրկված են արտադրողական միջոցների և դործիքների ամեն տեսակի մասնավոր սեփականությունից, և աշխատավորների տարերայնությունը, վորոնք այս կամ այն չափով պահպանում են (ինդիվիդուալ, լամբակային կամ այս և այն միասին) արտադրողական միջոցների և դործիքների մասնավոր սեփականությունը. կոլտնտեսության անդամի և աջ-

խառափորի տարբերութիւնը, փորը մասին ասում է Լենինը: Յերկ-
բորդ գրութիւնը ձգտելով լմբել զատակարգային տեղաշարժերը
յերկրում, չի հասկանում, փոր այդ տեղաշարժերի էությունը
բոլորովին էլ այն չէ, փոր ծնվում են կամ վերականգնում են այն
կամ այն ձևով նոր «դասակարգային կատեգորիաներ» կամ դա-
սակարգային հարաբերութիւններ, այլ ընդհանրապէս, փոր այդ
անշարժների էությունը կայանում է դասակարգային հարաբե-
րութիւնների տարբերի, գծերի և այս կամ այն կողմի մշտական
վաճճացման մեջ, փոր դրանք էությունամբ դասակարգերի վերջնա-
կան վերացման, վաճճացման տեղաշարժեր են:

Մեր զարգացման մեջ «մեծ բեկում» նրանումն է կայանում,
փոր կոտնտեսական աշխատանքի գոյությունը չէ, փորպէս դասա-
կարգ, այս խոսքի հին իմաստով:

Այստեղ զարգացումը դրույթները փկայում են այն մասին, թե
վորքան սխալ է այսպիսի, յեթե կարելի չէ ասել, տեսակետը,
վորն գրառվում է նոր «դասակարգակազմակերպումը», յեն-
թադրելով, փոր հանձնա կոտնտեսականի մեկ ունեմ մեր յերկ-
րում նոր դասակարգային կոտնտեսականի առաջացում: Ուսկայն
միանգամայն կարծատեսութիւն կլինեմ, սխալ, նահանջ կլինեմ
մարքսիզմ-լենինիզմից, յեթե մենք նույնացնենք կոտնտեսակա-
նին պրոլետարիատի հետ» (էջ 10-12, ընդգծումն իմն է):

Մեր զարգացումը հիմնական դրույթները ցույց են տալիս այն
հզոր սոցիալական տեղաշարժը, փոր կատարվեց մեղանում վեր-
ջերս սոցիալ-դասակարգային հարաբերութիւնների և պրոլետա-
րական դիկտատուրայի յերկրի դասակարգերի տեսակարար կշռի
և դերի այն վերականգնումը, փոր մենք ապրում ենք հանձնա
կոտնտեսականի գոյությունտեսութիւն կենտրոնական դեմք և մեր
գլխավոր հենարանը դառնալու: Այս նշանակում է, փոր միլիոնա-
փոր մանր արտադրողներ մտնելով կոտնտեսութիւն, ազատվում
են իրենց նախկին դասակարգային բնույթի կարեւորագույն դժե-
րեց, փոր կա արմատական տարբերութիւն միջկոտնտեսական
և կոտնտեսական գոյացիւնների միջև:

Գոյացիւնութիւն հիմնական մասնային՝ միջակութիւնը,
փորպէս գոյացիւնութիւն դասակարգ բնորոշող հիմնական դերը,
այն է, նրանց տեղը հասարակական արտադրութիւն մեջ, հարա-
բերութիւնը դեպի արտադրողական միջոցները, հասարակական
յեկամտեց բաժին ստանալու յեղանակը և այլն, հիմնովին փոխ-
վում են «մեծ բեկումից», կոտնտեսութիւն մտնելուց հետո:

Նախկինում չբախտի և միջակի տեղը հասարակական արտա-
դրութիւն մեջ պայմանավորված էր նրանց մանր ապրանք արտա-
դրող լինելու հանգամանքով, արտադրական միջոցները մասնավոր
սեփականութիւնում և պարարտ հող եր հանդիսանում կապիտալիզմի
տարբերային զարգացման համար: Ներկայումս կոտնտեսականի տե-
ղը հասարակական արտադրութիւն մեջ պայմանավորվում է նրա
կողմից արտադրող լինելու հանգամանքով, արտադրողական
հիմնական միջոցների հանրայնացումը գոյություն, սոցիալիստա-

կան արտադրական բաղա և պրոլետարիատի գլխավոր հենարան
լինելով. նա հիմնականում դադարելով մանր ապրանք արտադրող
և կապիտալիստական ու սոցիալիստական արտադրական սխտեմ-
ների միջև տատանվելուց, պրոլետարիատի և նրա սովանդարդի
դեկավարութիւնը ձեռնամուխ է յեղել գոյուլի սոցիալիստական
վերականգնման և կուլակութիւն վորպէս դասակարգի վերաց-
ման գործին:

Նախկինում նրան հատուկ էր անկազմակերպվածութիւնը,
տարբերայնութիւնը և աշխատանքի ինդիվիդուալիստական յեղա-
նակը. ներկայումս նա աշխատում է կուլեկտիվ արտադրութիւն
միասնական պլանով, աշխատանքի սոցիալիստական մեթոդներով:

Նախկինում միջակը, լինելով պրոլետարիատի դանակից,
փորպէս գոյացիւնական դասակարգ, ուներ մի շարք անհարթու-
թիւններ, հակասութիւններ և դասակարգային պայքար պրոլե-
տարիատի հետ. ամէլի ուժեղ էր գոյուլի և քաղաքի պատմակա-
նորեն առաջացած սուր հակասութիւնը: Ներկայումս միջակը դա-
դարել է գոյացիւնական դասակարգ լինելուց, դառել է մեր աւուր
և հուսալի հեմարանը, մեղմացել և վերանում են նրա և պրոլետա-
լիատի միջեւ յեղած հակասութիւնները (գներ, հարկային և
վարկային քաղաքականութիւն հարցեր), գոյուլի և քաղաքի հա-
կադրութիւնը. նախկինում գոյացիւնականութիւն բախտը, նրա
դեմքը բնորոշողը անհատական ցրված տնտեսութիւններն էին.
ներկայումս կոտնտեսութիւններն են և 15 միլիոն կոտնտեսա-
կանների բանակը:

Կոտնտեսութիւններում նախկին անհատական ոգտագործ-
ման արտադրական միջոցները դառնում են հանրային կուլեկտիվ
տնտեսութիւն արտադրութիւն միջոցներ: Մեկուսացած անհատա-
կան աշխատավորը հասարակական կուլեկտիվ աշխատավոր: Չկան
անտագոնիստ դասակարգեր, փորնցից մեկը տիրապետելով արտա-
դրութիւն միջոցներին, չհագործելով մյուսներին: Կոտնտեսութիւն
սոցիալ-տնտեսական հարաբերութիւններն ընույթը սոցիալիս-
տական է: Կոտնտեսական արտադրութիւնը սոցիալիստական ար-
տադրութիւն մի աստակն է: Կոտնտեսականներից սկսել է ստեղծ-
վել հասարակական նոր շերտ սոցիալիստական տիպի: Կոտնտե-
սական գոյացիւնները կապվելով սոցիալիստական տիպի տնտե-
սութիւն զարգացման ընդհանուր շահերով, լինելով սոցիալիստա-
կան տիպի հարաբերութիւնների մեջ իրար հանդեպ, անկախ
իրենց նախկին սոցիալական պատկանելութիւնից, սկսել են դառ-
նալ «կուլեկտիվացող գոյուլի աշխատավորների միասնական ջո-
կատ» (Ստալին):

Կոտնտեսականներն իրենց սոցիալական տիպով դեռևս Փար-
րիկա-գործարանային բանվորներին «հավասար» չեն. նրանք դեպի
արտադրութիւն միջոցներն ունեցած հարաբերութիւնը և ընդհա-
նուր յեկամտեց բաժին ստանալու յեղանակով հասարակական
արտադրութիւն սխտեմում այլ տեղ են գրավում, փորը տարբեր-
վում է բանվորներից: Դեռևս համառ ու յերկարատև աշխատանք
և հարկավոր կոտնտեսութիւնը հետեղական-սոցիալիստական

տնտեսութիւնը դարձնելու անհալասարութիւնը, ինքիվիդուալիզմի մնացորդները և դասակարգային պայքարի ելեմենտները վերացնելու համար:

Համեմատեցե՛ք «մեծ բեկումը» պայմանավորող այս դրույթները և ցուցանիշները և կատանաք սոցիալ-քաղաքական այն եկվիվայենտը, վոր ձեռք բերեց պրոլետարիատը սոցիալիստական ինքուստրացման և դյուզի սոցիալիստական վերակառուցման ու դասակարգային հակառակորդի դեմ մղած վճռական մարտերում:

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅԳԱՐԸ ՅԵՎ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԵՐՍՈՒՄ

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅԳԱՐԻ ԲՆՈՒՅԹԸ ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ընկ. Լարինը և Ռոյենտալը խոսելով կոլխոզի շուրջը և նրաներսում տեղի ունեցող դասակարգային պայքարի մասին ըստ ելույթի, դրանցում վոչ մի տարբերութիւն չեն գնում: Ըստ Ռոյենտալի «կուլակի և կոլտնտեսականի պայքարը տեղափոխվում է կոլտնտեսութիւն», վորտեղ նա «ընդունելով մոր ձևեր, չի դադարում համատ ու դժվար լինելուց» (Ռոյենտալ, Դասակարգային պայքարի և կուլակի սոցիալիզմի մեջ ներածելու մասին, էջ 72, 30 թիվ):

Իսկ ընկ. Լարինը—մարքսիստ ագրարիկները համազումաբում կոլտնտեսութիւնը բնորոշելով վորպես խոշոր մասնատիրական տնտեսութիւններ, նրանց հակադրեց պրոլետարական պետութիւնը՝ դների, կոնտրակտացիայի, մատակարարման և այլ գծերով: Ըստ Լարինի այն բոլոր հակասութիւնները, վոր կան սոցիալիստական շարդումներու-քան և գյուղի մասնավոր սեկտորի միջեվ, համարյա ամբողջովին մնում են նաև կոլտնտեսութիւնների նկատմամբ: Այստեղից յենելով, Լարինը տարբերութիւն չի դնում կոլտնտեսութիւններից դուրս և նրա ներսը յեղած դասակարգային պայքարի միջև: Նա կոլտնտեսութիւն մեջ յեղած դասակարգային պայքարի տարրերն այնքան չափազանցված է նկարագրում, վոր ընկ. Ստալինն իր ճառում ասում է՝ «այնպես գունեղ նկարագրեց դասակարգային պայքարը կոլտնտեսութիւններում, վոր կարելի չէ կարծել, վոր դասակարգային պայքարը կոլտնտեսութիւններում չի տարբերվում կոլտնտեսութիւններից դուրս յեղած դասակարգային պայքարից, դեռ այելին կարելի չէ կարծել, վոր նա այդտեղ ալելի դաժան է դառնում»:

Իհարկէ, դասակարգային պայքարի տարրեր կան նաև կոլտնտեսութիւններում. սակայն այստեղի պայքարի առանձնահատկութիւնն այն է, վոր նա մղվում է կոլտնտեսականների միջև, մըղվում է նրանց սոցիալիստական վերադաստիարակութիւնը համար, և

որանից էլ բխում է պայքարի ներգործական դաստիարակչական բնույթը: Մինչդեռ կոլխոզից դուրս մղվող դասակարգային պայքարի առանձնահատկութիւնն այն է, վոր նա մղվում է հակառակորդի հետ և նպատակ ունի իսպառ վոչնչացնել նրա գոյութիւնը սոցիալ-տնտեսական պայմանները:

Բնորոշելով կոլտնտեսութիւն մեջ և նրանից դուրս մղվող դասակարգային պայքարի առանձնահատկութիւնները, ընկ. Ստալինն ասում է «դասակարգային պայքարի տարրեր կա՞ն արդոք կոլտնտեսութիւններում: Այո կան: Կոլտնտեսութիւններում դասակարգային պայքարի տարրեր չլինել չեն կարող, յեթե այնտեղ դեռևս պահպանվում են ինքիվիդուալիստական, անդամ կուլակային հոգեբանական մնացորդներ, յեթե այնտեղ դեռևս կա վորոշ անհալասարութիւն: Բայց կարելի՞ չէ ասել արդոք, վոր դասակարգային պայքարը կոլտնտեսութիւններում նույն նշանակութիւնն ունի, ինչ վոր կոլտնտեսութիւններից դուրս կատարվող դասակարգային պայքարը: Վոչ, չի կարելի: Մեր «ձախ» Փրադյորները սխալը հենց նրանումն է, վոր նրանք չեն տեսնում այդ տարբերութիւնը: Ի՞նչ է նշանակում դասակարգային պայքար կոլտնտեսութիւններից դուրս, մինչև կոլտնտեսութիւնների կազմակերպումը: Այդ նշանակում է պայքար կուլակի դեմ, վորը տիրապետում է արտադրական միջոցներին, գործիքներին և սարկացնում չքավորներին արտադրական այդ միջոցները ոգնութիւնը: Այդ պայքարը վոչ թէ կենաց, այլ մահու պայքար է: Ինչ ի՞նչ է նշանակում դասակարգային պայքարը կոլտնտեսութիւնների հոգի վրա: Այդ նշանակում է, նախ և առաջ, վոր կուլակը ջախջախված է, զրկված է արտադրական միջոցներից: Այդ նշանակում է, յերկրորդ, վոր չքավորներն ու միջակները միացել են կոլտնտեսութիւններում արտադրական հիմնական գործիքների և միջոցների համայնացման հոգի վրա: Այդ նշանակում է, վերջապես, վոր խրնդերը կոլտնտեսութիւնն անդամների միջև յեղած պայքարի մասին է, վորոնցից վոմանք դեռևս չեն ազատագրվել ինքիվիդուալիստական, կուլակային հոգեբանութիւն մնացորդներից և փորձում են ոգտադրծել կոլտնտեսութիւններում յեղած վորոշ անհալասարութիւնն իրենց ոգտին, իսկ վոմանք էլ ջանկանում են կոլտնտեսութիւններից դուրս վտարել այդ մնացորդները և այդ անհալասարութիւնը» (ճառ մարքսիստ ագրարիկները համազումաբում): Այսպիսով դասակարգային պայքարը կոլտնտեսութիւններում չի վերանում, սակայն մեղմանում է, մնում են այդ պայքարի տարրերը, վորոնք իրենց բովանդակութիւնը և նպատակներով հիմնովին տարբերվում են կոլխոզից դուրս մղվող պայքարից: Պայքարի այդ տարրերը չեն վերադաստիարակվում, այլ անընդհատ սեղմվում ու վերանում են կոլտնտեսութիւնն ու մարացման և համայնացման պրոցեսի խորացման զուգահէտ:

Բանվոր դասակարգի և գյուղացիության միջև յեղած հակա-
սությունը մեղմանում և փոխվում է, բայց ամբողջովին չի վերա-
նում նաև կոլտնտեսությունների կազմակերպելուց հետո. կոլտն-
տեսություններում այդ հակասությունը ընդունելով բազմազան
ձևեր, արտահայտվում է վորպես մասնատրական, պարանքա-կա-
պիտալիստական հակումների բաղխում կոլտնտեսության զարգաց-
ման սոցիալիստական ուղու հետ: Կոլտնտեսություններում դեռ
մնում են նախկին դասակարգային հարաբերությունների մնացորդ-
ները կոլտնտեսականների միջև, սրանց և վոչ-կոլտնտեսականների
միջև մի կողմից և պրոլետարիատի՝ մյուս կողմից: Գետևս կոլտն-
տեսականների անհատական ոգտագործմանն և մնում արտադրա-
կան միջոցների մի մասը, դեռևս բացի կոյեկտիվ արտադրությու-
նից կա նաև անհատական արտադրություն, այդ անհատական սե-
փականություն չափը տարբեր կոլտնտեսականների մոտ տարբեր է,
վորը և ստեղծում է անհավասարություն, հետևապես նաև դասա-
կարգային պայքարի տարբեր կոլտնտեսություններում: «Պայքար
հանուն հետևողական-սոցիալիստական հարաբերությունների կոլ-
տնտեսություններում, կոլտնտեսությունը միայն ըստ տեղի սո-
ցիալիստական լինելուց իսկական սոցիալիստական ձեռնարկ
դարձնելու պայքարը չի կարող դասակարգային պայքար չլինել,
դասակարգային պայքար հատուկ ձևով» (Մարքսիստ ազդարնիկ-
ների համագումարի աշխատություններ, հ. 1-ին):

Ամփոփենք կոլտնտեսություններում մղվող դասակարգային
պայքարի բնույթի հարցերը: Ինչպես ասացինք, դասակարգային
պայքարը կոլտնտեսություններում չի վերանում, սակայն մեղմա-
նում է, մնում են պայքարի տարրերը, այլ ձևվեր է ընդունում,
փոխվում է պայքարի որակը, խնդիրները և նպատակը: Այդ
պայքարը հիմնականում մղվում է հետևյալ խնդիրների շուրջը.

1. Պայքար կոլտնտեսականների սոցիալիստական վերադաս-
տիարակման համար ընդդեմ մանր-բուրժուական, անգամ կուլա-
կային հոգեբանության, իդեոլոգիայի և գործելակերպի մնացորդ-
ների: «Հարկավոր է դեռ յերկար աշխատել նրա վրա, վորպեսզի
վերափոխել գյուղացի-կոլտնտեսականին, չտկել նրա ինդիվի-
դուալիստական հոգեբանությունը և նյունից ստանալ սոցիալիս-
տական հասարակարգի աշխատավոր» (Ստալին):

2. Պայքար կոլտնտեսություն ստեղծած կուլակային տարրերի
և արանց ագիտության արտահայտիչ յենթակուլակների դեմ, փո-
քոնք պայթուցիկ աշխատանք են կատարում կոլտնտեսության մեջ.
պայքար կուլակային, շահագործողական հարաբերություններ
հաստատելու տեղեկեցների և ձգտումների դեմ:

3. Պայքար գիտակցական ու անդիտակցական մասսարարու-
թյան դեմ, հասարակական սեփականությունը լավ պահպանելու,
արտադրողականությունը բարձրացնելու և գործավարձը կիրառե-
լու համար: Պայքար աշխատանքի կազմակերպման և վարձատրե-
ման տարրեր ձևեր ընտրելու շուրջը:

4. Պայքար հանրայնացման պայքար խորացնելու և կոլտնտե-
սությունն ավելի բարձր աստիճան տեղափոխելու համար: Անհա-
տական տնտեսությունը սեղմելու և վերացնելու, հանրայնացված
տնտեսությունը լայնացնելու, առաջինին սեղմված. յերկրորդին
ընկալելով վերարտադրություն տալու համար: Պայքար անհա-
տական կուտակման և կործողական արտադրությունների դեմ,
նյութական անհավասարության վերացման և անբաժանելի ֆոնդի
ուժեղացման համար: Հասարակական յեկամտից շատ կորդելու
և անհատական կուտակում կատարելու յերեւոյթը, յնչպես և ան-
հատական հասարակականից վեր դասելու հոգեբանությունը դեռ
կա, վորի դեմ վճռական պայքար մղելով միայն կամրանա կոլտն-
տեսությունը:

5. Պայքար ավելցուկը թաղցնելու, արհեստականորեն սպառ-
ման նորմաներն ավելացնելու, պետությունը տված պլանային-կոն-
տրակտացիոն պարտավորությունները չկատարելու և կոլտնտե-
սությունը մասնավոր շուկայի հետ կապելու յերեւոյթների դեմ:

6. Պայքար կոլտնտեսության ղեկավարման համար: Բատրակ-
ներին և չքավորներին կոլտնտեսություններում ղեկավար աշխա-
տանքների չքաչելը «տնտեսավարական փորձ չունի» պատրվակի
տակ թաղցնելով, նրանց անվորակ և քիչ վարձատրվող աշխա-
տանքներ տալը «բանվորական ուժի մասնագիտական ոգտագործ-
ման» պատրվակով, ղեկավարող և բարձր վարձատրվող աշխա-
տանքները միջակների վերին, ունեւոր խավի ձեւքը հանձնելը—
ահա որանք մեր կոլտնտեսական հակասություններն են և դասա-
կարգային պայքարի խնդիրներ: Իհարկե, լինում է նաև հակա-
ռակը: Միջակի թերաղնահատում, նրան ղեկավար աշխատանքի ա-
ռաջ չքաչելը, նրա տնտեսական փորձի չոգտագործումը: Այս յեր-
կուսն եւ ծայրահեղություններ են, վորոնց դեմ պետք է պայքարել:
Այս խնդրում կուտակցական ձիշտ գիծն այն է, վոր վերացնել նախ-
կին անհավասարության մնացորդները, լրիվ և մասնագիտորեն
ոգտագործել կոլտնտեսության աշխատավոր ձեւքերը, չահազըր-
դելվածություն ստեղծել կոլտնտեսականների մեջ իրենց վորակը
բարձրացնելու համար, հնարավորություն տալ լրիվ ոգտագործե-
լու տեխնիկական հնարավորությունները և բարձրացնելու կոլտն-
տեսության հասարակական արտադրությունը:

7. Այսպիսով պայքարի հիմնական պատճառներից մեկը կոլտնտե-
սականների նյութական դրությունը հավասարեցնելն է նրանից
դուրս գտնվող տնտեսության անհատական բաժինը հանրայնացնե-
լով կամ հավասար բաշխելու միջոցով: Այս տեղեկեցն արտահայտ-
վում է գլխավորապես չքավորության կողմից և հաղաղվում է
միջակին: Այս տեղեկեցը ներկա ետապում պրոգրեսիվ յերեւոյթ
չե պրոլետարիատի դասակարգային պայքարի տեսակետից, և
մենք այդ չենք պաշտպանում: Մենք պաշտպանում ենք չքավորու-
թյանը վոչ թե իր այս հավասարեցման մանր-բուրժուական տեղ-
դեկեցներում, այլ նրա նյութական դրությունը հիմնովին բարեւա-

վոր կարգին ալ միջոցները դժուր՝ հասարակական արտադրութեան բարձրացման, արտադրողաւորութեան բարձրացման և բաշխումն ըստ աշխատանքի կազմակերպելու սկզբունքով: «Մենք չենք կարծում, վոր միշտ կ'լինի՝ ինչ-վոր հապենայ վարչական կարգով վերացնել արտելի անդամների մնացած անհատական տնտեսութեան բաժինը» (Յակովլեւ-գեկուցում 16-րդ համագումարում): «Պահանջել, վոր գյուղացիները մտնելով արտել, անմիջապէս հրաժարվեն անհատական ամեն տեսակի սովորութեանցից և շահերից, համայնականից դուրս հավելյալ անհատական տնտեսութեան (կով, վոչխարներ, ընտանի քոչուրներ, տանը կից բանջարանոց) վարելուց, կողմնակի վատականներն իր համար ոգտագործելու հնարավորութեանից և այլն-նշանակում է մոռանալ մարքսիզմ-լենինիզմի այբուբենը» (16-րդ համագումարի բանաձևն ընդ. Յակովլեւի ղեկուցման սովորով):

«Վերարտադրութեան նոր սխառնմը, լինելով բոլոր տեսակի սոցիալիստական, պահպանում է մի շարք յուրահատուկ մոմենտներ, վոր նրան կապում են մանր-գյուղացիական ձեռնարկի վերարտադրութեան նախկին սխառնմի հետ»: Կոլտնտշարժման ներկա ետապում վերարտադրութեան նախկին սխառնմի հետ կապող մոմենտները միայն բացասական դեր չեն, վոր խաղում են. մենք այդ մոմենտները չենք գնահատում վորպէս ռեգրեսիվ և անմիջապէս վերացման յենթակա. մենք չենք կարող թուշել կոլտնտշարժման դեռևս իրեն չապառած ետապների վրայից: Նախկին հարաբերութեանների մնացորդները կոլտնտեսութեան ներսում վոչ թէ արգելակ են նրա զարգացման համար ներկա ետապում, այլ ոգնում են գյուղացիական հոծ մասսաներին վերարտադրութեան նոր սխառնմի մեջ առնելուն սոցիալիստականութեն վերադաստիարակելու համար: Իհարկէ այս հարցում պետք է խիստ շերտավորված մոտեցում ունենալ, թէ հնի վոր մնացորդներն են, վոր պայմաններում և վորքան ժամանակ կարող են պրոգրեսիվ դեր կատարել, վորոնք են աջակցում կոլտնտշարժման զարգացմանն ու ամրացմանը և ինչ պայմաններում կդադարեն այդպիսին լինելուց, վորոնք են խանգարող և ռեգրեսիվ մոմենտները, վորոնք յենթակա յենանմիջական վերացման: Այսպիսով հնի տարրեր մնացորդները տարբեր դեր են կատարում կոլտնտեսութեան մեջ. նրանց մի մասը կատարում է ռեակցիոն դեր, խանգարում է նորի զարգացմանը, պահպանում է նորի հետ անհամատեղելի հինը. մյուս մասը պահպանելով իրենց գոյութիւնը նորի հետ մեկտեղ, վոչ միայն չեն խանգարում նրա զարգացմանը, այլև նրա տարրերի ոգտագործումում մենք մենք կանուցում ենք նորը. նա մեզ ոգնում է կոլտնտեսութեանն ամրացնելու և մասսայական կոլտնտշարժում առաջացնելու գործում:

Վրամանք հակված են կոլտնտեսութեաններում դասակարգային պայքար չտեսնելու տենդով. սրանք զինված «յերանելի» կուրուքումբ, հայտարարում են՝ «ես ի՞նչ դասակարգային պայքարի խրնդիքներ են. դա սովորական անհարթութեաններ և գործնական վի-

ձեր են կոլտնտեսականների միջև, վոր կապ չունեն դասակարգային պայքարի հետ»: Իհարկէ այսպիսի դատողութեանները վոչ մի կապ չունեն սոցիալ-դադարական յերեւոյթները դասակարգային գոյութեան դիտելու և վերլուծելու մարքա-լենինյան պահանջի հետ: Յեթե մենք կանգնելինք այդ հողի վրա, անպայման կստանանք պրոլետարիատի դիրքերից դեպի մանր-բուրժուական ճահիճը: Այստեղ արժէ հիշեցնել ընդ. Լենինի այն խոսքերը, վորտեղ նա ընդունում է դասակարգային պայքարի մոմենտներ անգամ բանվոր դասակարգի մեջ: «Միքե դասակարգային պայքար կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանում այն չէ՞, վորպէսզի պաշտպանել բանվոր դասակարգի շահերը բանվորական այն միջոցով խմբերից, խավերից և շերտերից, վորոնք համատարբ են կառչում են կապիտալիզմի տրադիցիաներին ու սովորութեաններին և շարունակում են նայել խորհրդային իշխանութեան վրա առաջվապէս՝ տալ «նրան» քիչ և վատ աշխատանք, պոկել «նրանից» շատ փող» (Լենին, հ. 15, էջ 338. առաջին հրատարակութեան):

ԿՈՒՏԵՏՄԱՐԺՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ

Վրամանք կարծում են, վոր կոլտնտեսութեան ներքին սոցիալական հակասութեանները պետք է բացատրել մեր աշխատանքի թերութեաններով և սխալներով, կամ թէ նրանք բոլորում են կոլտնտեսութեաններ սպրդած կուլակային տարրերի գոյութեանից, վոր բավական է հեռացնել կուլակային տարրերին կոլտնտեսութեաններից, և այլևս վոչ սոցիալական հակասութեաններ կ'լինեն, վոչ դասակարգային պայքար, վոչ էլ անհավասարութեան: Այս «տեսութեանը» վոչ մի ըննադատութեան չի դիմանում: Միանգամայն սխալ է կարծել, վոր կոլտնտեսութեան սոցիալական հակասութեանները պայմանավորված են կուլակով, կամ բացատրվում են միայն նրա պայքարով: Յեթե մենք մի բոլոր կանգնելինք այս տեսակետի վրա, մեզ զինաթափ կանելինք մանր-բուրժուական մնացորդների դեմ պայքարելու և կոլտնտեսութեանը լիակատար սոցիալիստական տնտեսութեան դարձնելու գործում: Կոլտնտեսութեան սոցիալական հակասութեանները վոչ թէ այդ սոցիալական կուլակային տարրերի գոյութեամբ է պայմանավորված (իհարկէ այս մոմենտը ևս կա), այլ հիմնականում և գլխավորապէս մասնավոր սեփականատերերին սոցիալիստական տնտեսութեան լիակատար աշխատավորի փոխանցելու հակասական պրոցեսով, կոլտնտեսութեաններում սեփականութեան տարրերի ձեւերի գոյութեամբ, տնտեսութեան չհանրացնված մասի տարրեր չափերով: Կոլտնտեսութեան հիմնական հակասութեանը բոլորում է յերեկվա մանր արտադրողի դեռևս վորոշ չափով պահպանված յերեկվութեանից, նրա հատկապէս միջակ մասի տատանումներից: Անկասկած կուլակային տարրերի և նրանց ագենտուրայի աշխատանքը

գեր խաղում են հակասութիւնների ընդհանուր շղթայի մէջ, սա-
կան մոչ վորպես պայմանաւորող հանգամանք կամ հիմնական
պատճառ: Այստեղ հիմնականը մանր արտադրողի, մանր-բուր-
ժուականութեան բաղկումն է կոլտնտշարժման սոցիալիստական
բովանդակութեան հետ: Իսկ սա չի կատարում կուլակային տար-
րերի ազդեցութեան շրջանակներից մեկուսացած:

Յեթե մանր արտադրողի սոցիալիստական վերահաստեղծութիւնը
բոլոր այդ հակասութիւնները բացատրելինք յենելով վերո-
հիշյալ սխալ նախադրելից, ապա մենք դեղորինտացիայի կեն-
թարկելինք կոլտնտշարժման մարտիկներին մանր-բուրժուական
տարրերի դեմ պայքար մղելու գործում: Վորովհետեւ այդ «տեսու-
թիւնը» հակասում է այն հիմնական թեզին, ըստ վորի «գյուղացի-
ները, մանր տնտեսատերերը և բանվորները տարբեր դասա-
կարգեր են, և նրանց միջի տարբերութիւնը մենք կվճռեցանք
այն ժամանակ, յերբ կվճռեցանք մանր տնտեսութեան հիմքը
և կստեղծենք խոշոր, հսկայական մեքենայական տնտեսութեան նոր
հիմք» (Լենին): Վերահիշյալ «տեսութիւնը» յենու է այն
սխալ մեկնակետից, ըստ վորի պրոլետարիատի և գյուղացիութեան
միջի պայքարը պայքար է կուլակի և պրոլետարիատի միջև, և
բաղկան է մեկուսացնել կուլակին գյուղացիական ընդհանուր
մասսայից, վորպեսզի գրանտի էլ վերանան դասակարգային պայ-
քարի տարրերը պրոլետարիատի և գյուղացիութեան միջև:

Այս «տեսութիւնը» հիմնովին ժխտում է ընկ. Լենինի այն
դիտողութիւններով, վոր արել է բանվոր դասակարգի և գյուղա-
ցիութեան միջի դասակարգային պայքարի և նրա անսոցիալիստի-
կական ձեւերի մասին: Լենինի յերբորդ համաբանում «Դիտողու-
թիւններ պրոլետարիական դիկտատուրայի մասին» կոնսպեկտում
ասված է «յերկու հիմնական խնդիրներ (և համապատասխան էլ
յերկու նոր ձև) պրոլետարիատի դիկտատուրայի որով մղվող դա-
սակարգային պայքարի. 1) նկշել շահագործողների դիմա-
դրութիւնը, (և դեպի կապիտալիզմն ու կապիտալիստական տրա-
դիցիաները վերադառնալու ամեն մի ուղիղիւ), 2) սխտեմատիկ
դեկավարող ներգործութիւն (նույնպես պայքարը, բայց հա-
տուկ բնույթի, հաղթանարել վորտ, ճիշտ է, բոլորովին այլ դի-
մադրութիւն և բոլորովին այլ հաղթանարում) բոլոր աշխատա-
ւորների վրա, բացի պրոլետարիատից» (էջ 494): Նույն տեղում
ասված է՝ «առաջ տանել, դեկավարել, տանել իր հետեւից: Այս
հասկացողութիւնների դասակարգային բովանդակութիւնը: Բան-
վորներ և գյուղացիներ: Գյուղացիները վորպես աշխատավոր, գյու-
ղացին վորպես շահագործող, սպեկուլյանտ, սեփականատեր» (էջ
502): «Գյուղացիութիւնը վորպես աշխատավորութիւն—դաշնա-
կից է. վորպես սեփականատեր և սպեկուլյանտ—բշնամի»:

Այստեղից յերեւում է, վոր Լենինի յերբեք դասակարգային
պայքարը միայն կուլակի գոյութեան հետ չի կապել. Լենինի ա-
սածից բոլորում է, վոր այդ պայքարը (ճիշտ է, բոլորովին այլ ձե-
վերով) կլինի պրոլետարիատի և գյուղացիութեան միջև անդամ

այն ժամանակ, յերբ կուլակը մեկուսացված է: Լենինը մեզ բա-
ցատրում է այդ պայքարի ձեւերն ու բովանդակութիւնը՝ «դեկա-
վարել», «առաջ տանել», «իր հետեւից տանել», «ներգործել»
միշտ հակադրելով աշխատավոր գյուղացուն, սպեկուլյանտ և սե-
փականատեր գյուղացուն: Լենինի այս դիտողութիւնը չափ կարե-
ւոր է կոլտնտեսութեան ներքի հակասութիւնների սոցիալ-դա-
սակարգային էյութիւնն ըմբռնելու տեսակետից:

Յերբման արոցկիզմը լենինիզմի հետ չի ունի մարդիկ կար-
ծում են, վոր խոսել պրոլետարիատի և աշխատավոր գյուղա-
ցիութեան միջև յեղած դասակարգային պայքարի մասին, նշա-
նակում է կանգնել արոցկիստական տեսակետի վրա, վոր իրը թե
արոցկիզմն ընդունում է այդ պայքարը, իսկ մարքսիզմ-լենինիզմը
բացատրում: Յերբ մի խումբ կուսակցականներ գրում են, թե՝ «Մի-
թե պրոլետարիատը պայքար է մղում միջակի և չեմպրի հետ,
միջակի և չեմպրը չունեն դասակարգային հակասութիւններ
պրոլետարիատի հետ, այլ կերպ նիշտ է Տրոցկին», ապա նրանք
անհունալի և վտանգավոր չիտթ են մտնում այս հարցում, նույն-
նպատակով արոցկիզմը լենինիզմի հետ: Հայտնի չէ, վոր այս հարցում
արոցկիզմի էյութիւնն այն է, վոր նա «չի հավատում պրոլետա-
րիատի կողմից գյուղացիութեանը դեկավարելու հնարավորութեա-
նը, գյուղացիներին իր հետեւից տանելուն, մանր-գյուղացիական
արտադրողին սոցիալիստական աշխատավոր դարձնելու հնարա-
ւորութեանը»: Մարքսիզմ-լենինիզմը յերբեք էլ չի ժխտել պրո-
լետարիատի և գյուղացիութեան միջի հակասութիւնը, դասակար-
գային պայքարը, վորը պայմանավորված է գյուղացու մասնավոր
սեփականատեր լինելու հանգամանքով ու ձգտումներով:

Բանվոր դասակարգի և միջակ գյուղացիութեան միջև կա-
հակասութիւն, դասակարգային պայքար, բայց այս դեռևս նրանց
չի դարձնում դասակարգային հակասակործներ: Սրանք մոչ թե
անտաղանտական, այլ դաշնակից դասակարգեր են մեր պայման-
ներում: Այս դաշնակցութիւնը հիմնված է պրոլետարիատի կող-
մից միջակին դեկավարելու և սոցիալիզմի ուղիով տանելու
սկզբունքի վրա:

Կուլեկտիվ շարժման միջոցով պրոլետարիատը սոցիալիս-
տական կերպարանաւորումն է յենթարկում մանր արտադրող
գյուղացիութեանը, հաղթահարելով նրա մանր-բուրժուական
բնույթը, դարձնում է սոցիալիստական տնտեսութեան աշխա-
տավոր: Այստեղից առաջանում է մանր արտադրողի մասնավոր
սեփականատիրական և պրոլետարիատի սոցիալիստական վերա-
փոխութեան միջի հակասութիւնը: Բոլոր կոլտնտեսականները
վորտ չափով շարունակում են մնալ մանր արտադրողներ (բացի
նախկին պրոլետարիական շերտից)։ Զանի վոր մասնավոր սեփակա-
նութիւնը դեռևս վորտ չափով մնում է նաև կոլտնտեսական-
ներին մոտ, ապա պարզ է, վոր մանր արտադրողներին հատուկ
հակասութիւններ վորտ նշանակներով քափանցում են նաև կոլ-
տնտեսութեան ներքը: Կոլտնտշարժումը դասակարգային պայ-

բարի մի հատուկ ձև է՝ մանր մասնավոր սեփականատեր, մեկուսացած արտադրող աշխատավորի և հասարակական արտադրող պրոլետարիատի միջև:

Մանր արտադրողը մասնավոր սեփականատեր է և ձգտում է պահպանել և շատացնել այն կուտակումների միջոցով, «մեծ մարդկանց» շարքն անցնել: Սակայն նա վորպես մանր արտադրող, դեռևս չհասնում է, նա աշխատավոր է, արտադրում է սեփական աշխատանքով, արտադրություն սեփական միջոցներով, յերբեմն գնում է ուրիշ բանվորական ուժը, յերբեմն էլ ինքը վաճառում իր բանվորական ուժը: Այստեղից բխում է, վոր մանր արտադրողը հակադրվում է պրոլետարիատին՝ վորպես մասնավոր սեփականատեր և նրա շահերը պակասակալում են պրոլետարիատի շահերին՝ վորպես աշխատավոր: Ծնորհիվ մասնավոր սեփականության, նա մեկուսացված-մասնավոր աշխատավոր է. պրոլետարիատի խնդիրն է՝ վերացնել այդ մեկուսացող պարիսպը և նրան դարձնել հասարակական աշխատավոր: Մանր արտադրողի աշխատավորական կողմը պրոլետարիատի այս աշխատանքի հիմքն է կազմում, իսկ մասնավոր-սեփականատերական կողմը հակադրվում է այդ աշխատանքին: Այստեղից բխում է, վոր մանր արտադրողը, հատկապես նրա միջին շերտը, լի յե այդ յերկու տենդենցների պայքարով, հակասություններով:

Ինչպես ասացինք, կոլտնտեսության ներսում մանր-բուրժուական տենդենցներն արտահայտվում են յեկամտի մեծ մասը կոլտնտեսականների վրա բաշխելու, հանրայնացված ֆոնդերին՝ քիչ հատկացումներ կատարելու, սպրանքային մասը պակասեցնելու, կայուն գներով պետությունը տրվելիք բաժինը պակասեցնելու, ավելցուկը մասնավոր շուկայում վաճառելու, պետական պարտքը և հարկը տալուց խուսափելու և այլ ճանապարհներով: Կոլտնտեսություններում նկատվող այս տենդենցները հնի-մնացորդներն են, նրանք մոչ միայն չեն հաղթանակիլ, այլև աստիճանաբար կվերանան և կհաղթանակի իսկական սոցիալիստական տնտեսություն հաստատվող տենդենցը:

Չի կարելի ասել, վոր կոլտնտեսություններում, ասանձին կոլտնտեսականների ուժեղացման, անհատական կուտակման, հետևապես դեպի կապիտալիզմը տանող հնարավորությունների բոլոր գոտիներն ու ուղիներն իսպառ վառված են: Անհատական կուտակումը չահագործողական հարաբերությունների հաստատման աղբյուր կծառայի, յեթե այդ մասնատանտեր յերեւոյթ վրին ավելալ կոլտնտեսություն մեջ:

Կոլտնտաբժման հիմնական հակասություններն արահայտվում են հետևյալ ձևերով:

Առաջին հակասությունն այն է, վոր կոլտնտաբժմամբ ընդգրկված մանր արտադրողների տարբեր շերտերը տարբեր չափով են շահագրգռված այդ շարժումով: Գյուղացիության տարբեր շերտերի հակասությունները և պայքարը դաշտուն կերպով արտահայտվում են կոլեկտիվացման պրոցեսում: Կոլտնտաբ-

ժումն այն առանցքն է, վորի շուրջը ծավալվում եղասակարգային պայքարը գյուղում մի կողմից կուլակաբյան և այդ շարժումով ընդգրկված աշխատավոր գյուղացիության ու նրան ղեկավարող պրոլետարիատի միջև, մյուս կողմից գյուղացիության տարբեր խավերի միջև: Կոլտնտաբժումը դասակարգային պայքար է ընդդեմ չահագործման, վորտեղ առաջին հերթին չահագործված են գյուղի պրոլետարիական, կիսապրոլետարիական և սույա միջակային մասնաները: Շահագործվող խավերի շահերն ամբողջովին նույնանում են կոլեկտիվացման շահերի հետ, վորովհետև վերջինս բարձրացնում է նրանց կյանքի մակարդակը, աջատում աղքատացումից և փրկում կապիտալիզմի չահագործող լծից: Սրանով պետք է բացատրել այն հանգամանքը, վոր այդ շարժումն առաջին հերթին պաշտպանվում է այդ խավերի կողմից: Գյուղացիության միջին շերտի շահերը զուգադրվում են կոլեկտիվացման շահերին այն չափով, վորքանով նրանք աշխատավորներ են և կոլեկտիվացումը հնարավորություն է տալիս նրանց բարձրացնելու արտադրողականությունը, և կյանքի մակարդակը, նա ունի բարձր տեխնիկա և ստանում է օլետություն աջակցությունը. սակայն նրանց մասնատիրական շահերը, անհատական կուտակման միջոցով հարստանալու տենչը հակադրվում է կոլտնտաբժման հիմնական սկզբունքներին: Ծնորհիվ պրոլետարիատի ղեկավարության, կոլեկտիվ մտնող միջակի աշխատավորական կողմը հաղթանակում է այդ տենդենցներին:

Ասանձնապես չենք ծանրանա կուլակային տարրերի և յենթակուլակների մասին, վորոնք մտնում են կոլեկտիվ՝ այն պայթեցնելու նկատառումներով: Կուլակը կոլտնտեսություն մտնելով, նույն չահագործողական նպատակն է հետապնդում. նա աշխատում է առաջին հերթին քայքայել կոլտնտեսությունը, յեթե այդ հնարավոր չէ, սույա այն վերածել կեղծ կոլտնտեսության և հաստատել չահագործողական հարաբերություններ:

Կուլակի «սոցիալիզմի մեջ ներաճելու» աջ ուղորտունիստական տեսություն համաձայն կուլակները կոլտնտեսության ներսում տնտեսական, արտադրական կազմակերպչական դրական դեր կարող են կատարել: Նրանց պետք է ընդունել կոլտնտեսություն տնտեսավարական փորձն ուղադրելու համար: Կուլակը կոլտնտեսություն մտնելով կմիաձուլվի սոցիալիզմ կառուցող ուժերի հետ, վորովհետև «միևնույն է, տեղ չունի գնալու»: Դասակարգային հակառակորդի դեմ պայքարը թուլացնելու, դասակարգերի խաղաղ աշխատակցություն և փոխադարձ ոգնություն սահմանելու այս ուղորտունիստական տեսությունը անցման շրջանի դասակարգային պայքարի մասին չենինյան ուսմունքի ուղղակի ռեֆլեքիան և նշանակում աջերի կողմից: «Դասակարգերի վոչնչացում պրոլետարիատի դաժան դասակարգային պայքարի միջոցով»-այսպես է լենինի փորձումը:

«Դասակարգերի վոչնչացում դասակարգային մարման և կապիտալիստների սոցիալիզմի մեջ ներաճելու մանապարհով»-

ալապես և ընկ. Բուխարինի ֆարմուլան» (Ստալին, ճառ Կենտկոմի ապրիլյան պլենումում, 1929 թ.):

Կոլեկտիվացումը սյուրեռարական և կիսասյուրեռարական խավերի շահագործման դեմ մղվող պայքարի կազմակերպման հիմնական ձևն է, իսկ շահագործող դասակարգ կուլակուքյունը չի կարող շահագործված լինել շահագործումը հիմնահատակ անող այդ շարժման մեջ: Կոլտնտեսությունն սողսկած կուլակի և նրա ազնոտությանի հիմնական խնդիրն է՝ կազմավորել կոլեկտիվը, վարկարկել այն վորպես «անողտակար և անտնտեսաօրական ձեռնարկ», կասեցնել նրա աճումը, կազմակերպել և ուժեղացնել մասնավոր-սեփականատիրական ձգտումները և այն հակադրել կոլտնտեսությունը հետևողական-սոցիալիստական տիպի ձեռնարկի վերածելու գործին:

Յերկրորդ հակասությունն այն է, վոր մանր արտադրողների տարբեր շերտերը տարբեր տիպի և կառուցվածքի կոլտնտեսություն են ցանկանում: Ավելի բարձր խավերը ձգտում են կոոպերացման—կոլեկտիվացման... սեփնապարզ ձևերին, իսկ սյուրեռարական և կիսասյուրեռարական խավերը ձգտում են կոլեկտիվացման բարձր ձևերի: Ունենոր խավերը ձգտում են կոլեկտիվացման պարզ ձևերի, վորովհետև այստեղ անհատական տնտեսությունը հիմնականում պահպանվում է, արտադրական միջոցների համալսնացումը նախնական—ցածր աստիճանի վրա յե, աշխատակեր քիչ է հանրայնացված և անհատական կուտակման ավելի մեծ հնարավորություններ կան արտելում: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, վոր հողագործական և մեքենա-տրակտորային ընկերություններում գերակշռողն ունեվոր տարրերն են, իսկ բատրակային և չքավորական խավերը գերակշռում են կոմուններում և ապա արտելներում:

Հաճախ ունենոր տարրերն աշխատում են թաղնիկ կոլտնտեսություն այդ պարզ ձևերի մեջ և աստիճանաբար նրանց կեղծ կոլտնտեսությունների վերածել: Յեթե հողորդտաղործական, կամ մեքենատաղործական ընկերությունները յերկար ժամանակ մնում են միկնույն աստիճանի վրա, հանրայնացման սյուրեցնները չեն խորացվում և չեն վերածվում արտելի, նրանք հաճախ դառնում են կեղծ կոլտնտեսություններ և անհատական ուսուցման—կուտակման միջոց: «Բոլոր Այուքերի անալիզի արդյունքները ցույց են տալիս, վոր կոլեկտիվների շատ մնալը կոլեկտիվացման նախնական ձևերում, նշանակում է դուրս հանել կոլեկտիվացումից նրա սոցիալիստական բովանդակությունը, նրան վերածել, շնորհիվ նրա հատուկ հակասությունների, սեփական լիկվիդացիայի միջոցի. իր հակադրությանը, ամրապրնդելու անհատական տնտեսությունը, և զարգացնելու համապատասխան մասնավոր-սեփականատիրական և վոչ թե կոլեկտիվիստական հարաբերություններ» (Մարքսիստ աղբարնիկները ստալին համագումարի աշխատանքներ, 1-ին հատոր):

Այսպիսով գյուղացիական տարրեր չերտերը, տարրեր չա-

հաղորդվածությունն կոլտնտեսության տարրեր ձևերը ընտրության մեջ, և այստեղ արտահայտվում է նրանց միջի սոցիալական հակասությունը:

Յերկրորդ հակասությունը արտահայտվում է անհատական և կոլեկտիվ արտադրության պայքարի միջոցով: Քանի կոլտնտեսականներն ունեն արտադրության միջոցների վորոշ մասի մասնավոր սեփականություն, կլինի նաև սյուրեռարական և կոլեկտիվ արտադրության միջև ընդլայնված վերարտադրության համար: Յեթե կոլտնտեսությունն ապրում է ընդլայնված վերարտադրություն, իսկ կոլտնտեսականների անհատական տնտեսությունը պարզ կամ սեղմված վերարտադրություն, այդ դեպքում այս հակասությունը արագորեն վերանում է. յեթե կոլտնտեսությունն ապրում է պարզ կամ սեղմված վերարտադրություն, իսկ կոլտնտեսականների անհատական տնտեսությունը ընդլայնված վերարտադրություն, այս հակասությունը սրվում է, իսկ կոլտնտեսության գոյությունը դառնում անհնարին:

Չորրորդ հակասությունը դա դասակարգային հարաբերությունների մասնորոշներն են կոլտնտեսություններում, տարրեր սեփականությունների դերը և սրանից բղխող սոցիալական հակասությունները: Կոլտնտեսություններում գոյություն ունեն յերեք կարգի-տիպի սեփականություններ՝ հասարակական, կոլեկտիվ և անհատական: Ներկա ետապում անհատական սեփականությունից փայլն կամ կոլեկտիվ սեփականության անցնելը (բաժանելի Փոնդ) ավելի մեծ սոցիալական վտիոխություններ է առաջացնում, քան սրանից անբաժանելի Փոնդերին անցնելը: Պրակտիկայում այդ յերեռ Փոնդերի միջև տարբերություն չկա, չնայած նրան, վոր բաժանելի Փոնդի դեպքում ավելի հեշտ է վերադառնալ անհատական սեփականության, իսկ անբաժանելի Փոնդի դեպքում այդ կատարելապես անհնար է. սակայն այս մոմենտի նշանակությունը վոչ թե ամենորյա պրակտիկայի, այլ գերազանցապես պերսպեկտիվայի մեջ է: Սրանից յերեռում է, վոր այնուամենայնիվ այդ յերկու Փոնդերի միջև տարբերություն կա, բաժանելի Փոնդը կոլտնտեսականի անհատական սեփականությունն է, վոր կարող է հետ ստանալ կոլեկտիվից հեռանալիս, իսկ անբաժանելի Փոնդը հանրային սեփականություն է. չնայած նրան, վոր պրակտիկայում այդ յերկու տարբերությունը վերանում է և նրանք կոլեկտիվ սեփականության տարրեր ձևերն են կաղմում, այնուամենայնիվ չպետք է մոռանալ, վոր անբաժանելի Փոնդը հետևողական-սոցիալիստական հարաբերությունների ստեղծման և կոլտնտեսության շեշտված սոցիալիստական բովանդակություն տալու հիմքն է:

Մենք ասացինք, վոր կոլտնտեսություններում կա նաև անհատական սեփականություն, վորը մասնավոր սեփականատիրական, անհատական ուսուցման և անգամ կուլակային կապիտալիստական տնտեսականների հիմքն է կաղմում: Այս անհատական սեփականությունն իր զարգացման դեպքում վորոշ պայմաններում

այսպես է ընկ. Բուխարինի փորձումը» (Ստալին, ճառ Կենտկոմի աստիճանի պլենումում, 1929 թ.):

Կոլեկտիվացումը պրոլետարական և կիսապրոլետարական խավերի շահագործման դեմ մղվող պայքարի կազմակերպման հիմնական ձևն է, իսկ շահագործող դասակարգ կոլեկտիվացումը չի կարող շահագործված լինել շահագործումը հիմնահատակ անող այդ շարժման մեջ: Կոլտնտեսություն սողոսկած կուլակի և նրա աղետոտության հիմնական խնդիրն է՝ կազմավորել կոլեկտիվը, վարկեր կել այն վորպես «անողատակար և անտնտեսախարական ձեռնարկ», կասեցնել նրա աճումը, կազմակերպել և ուժեղացնել մասնավոր-սեփականատիրական ձգտումները և այն հակադրել կոլտնտեսությունը հետևողական-սոցիալիստական տիպի ձեռնարկի վերածելու գործին:

Յերկրորդ հակասությունը այն է, վոր մանր արտադրողների տարբեր շերտերը տարբեր տիպի և կառուցվածքի կոլտնտեսություն են ցանկանում: Սովելի բարձր խավերը ձգտում են կոոպերացման—կոլեկտիվացման ամենապարզ ձևերին, իսկ պրոլետարական և կիսապրոլետարական խավերը ձգտում են կոլեկտիվացման բարձր ձևերի: Ունենոր խավերը ձգտում են կոլեկտիվացման պարզ ձևերի, վորովհետև այստեղ անհատական տնտեսությունը հիմնականում պահպանվում է, արտադրական միջոցների համրայնացումը նախնական-ցածր աստիճանի վրա չէ, աշխատանքը բիչ է համրայնացված և անհատական կուտակման ավելի մեծ հնարավորություններ կան արտելում: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, վոր հողագործական և մեքենա-տրակտորային ընկերություններում գերակշռողն ունեվոր տարրերն են, իսկ բատրակային և չքավորական խավերը գերակշռում են կոմունաներում և ապա արտելներում:

Հաճախ ունենոր տարրերն աշխատում են թաղնիկ կոլտնտեսություն այդ պարզ ձևերի մեջ և աստիճանաբար նրանց կեղծ կոլտնտեսությունների վերածել: Յեթե հողագործական, կամ մեքենագործագործական ընկերությունները յերկար ժամանակ մնում են միևնույն աստիճանի վրա, հանրայնացման պրոցեսները չեն խորացվում և չեն վերածվում արտելի, նրանք հաճախ դառնում են կեղծ կոլտնտեսություններ և անհատական ուռճացման—կուտակման միջոց: «Թույր մյուսերի անալիզի արդյունքները ցույց են տալիս, վոր կոլեկտիվների շատ մնալը կոլեկտիվացման նախնական ձևերում, նշանակում է դուրս հանել կոլեկտիվացումից նրա սոցիալիստական բովանդակությունը, նրան վերածել, շնորհիվ նրա հասուկ հակասությունների, սեփական լիկվիդացիայի միջոցի, իր հակադրությանը, ամրապնդելու անհատական տնտեսությունը, և զարգացնելու համապատասխան մասնավոր-սեփականատիրական և վոչ թե կոլեկտիվիստական հարաբերություններ» (Մարքսիստ աղբյուրներին ստալին համագումարի աշխատանքներ, 1-ին հատոր):

Այսպիսով գյուղացիական տարրեր շերտերը, տարրեր շա-

հաղորդվածություն ունեն կոլտնտեսության տարրեր ձևերի ընտրության մեջ, և այստեղ արտահայտվում է նրանց միջի սոցիալական հակասությունը:

Յերրորդ հակասությունը արտահայտվում է անհատական և կոլեկտիվ արտադրության պայքարի միջոցով: Փանի կոլտնտեսականներն ունեն արտադրության միջոցների վորոշ մասի մասնավոր սեփականություն, կլինի նաև պայքար անհատական և կոլեկտիվ արտադրության միջև ընդլայնված վերադարձությունը: Յեթե կոլտնտեսությունն ապրում է ընդլայնված վերադարձություն, իսկ կոլտնտեսականների անհատական տնտեսությունը պարզ կամ սեղմված վերադարձություն, այդ դեպքում այս հակասությունը արագորեն վերանում է. յեթե կոլտնտեսությունն ապրում է պարզ կամ սեղմված վերադարձություն, իսկ կոլտնտեսականների անհատական տնտեսությունը ընդլայնված վերադարձություն, այս հակասությունը սրվում է, իսկ կոլտնտեսության գոյությունը դառնում անհնարին:

Չորրորդ հակասությունը դա դասակարգային հարաբերությունների միացորդներն են կոլտնտեսություններում, տարրեր սեփականությունների դերը և սրանից բխող սոցիալական հակասությունները: Կոլտնտեսություններում գոյություն ունեն յերեք կարգի-տիպի սեփականություններ՝ հասարակական, կոլեկտիվ և անհատական: Ներկա ետապում անհատական սեփականությունից փայլն կամ կոլեկտիվ սեփականության անցնելը (բաժանելի ֆոնդ) ավելի մեծ սոցիալական փոփոխություններ է առաջացնում, քան սրանից անբաժանելի ֆոնդերին անցնելը: Պրակտիկայում այդ յերկու ֆոնդերի միջև տարբերություն չկա, չնայած նրան, վոր բաժանելի ֆոնդի դեպքում ավելի հեշտ է վերադառնալ անհատական սեփականության, իսկ անբաժանելի ֆոնդի դեպքում այդ կատարելապես անհնար է. սակայն այս մոմենտի նշանակությունը վոչ թե ամենորայ պրակտիկայի, այլ գերազանցապես պերսպեկտիվայի մեջ է: Սրանից յերևում է, վոր աշուսամենայնիվ այդ յերկու ֆոնդերի միջև տարբերություն կա, բաժանելի ֆոնդը կոլտնտեսականի անհատական սեփականությունն է, վոր կարող է հետ ստանալ կոլեկտիվից հեռանալիս, իսկ անբաժանելի ֆոնդը հանրային սեփականությունն է. չնայած նրան, վոր պրակտիկայում այդ յերկուսի տարբերությունը վերածնում է և նրանք կոլեկտիվ սեփականության տարրեր ձևվերն են կազմում, այնուամենայնիվ չպետք է մոռանալ, վոր անբաժանելի ֆոնդը հետևողական-սոցիալիստական հարաբերությունների ստեղծման և կոլտնտեսության շեշտված սոցիալիստական բովանդակություն տալու հիմքն է:

Մենք ասացինք, վոր կոլտնտեսություններում կա նաև անհատական սեփականություն, վորը մասնավոր սեփականատիրական, անհատական ուռճացման և անգամ կուլակային կապիտալիստական տենդենցների հիմքն է կազմում: Այս անհատական սեփականություն իր դարգացման դեպքում վորոշ պայմաններում

կարող ե անաշտանել շահագործողական հարաբերությունները: Գերեմի կարող ե անաշտանել, վոր կոլտնտեսությունը չզնա սո-
ցիալիստական դարձուման ճանապարհով, այլ դառնա անհա-
տական ուղևորման կուլակային բուն: Հնարավոր ե արդյոք,
վոր կոլտնտեսականների անհատական կուտակման հետևանքով
առաջանան շահագործողական հարաբերություններ կոլտնտեսու-
թյուններում: Վոչ, հնարավոր չե: Պրոլետարական ղեկավարու-
թյան ազդեցության դեպքում, գյուղատնտեսության արագաճումը
ինդուստրիալացման հիման վրա, դիտությունը ե տեխնիկայի մաս-
նայական ոգտագործումը տնտեսության մեջ բարձրացնելով ար-
տադրողականությունը ե կոլտնտեսականների նյութական բա-
րեկեցությունը, աստիճանաբար կթուլացնի ե կվերացնի անհատա-
կան տնտեսություն ունենալու ձգտումը, ե այն կվերացվի հան-
րայնացված տնտեսություն հետ:

Կոլտնտեսականի անհատական տնտեսությունը իր արտա-
դրական կշռով յեկիրորդական նշանակություն ունի: Հիմնականը
կոլեկտիվ տնտեսությունը ե, իսկ անհատականը կցորդ ե նրան ե
սոցալոգական նշանակություն ունի: Ես յեկամտի հիմնական մա-
սը ստանում ե կոլտնտեսությունից ե շահագործված ե նրանով:
Ես այլևս անհատական արտադրող չե, ինչպես գործարանում աշ-
խատող, բայց գյուղում մասնակի տնտեսություն ունեցող բան-
վորը գյուղացի չե:

Կոլտնտեսության մեջ շահագործողական հարաբերություննե-
րի հաստատում կարող ե անելի ունենալ այն դեպքում, յեթե կոլ-
տնտեսականների ունեցվածքային անհավասարությունը պակա-
սելու փոխարեն աճի, յեթե ի հաշիվ հանրայնացված տնտեսու-
թյան աճի անհատական կուտակումը, յեթե կոլտնտեսականների
նյութական անհավասարությունը վերանալու փոխարեն ավելանա
ու մեծանա: Այդպիսի կոլտնտեսություն անխուսափելիորեն կվե-
րածվի կեղծ կոլտնտեսության ե կզառնա անհատական հարստաց-
ման աղբյուր ունենալների համար: Այսպիսի կոլտնտեսություննե-
րում սոցիալիստական հարաբերությունները վոչ միայն չեն ա-
ճում ու ամրանում, այլև նվազում են, տեղի տալով նորը ձևեր
ընդունած շահագործողական հարաբերություններին: Այն կոլտն-
տեսությունները կարող են այդ ուղիով գնալ, ուր մուտք են գա-
ծել կուլակային տարրերը, վորտեղ ունենոր խախն գլալի մասն ե
կաղմում, վորտեղ թույլ ե չքավորություն ու պրոլետարական
ղեկավարություն, վորտեղ կուտակցական ե խորհրդային մար-
մինները ղեկավարությունը վատ հիմքերի վրա յե գրված:

Հիմնադրվող— դա միջակից բոլորող հակասությունն ե կոլեկ-
տիվում: «Միջակից կոլտնտեսություններում, իր նախկին հակա-
սական բնույթի հետ մեկտեղ, վորը կայանում ե նրանում, վոր նա
մի կողմից աշխատավոր ե, մյուս կողմից՝ սեփականատեր, կո-
լեկտիվացման պրոցեսի վորոշ շրջանում ստանում ե ուրիշ հա-
կասական բնույթ, վորը կայանում ե նրանում, վոր նա մի կողմից
դառնում ե կոլեկտիվ արտադրող, շահագրգռված կոլեկտիվ տրե-

տնադրյալը. կոլեկտիվ սեփականությունը, մյուս կողմից՝ աշ-
խատանալով, դեռևս չի դադարում անհատական սեփականա-
տեր յինելուց. վորը շահագրգռված ե անհատական սեփականու-
թյամբ: Այս շրջանում նա բաժանվում ե այսպես. մի գծով աշ-
խատավոր-սեփականատեր, մյուս գծով՝ կոլեկտիվ արտադրող-
անհատական արտադրող: Կոլեկտիվ շարժման ել ավելի ուժեղա-
ցող քափը ե կոլեկտիվացման խորացումը լուծում ե միջակի աշս
ներքին հակասությունը» (Մարքսիստ ագրարիկները առաջին
համագումարի աշխատությունների առաջին հատոր):

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԳԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՏԱՐԻՆԵՐԻ ՎԵՐԱՅՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

ՏՆԵՆԻԿԱՅԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՅՄԱՆ
ԳՈՐԾՈՒՄ

Կոլտնտեսության սոցիալական հակասությունների վե-
րացման հիմնական միջոցը ինդուստրիալացումն ե ե պրոլետարա-
կան ղեկավարության ազդեցությամբ: «Մանր յերկրագործի վերա-
մշակման ե նրա ամբողջ հոգեբանության ու սովորույթների վե-
րափոխման գործը սերունդներ պահանջող գործ ե: Լուծել այդ
խնդիրը մանր յերկրագործի նկատմամբ, անողջացնել այսպես
ասած նրա ամբողջ հոգեբանությունը կարող ե միմիայն նյութա-
կան բազան, տեխնիկան, տրակտորների ու մեքենաների գործա-
դրումը մասսայական մասշտաբով յերկրագործության մեջ, ելեկ-
տրիֆիկացիան մասսայական մասշտաբով» (Լենին): Բանվոր դա-
սակարգի ե գյուղացիության տարբերությունը «մեքենա կվերաց-
նենք այն ժամանակ, յերբ կվերացնենք մանր տնտեսության հիմ-
քը ե կստեղծենք հսկա, խոշոր մեքենայական տնտեսության նոր
հիմք» (Լենին):

Կենտրոնական Կոմիտեի 1929 թ. նոյեմբերյան պլենումի բա-
նաձևի մեջ կարդում ենք. «Ներկա շրջանում կոլտնտեսականաբարու-
թյան հիմնական ղեկավարությունը տեխնիկական բազայի թուլու-
թյունն ե: Ուշոր, բարձր արտադրողականությունը ե իսկական
սոցիալիստական արտադրություն կարելի յե կառուցել գյուղա-
տնտեսության մեջ միայն ժամանակակից մեքենայական տեխնի-
կայի ե էլեկտրիֆիկացիայի բազայի վրա: Սրա համար ել առաջնա-
կարգ նշանակություն ունի նյութական-տեխնիկական բազայի
ստեղծումը գյուղի սոցիալիստական վերակառուցման համար»:

16-րդ համագումարը կոլտնտեսական ե գյուղատնտեսու-
թյան բարձրացման մասին բնորոշում բանաձևում, նորից աշ-
խատանալով տեխնիկայի բարձրացման ե նրա նշանակության
հարցին, ասում ե. «Կոլտնտեսություններում գյուղացիները վերջ-
նականապես կթուլեն մանր-սեփականատիրական հոգեբանու-

թյունը, մասնավոր մանր սեփականատերերի սերունդներից ժառանգած մասնավոր տնտեսութեան կուտակման ծախսը, միայն կուտակման թյունները խոշոր մեքենայացված բազայի վրա դնելու տարիներ տարված աշխատանքի հետևանքով, կուտակման թյուններից կադրեր ստեղծելու և ամբողջ կուտակման մասնաձևի կուտակման վերելք առաջացնելու համառ աշխատանքով... կուտակման շարժումը կարող է բարձրանալ դեպի ավելի բարձր ձև — դեպի կոմունա — համաձայն տեխնիկական բազայի բարձրացման, կուտակման կադրերի և կուտակմանների կուտակման մակարդակի աճման այն դեպքում, յեթե իրենց գյուղացիներն անսպառնալիք ընդունեն համապատասխան փոփոխություններ մտցնել կանոնադրության մեջ այդ իրականացնելով վարից»:

Այսպիսով կուտակման հակասությունների և դասակարգային պայքարի վերացման հետևյալ ուղին է նշվում՝ ա) կուտակման տեխնիկական բազայի վերակառուցում. կուտակման թյունը հագեցնել տեխնիկայի վերջին խոսքով արտադրված գյուղատնտեսական մեքենաներով. կուտակման արտադրական պրոցեսներն աստիճանաբար տեղափոխել երկտրիֆիկացիայի բազայի վրա: բ) կուտակմաններից պատրաստել և առաջ քաշել խոշոր սոցիալիստական տնտեսության կազմակերպիչներ ու ղեկավարներ: գ) Տեխնիկայի, գիտության և հատկապես ագրոնոմիական գիտելիքներին տիրապետելու համար անհրաժեշտ է կուտակման հեղափոխության խորացումը և լայն ծավալումը կուտակմանների մեջ. առանց համապատասխան գրագիտության և պրոլետարական կուտակմանության բարձրագույն տիրապետելու անհնար է մեքենայացված խոշոր տնտեսության լայն աշխատավորներ ու վորակյալ կազմակերպիչներ ունենալ: դ) Պրոլետարական ղեկավարության ապահովումն այն հիմնական պայմանն է, առանց վորի վաչ միայն չեն վերանա կուտակման թյունները, այլև անելով կֆայգայեն կուտակման թյուններն ընդհանրապես:

Կուտակման թյուններ կարող են կազմակերպվել նաև մանր արտադրողների պրիմիտիվ դործիքների միացման հիման վրա, սակայն նրանք չեն կարող ամրանալ և իսկական սոցիալիստական տնտեսություններ դառնալ, յեթե արմատապես չվերակառուցվեն նրանց նյութական տեխնիկական հիմքը:

Սկզբից տվեք բարձր տեխնիկա, տրակտորներ և գյուղատնտեսական մեքենաներ, հետո կազմակերպեցեք կուտակման թյուններ — այսպես է աշխարհ և սոցիալիստների դրույթը: «2ի կարելի ապագա տրակտորների հիման վրա այստեղ կուտակման թյուններ կառուցել» (սոցիալիստական ուղիների մասին № 11, 30 թ.): Կամ «չի կարելի ապագա աշխատանքով այստեղ նոր գործարաններ կառուցել» (Բուխարին, Տնտեսագետի դեմոկրատիկ թյունները): Գյուղացիների պրիմիտիվ դործիքների հանրայնացման հիման վրա կառուցելով կուտակման թյուններ, կուտակման թյունը միևնույն

ժամանակ բաշխելու տեղափոխվելով գինում և նրանց նոր տեխնիկայով:

Պայքարելով կուտակման տեղափոխման թյունները և անմիջականորեն մեխանիզացիայից կախման մեջ դնելու ուղիներով նյութական մոտեցման դեմ, պետք է միաժամանակ պայքարել տեխնիկայի թերակազմության տեխնիկաների դեմ: Յեթե կուտակման թյունը ամրացման, կուտակման տնտեսության արտադրական և ֆեկտի լրիվ ուղիներում, դեպի անհատական տնտեսություններ վերադառնալը անհնարին դարձնելու և կուտակման թյունը լիակատար սոցիալիստական տնտեսություն դարձնելու համար խիստ անհրաժեշտ է նոր տեխնիկական բազա, ապա ապրիլի հարապետելով միայն համապատասխան կազմակերպման հիման վրա ստեղծված նյութադրային շնորհիվ: Ներկա շրջանում այս յերկու դործիքները պայմանավորում են իրար, փոխադարձաբար նյութադրային ստեղծում և զարգացման ճանապարհ հարթում: «Կուտակման թյունների հսկայական նշանակությունը հենց այն է, վոր նրանք հանդիսանում են յերկրագործության մեջ մեքենաների և տրակտորների գործարարման հիմնական բազան» (Ստալին): Այս թեզի ամենալայն ապացույցը տվեց գյուղի ինդուստրացման պրակտիկան վերջին յերկու տարում: Գանի չկար մասնաշաղկապ կուտակման թյունը — թյունը և քանակապես անհշտ է յին մեքենա-տրակտորային կառույցները. կուտակման թյունը ծավալման և հաղթանակների հետ զուգահեռ սկսեցին սուղիկ պես աճել նաև մեքենա-տրակտորային կառույցները:

«Գյուղացիական արոքից. քեռուց և միացրած, չի կարելի խոշոր գյուղացիական տնտեսություն ստեղծել, ինչպես ձկնորսական մակույկներից չի կարելի նալ պատրաստել» (սոցիալիստական ուղիների մասին 1930 թ.): Տրոցկիստներն այստեղ տրադիցիոն կերպով կրկնում են սոցիալ-դեմոկրատիայի տեսակետը, վոր տեխնիկայի սոստատար և կազմակերպիչ դերը կապիտալիզմի պարզանքներում — նույնն է, ինչ սոցիալիզմի. մինչդեռ մեքենայի սոցիալական եֆեկտը մեղանում այլ է, քան կապիտալիստական հասարակականում: Իհարկէ, մարքսիստական տնտեսագիտության սկզբունքներից մեկն այն է, վոր վորոշ համաչափություն կա հասարակական-տնտեսական նվաճումների և արտադրական ուժերի զարգացման միջև. բայց այս չի նշանակում, վոր տեխնիկան ինքնիրեն լուծում է ինդիքները, վոր պրոլետարիատը չի կարող խոշոր տնտեսությունների կառուցման գուղահեռ, նրանց արտադրական հարաբերությունների փոփոխման հետ մեկտեղ վերադնել նրանց նաև տեխնիկական: Միթե փորձը ցույց տվեց, վոր «գյուղացիական գործիքների պարզ գումարումը, կուտակման թյունների ներսում այնպիսի եֆեկտ տվեց, վորի մասին չեյին յերազեղ մեր պրակտիկ աշխատողները» (Ստալին — ճառ մարքսիստ ագրարիկների համագումարում):

Այսպիսով մեղանում վաչ միայն տեխնիկան պետք է հիմք ճառայի սոցիալ-տնտեսական վերակառուցման համար, այլև այդ

վերականգնումը պետք է բազա հանդիսանա, նախադրյալներ պատկաստի տեսնելիայի առաջխաղացման և տնտեսությունը մեխանիզացիայի յեկաքակելու համար: Ով չի տեսնում այս պրոցեսի յերկմիասնականությունը, ով չի ընդունում, վոր սրանք փոխադարձաբար իրար լրացնող, զարգացնող և առաջ հրող ամբողջականություն յերկու անբաժան և միասնաբար արտահայտվող կողմեր են, նա մոռանում է (յեթե միայն մոռանում է) սոցիալիստական շինարարության մարքս-լենինյան այբուբենը:

Իսկ Տրոցկին, իհարկե, այդ չի մոռացել, նա պարզապես վերադարձել է իր նախկին դերերը, կանգնել մարքսիզմի ունեզատմանը ի բանակում, համաշխարհային բուրժուակայի առաջավոր պոստում և պաշտպանում է նրա հենարան սոցիալ-դեմոկրատիայի տեսակետը: Ինչու, վորպես դասակարգ վերացող կուլակին և ի զվարճություն ինտերվենցիա պատրաստող միջազգային խմբերի ինքնին նա բարբառում է, — մի վախեցեք, «արարների միջոցով կոլտնտեսություն չի կառուցվի»: Ի դեպ հիշատակենք, եզ վոր տեղ է դրած ու ասած, թե մենք միայն արտերեր ունենք. եզ վոր տեղ է կուսակցությունն ասել ու փորձել, վոր մենք պետք է կուտնտեսություններ կառուցենք միայն արտերերի միջոցով: Եզ ինչու Տրոցկին արհեստական կուրություն է գինում ինդուստրացման հիման վրա սոցիալիստական դյուդատնտեսություն դաշտերում գործող հարյուր հազար տրակտորները, կոմբայները, շարքայաները, կալսող և հնձող մեքենաները չտեսնելու համար: Վորովհետե նա փորձեցրվելով դասակարգային հակառակորդին, խոտացել է հեղինակավոր գրպարտություններով պախարակել սոցիալիզմի կառուցման նվաճումները մեզանում. չե՞ վոր պետք է իրականությունը տեղափոխի Տրոցկու սխեմայում, չե՞ վոր արոցակատական խորհրդատություն համաձայն «չի կարելի սոցիալիզմ կառուցել մի յերկրում, այն ել հետամնաց»: Տրոցկու համար ի՞նչ փուլ, վոր կենդանի իրականություն փայլուն փորձն ու փաստերը ողն են ցնդեցրել այդ կարկատած տեսություն կտորները: «Յեթե իրականությունը դեմ է դնում իմ տեսությունը, ալեյի վատ նրա համար», այսպես է Տրոցկու մեթոդոլոգիայի գավելտական կրախի տկորդը:

Տրոցկին անտեսում է մարքսիստական այն մոտեցումը, վոր արտադրական հարաբերությունները կարծրացած, քարացած հասկացություն չեն, վոր սա սոցիալական պրոցես է, վորն անընդհատ փոփոխվում է: Մարքսիզմը դիտե միայն արտադրական հարաբերությունները դինամիկայի մեջ. փոխվեց սոցիալ-տնտեսական հասարակարգը, փոխվում է նաև բանուժի և արտադրություն միջոցների միացման յեղանակը, փոխվում է սոցիալական և արտադրական հարաբերությունների բնույթը:

Վերնաշենքը, արտադրական հարաբերությունները վոչ միայն արտադրողական ուժերի զարգացման մակարդակի պասսիվ ակթիվը չեն, այլ վորպես արտադրության սոցիալիստական ձևի

հարաբերություն, իրենց հերթին աղղում են նրա զարգացման վրա: Յեթե ճիշտ լինել «տնտեսական մատերիալիզմը» յեկող այն մոտեցումը, վոր արտադրողական ուժերի զարգացման մակարդակը մեխանիկորեն պայմանավորում է արտադրական հարաբերությունները, ապա ճիշտ կլինել և բուրժուական տնտեսագետների այն տեսությունը, ըստ վորի մենք պետք է ընդհանրապես զարգացնենք արտադրողական ուժերը անկախ նրա սոցիալական բովանդակությունից, և յերբ նրանք կհասնեն զարգացման վորոչ-բարձր մակարդակի — սոցիալիստական արտադրական հարաբերություններն ինքնին, ինքնահոսով կհաստատվեն:

Մեզանում արտադրական հարաբերությունների տրանսֆորմացիան նախորդում է և իր հետեվից տանում արտադրողական ուժերի զարգացումը, իհարկե հիմք ունենալով նրա զարգացման միջին մակարդակը մեզանում: Սոցիալիստական ունեւտրուկյան առաջ է մղում արտադրողական ուժերի զարգացումը: Մեր սոցիալիստական վերականգնման փորձն ապացուցեց, վոր արտադրողական հարաբերությունների փոփոխումը արտադրողական ուժերի զարգացման պասսիվ և ակտիվատիվ ակթիվը չէ:

Ինչպես արտադրողական հարաբերությունների «խորհրդային սխեման» առաջացրեց ինդուստրացման բարձր տեմպեր, այնպես ել կոլտնտիշնարություն ունենալով արտադրողական ուժերի զարգացման անգամ ցածր մակարդակ, հանդիսացավ նախադրյալ, առաջատար, ողակ և առաջացրեց արտադրողական ուժերի զարգացման լայն հնարավորություններ դյուդատնտեսության մեջ: Խորհրդային սխեմանում սոցիալական տրանսֆորմացիան հիմք ունենալով արտադրողական ուժերի զարգացման յեղած մակարդակը, հիմք է նախադրյալ է հանդիսանում արտադրողական ուժերի հետագա բուռն զարգացման և ծաղկման համար: Մենք ունենք արտադրողական ուժերի այն միլիոնում մակարդակը, վորը հնարավորություն է տալիս լայն ծավալելու կոլտնտիշնարություններ իր «մանուֆակտուրային շրջանում». սակայն կոլտնտիշնարությունն ամբացման համար անհրաժեշտ է վճուականորեն բարձրացնել այդ մակարդակը:

Ինչպես ասացինք, այդ հակասությունների վերացման աստիճանը չափվում է դյուդատնտեսության ինդուստրացման աստիճանով, իսկ վերջինիս ընթացքի մասին կարելի յե պատկեր կաղմել հետևյալ թվերից. դյուդատնտեսական մեքենաշինարարության պրոդուկցիան միլիոն ուղղիներով հետևյալ պատկերն ունի. 1921-22 թվին — 6,9. 1922-23 թվին — 11,8. 1923-24 թ. — 16,4. 1924-25 թ. — 39,9. 1925-26 թ. — 70,0. 1926-27 թ. — 94,3. 1927-28 թ. — 151,5. 1928-29 թ. — 212,4. 1929-30 թ. — 350, 1931 թվին 800 միլիոն ուղղ. (նախատեսվում է): Իսկ 1913 թ. յեղել է 60-65 միլիոն ուղղ: Նախնական հաշիվներով հնգամյակի վերջում դյուդատնտեսական մեքենաների արժողությունը կհասնի 6 միլիարդի, իսկ տրակտորային պարկինը՝ 3 միլիարդի: Ամբողջ դյուդատնտեսության ինվենտարի արժեքը 1933 թվին կլինի 9 միլիարդ

ուուրի, այսինքն ինն անգամ ավելի, քան ցարական Ռուսաստանում: Հնգամյակի վերջում ամեն մի հեկտարի վրա ընկնելու յե 45 ու մեքենա (տես «Ֆայլշեյթ» № 10 Նիկոլայինի հոդվածը):

ԿՈՒՆԿՏԻՎԱՅՈՒՄԸ ՎՈՐՈՇԵՍ ԳՅՈՒՂԻ ՅԵՎ ՔԱՂԱՔԻ ՀԱՎԱՍՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԻ

Կոլտնտչարժան հակասությունների վերացման հիմնական ուղին տեխնիկական բազայի վերակառուցումն է և դյուզի ու քաղաքի հակասության վերացումը: Մենք մտել ենք սոցիալիզմի, հետևապես նաև դյուզի և քաղաքի հակասության վերացման շուրջանը: Նախքան խորհրդային դյուզի և քաղաքի հակասության և նրա վերացման ուղիներին մասին խոսելը ծանոթանանք այդ պոռ-լեմի ընդհանուր խնդիրներին կապիտալիզմի պայմաններում:

Կապիտալիստական յերկրներում գյուղատնտեսության դար-գացումը միշտ ել հետ և մնում քաղաքի արդյունաբերության դար-գացումից: Այս հանգամանքը պայմանավորված է արտադրության կապիտալիստական յերկրների բնույթով: Այստեղ հիմնական դեր է խաղում հողի մասնավոր սեփականությունը, ռենտան, տնտե-սուրյալներին մանր և ցրված լինելը, արտադրության և շուկայի անարխիան: «Գյուղատնտեսությունն իր զարգացումով հետ է մնում արդյունաբերությունից. այս յերկույթը հատուկ է կապի-տալիստական բոլոր յերկրներին և հանդիսանում է ժողտնտեսու-թյան տարբեր ասպարեզների հարաբերության յախտման, ճեղ-նածածկի ու թանգության հիմնական պատճառներից մեկը: Կա-պիտալիստական հողագործությունը ֆեոդալիզմից, նրան քաջեց առևտրի չըջանալու յան մեջ և սրա հետ մեկտեղ համալսար-հային տնտեսական զարգացման մեջ, դուրս հանեց նրան կանգա-ռումից, կոչառացած դարից և նահապետականությունից»: քաղա-պիտալիզմի վոչ միայն չվերացրեց ճնշվածությունը, մասսաների աղ-քատությունն ու չահագործումը, այլ ընդհակառակը, նա աղ-գեթվարություններն ստեղծում է նոր ձևերով և ժամանակակից բա-զայի վրա վերականգնում է նրա հին ձևերը: Կապիտալիզմի կող-մից արդյունաբերության և հողագործության հակասությունը վոչ միայն չի վերացվում, այլ ընդհակառակը, նրա կողմից ավելի յայնացվում և սրվում է: Կապիտալի ճնշումը հողագործության վրա ավելի ու ավելի յե բեռնվում, վորը գլխավորապես գործում է առևտրի և արդյունաբերության բնագավառում» (Լենին, հ. 9, Նոր ավյաներ գյուղատնտեսության մեջ կապիտալիզմի զարգաց-ման մասին):

Այսպիսով դյուզի և քաղաքի հակադրությունը կապիտալիզմի հիմնական հակասություններից մեկն է, վորից նա յերբեք չի կու-րդ ազատել: Մասնավոր սեփականության, փոխառացած մանր տնտեսությունների գոյությունը անհնար է դարձնում տեխնիկա-կան և կուլտուրական յակական հեղափոխությունը, մասսաների բարեկեցության բարձրացումը: Քաղաքը չահագործում է դյու-

զին վոչ միայն տնտեսապես, այլև կուլտուրապես: Քաղաքում կենտրոնացված է տեխնիկան, կուլտուրան, յակ դյուզի գոյության յողճուկ պայմաններն այնպես են, վոր Մարքսը «գյուղական կյան-քի յեղիտիղմ» է անվանել:

«Պարզեկային սեփականությունը իր բնույթով բացառում է հասարակական աշխատանքի արտադրողական ուժերի, աշխա-տանքի հասարակական ձևերի, կապիտալի հասարակական կոնցեն-տրացիայի, յոչոր մասշտաբի անասնապահության և գլխուկյան աճող գործադրման զարգացումը: Վաշխատությունը և հարկային սխտեմն ամենուրեք նրան դեպի պատկերիկացիա յեն տանում, կապիտալի ծախսումը հող դնելու համար հեռացնում է աղ կա-պիտալը կուլտուրայից: Արտադրության միջոցներին անասհման բաժանվածությունը և յրենց արտադրողների մեկուսացումը, մարդկային ուժերի հակադրական վառնումը, արտադրության պայ-մանների աճող վատացումը և արտադրության միջոցների թան-գացումը—պարզեկային սեփականության անհրաժեշտ որենքն է: Արտադրության այս յեղանակի համար դժբախտություն է բերքի տարկներումն էլ» (Մարքս, Կապիտալ, հ. 3-րդ, մաս 2-րդ, էջ 280—281):

Հոկտեմբերյան հեղափոխությունը վերացրեց հողի մասնավոր սեփականությունը, վոչնչացրեց հողի առուծախը և այդ դարձ-րեց պետության սեփականություն: Այս հանգամանքը վերացնում է գյուղատնտեսության արտադրողական ուժերի սոցիալիստական զարգացման յողճնդոտներից և դյուզի ու քաղաքի հակասության կարևորագույն հիմքերից մեկը: Շնորհիվ դրան մենք հնարավո-րություն ունենք սոցիալիստական յոչոր տնտեսություններ կա-ռուցելու գյուղատնտեսության մեջ:

«Նյութական և հողեկան աշխատանքի ամենալոչոր բաժա-նումը հանդիսանում է քաղաքի բաժանումը գյուղից: Գյուղի և քաղաքի հակադրությունն սկսվում է բարբարոսությունից ցիվի-լիզացիայի, ցեղային կենցաղից պետական կյանքին, ցեղայինից աղդության անցնելու հետ մեկտեղ և չարունակվում է ցիվիլի-զացիայի ամբողջ պատմության ընթացքում մինչև մեր ժամանակ-ները: Քաղաքի հետ մեկտեղ առաջանում է աղմինիստրացիայի, պոլիցիայի, հարկերի և այլնի անհրաժեշտությունը, կարճ առած՝ համայնական կյանքը, ուրեմն և քաղաքականությունն ընդհան-րապես: Այստեղ առաջինը արտահայտից բնակչության բաժա-նումը յերկու յոչոր դասակարգերի, վորն ուղղակի հիմնվում է արտադրողական միջոցների և աշխատանքի բաժանման վրա: Քա-ղաքում մենք մեկ առջև ունենք բնակչության, արտադրության միջոցների, կապիտալի, գվարճանքի, պահանջի, կոնցենտրա-ցիայի փաստը, մինչև կուլտուրա մենք նկատում ենք առանձնաց-ման և մեկուսացման տրամագծորեն հակառակ փաստը: Գյուղի և քաղաքի հակադրությունը կարող է գոյություն ունենալ միայն մասնավոր սեփականության չըջանալու: Դա անհատին աշխա-տանքի բաժանմանը յենթարկելու փաստի ամենապոլիտ արտա-

Հայաստանը և նրան ստիպողաբար վորոշ կայացած դործունեյա-
թյան յենթարկելը, վորը մեկ մարդու դարձնում է քաղաքի սահ-
մանափակ կենդանի, մյուսին գյուղի սահմանափակ կենդանի և
ամեն ուր նորից բորբոքում է յերկուսի շահերի հակադրությունը:
Այստեղ աշխատանքը նորից գլխավոր դործ է, ուժ է հանդիսա-
նում անհատների վրա, և քանի կլինի այս վերջինս, պետք է դո-
յություն ունենա և մասնավոր սեփականությունը: Գյուղի և քա-
ղաքի հակադրության վոչնչացումը կոյեկտիվության առաջին
պայմաններից մեկն է, պարզան, վորն էր հերթին կախված է նյու-
թական նախադրյալների մասսայից և վորը, ինչպես տեսնում են
բոլորը, միանգամից չի կարող իրականացվել լոկ կամքով (այդ-
պայմանները ղեկ պետք է դարձանան)» (Մարքսի և Ենգելսի ար-
խիվ — Մարքսը և Ենգելսը Ֆեյերբախի մասին, էջ 234):

Այսպիսով գյուղի և քաղաքի հակադրությունը կարված է
իշխանության, ուժի և մասնավոր սեփականության հետ: Մաս-
նավոր սեփականության վերացումը և կոյեկտիվացումը հանդի-
սանում են այդ հակադրյալի վերացման հիմնական ուղին: Ներ-
կայումս նյութական և տեխնիկական նախադրյալները, վորի մա-
սին խոսում է Մարքսը, միանգամայն հնարավորություն են տա-
լիս վերացնելու գյուղի և քաղաքի հակադրությունը. այդ պայման-
ներն արդեն հասունացել են: Այդ առթիվ Լենինը գրում է՝

«Կապիտալիստական հասարակարգի մեծ քաղաքների պրո-
դրսիվության վճռողական ընդունելը բորբոքվին էլ չի խանգարում
մեզ մեր իդեալների մեջ մտցնել (և մեր գործողության ծրագրի,
վորովհետև անիրագործելի իդեալներ մենք պատկերացնում ենք
բնի. ընկ. Մարուսովին և Բերդյանովին) գյուղի և քաղաքի հա-
կադրության վերացումը... Ներկայումս, յերբ հնարավոր է ելել-
որոշներգիան հաղորդել յերկար տարածություն, յերբ արանո-
սյորսի տեխնիկան աչքան է բարձրացել, վոր կարելի չի քիչ (հա-
կադրի ներկայի) ծախսերով փոխադրել պատժիրներ ժամը յեր-
կու հարյուր վերստի արագությամբ, համարյա վոչ մի տեխնի-
կական խոչընդոտ չկա նրան, վորպեսզի գիտության և արվեստի
դանձարանից, վոր դարերով կուտակվել են միջանի կենտրոն-
ներում, ոգովեր ամբողջ աղգարնակությունը, վոր շատ թե քիչ
հավասարաչափ տեղափոխված է ամբողջ յերկրում: Յեթե վոչ վոք
չի խանգարում գյուղի և քաղաքի հակադրության վերացմանը
(բնդ վորում իհարկե, պետք է այդ վերացումը պատկերացնել վոչ
թե մի ակտով, այլ մի շարք միջոցառումների ձևով), ապա այդ
միայն «սոստոիկական դգացմունքը» չէ, վոր պահանջում է» (Լե-
նին, 4. 9-րդ, էջ 94):

Այսպիսով, գյուղի և քաղաքի հակադրությունը և նրա առա-
ջացման պատճառները հետևյալներն են.

1. Նյութական արտադրության միջոցները, առաջավոր տեխ-
նիկան և ելեկտրոտեխնիկան գերազանցապես կենտրոնացված է
քաղաքներում:

2. Պետական և կուլտուրական հիմնարկները բացառապես

կենտրոնացված են քաղաքներում: Այստեղից էլ մտավոր աշխա-
տանքի բազան գլխավորապես քաղաքն է, իսկ ֆիզիկական աշխա-
տանքը մեծ մասամբ գյուղը (իհարկե սա չի նշանակում, վոր քա-
ղաքներում ֆիզիկական աշխատանքը քիչ է. չպետք է մոտա-
նալ, վոր բանվոր դասակարգի գլխավոր և հիմնական ջոկատները
կենտրոնացված են մեծ քաղաքներում): Այստեղից էլ գյուղի գե-
րազանցապես ֆիզիկական և քաղաքի գերազանցապես մտավոր
աշխատանքի հակադրությունը, քաղաքի կուլտուրական հակադրու-
թյունը գյուղին:

3. Քաղաքի տնտեսական շահագործումը գյուղի վոչ-եկվի-
վալենտային փոխանակության միջոցով. քաղաքի սպառման գե-
րազանցումը գյուղի հանդեպ:

4. Մասնավոր սեփականությունը և բուրժուական պետու-
թյան սոցիալական քաղաքականությունը այն հիմքն է, վորի վրա
անում և ծավալվում է գյուղի ու քաղաքի հակադրությունը. այն
հիմնական խոչընդոտը, վորը խանգարում է այդ հակադրության
վերացմանը: Մասնավոր սեփականության «սրբազան» սկզբունքը
անառիկ բերդ է՝ ընկած այս նախադրյալին:

Ինչպես ասացինք, այդ հակադրության վերացման նյութական-
տեխնիկական բաղադրար պայմաններ կան նաև կապիտալիստական
հասարակարգի դեմ (եղեկորիֆիկացիա, ինդուստրացման բարձր
մակարդակ, գյուղատնտեսական մեքենաշինարարության աճումն
և այլն), սակայն այստեղ չկան այդ հակադրյալի վերացման սո-
ցիալ-քաղաքական պայմանները: Իշխող դասակարգը չի ցանկա-
նում, շահագրգռված չէ նրա վերացումով: Ընդհակառակը՝ նա
ձգտում է, վորքան հնարավոր է, գյուղը դարձնել գաղութ քա-
ղաքի համար: (Ի դեպ նույնը առաջարկում էին նաև տրոցկիստ-
ները հանձնիս Պրեարրաժենսկու՝ մեր պայմաններում իրագոր-
ծելու համար):

Ընդհանրապես, քանի կան դասակարգեր, կլինի նաև այդ հա-
կադրությունը: Մեղանում վերանում է վերջին շահագործող դա-
սակարգը կուլակությունը. միջակը վորպես գյուղացիական դասա-
կարգ մտնելով կուլակության մեջ, հիմնականում դադարում է
այդպիսին լինելուց, չքափորա-միջակային մասսաների տնտեսու-
թյան կոյեկտիվացումով և կուլակության վորպես դասակարգի
վերացումով մենք վճռողական և վորոշող քայլեր ենք անում և
հիմնական ուղին հարթում գյուղի և քաղաքի հակադրության վե-
րացման:

Ինչպես ասացինք, մասնավոր սեփականությունը գյուղի և քա-
ղաքի հակադրյալի վերացման հիմնական խոչընդոտն է: Սա
տեղծում է ցրված անհատական մանր տնտեսություններ, խան-
գարում է նրանց կենտրոնացմանը և կոյեկտիվացմանը, խանգա-
րում է նորագույն տեխնիկայի և բարդ մեքենաների մուտքը գյու-
ղատնտեսության մեջ, վորը տնտեսական տեխնիկական հեղափո-
խության հիմքն է և գյուղի ու քաղաքի, արդյունաբերության ու
գյուղատնտեսության միացման միակ ուղին: Նա խանգարում է

գյուղատնտեսութեան արտադրողականութեան բարձրացմանը, տնտեսութեան պլանային կազմակերպման և բնական հարստութեան խնայողական օգտագործման աշխատանքներին:

«Սոցիալիզմը դասակարգերի վոչնչացում է... վորպէսզի վոչնչացնել դասակարգերը, անհրաժեշտ է, առաջինը, չտապալել կապիտալիստներին և կալվածատերերին: Սեղբի այս մասը մենք կատարել ենք, բայց սա մի մասն է, այն էլ վոչ ամենադժվարինը: Վորպէսզի վոչնչացնել դասակարգերը, պետք է վոչնչացնել բան-վորներին և գյուղացիներին տարբերութեամբ, բոլորին դարձնել աշխատավորներ: Այս չի կարելի անել միանգամից: Դա անհամեմատ ավելի դժվար խնդիր է և քան անհրաժեշտութեան յերկայան: Դա խնդիր է, վորը չի կարելի լուծել վորեւէ դասակարգի տապալումով: Նրան կարելի չէ լուծել միայն ամբողջ հասարակական տնտեսութեան կազմակերպական վերակառուցումով, անհատական, մեկուսացած, մանր-ապրանքային տնտեսութեաններին հանրայնացված խոշոր տնտեսութեան անցումով: Այդպիսի անցումը քան անհրաժեշտութեան շատ յերկարատե է: Այդպիսի անցումը կարելի չէ միայն դժվարացնել և դանդաղեցնել հալճեալ և անդգուշ վարչականութեամբ, որենպրակաւ միջոցներով: Այդ անցումը կարելի չէ արագացնել միայն ունենով գյուղացիներին, վորը տար նրան հնարավորութեան հսկայական չափերով բարեկալի ամբողջ հողագործութեան տեխնիկան, մեքանիզմներ, նրան հիմնովին» (Լենին, հ. 16, էջ 351, առաջին հրատարակութեան):

Այս հակիրճ քաղվածքն իր մեջ պարունակում է վոչ միայն հարցի տեսական դրույթը, այլև պրակտիկ գործունեության մի ամբողջ ծրագիր: Սա հատկապես կարևոր է մեր կոլեկտիվացման փառափառության համար: Մենք տնտեսապետներին կոլեկտիվացումն առաջին վնասակար փայլն է բանվոր դասակարգի և գյուղացիության կուլտուրական, փառափառ և հյուսիսական տարբերության վերացման համար: Կոլեկտիվացումը այն առաջին քայլն է, վոր աշխատավոր գյուղացին դադարելով հիմնականում մանր ապրանքարտադրող լինելուց, դառնում է կոլեկտիվ աշխատավոր. վորչափով նա կոլեկտիվ աշխատավորից պերածվում է հասարակական աշխատավորի, այն չափով էլ քաղաքականապես, կուլտուրապես և տնտեսապես «համասարեցվում է» գործարանային բանվորին, և վերանում է նրանց միջին հակասութեամբ:

Ինչո՞ւմ է կայանում գյուղի և քաղաքի հակասութեամբ մեր պայմաններում:

Առաջինը բանվոր դասակարգի և գյուղացիության միջին հակասութեամբն է. այն հակասութեամբ, վոր բանվոր դասակարգը հասարակական աշխատողների դասակարգ է, իսկ գյուղացիութեամբ (չբախտնեղ և միջակներ)՝ մանր ապրանքարտադրողներ և սեփականատերեր: Այս և սրանից բղխող հակասութեամբները (հարկեր, վարկեր, մեքանիզմներ և այլն) կվերանան միայն գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման հիման վրա:

Մեր պայմաններում ևս գյուղատնտեսութեան մեջ գեոմա պահպանող մասնավոր սեփականութեամբ գյուղի և քաղաքի հակասութեան վերացման հիմնական խոչընդոտն է:

Յերկրորդ հակասութեամբն է՝ դա չբախտնեղ-միջակային և կուլտուրական մասնային նյութական, կուլտուրական և քաղաքական տարբերութեամբն է բանվոր դասակարգից: Մեր կուլտուրական հետամնացութեամբ մեծ դժվարութեամբ է այս ճանապարհին, սակայն նա հաղթահարվում է կուլտուրական հեղափոխութեան հաղթական վերելքով և պարտուալ կիրառումով:

Յերրորդ հակասութեամբն է այն է, վոր գյուղը քաղաքային գյուղատնտեսական ապրանքների արտադրող է, իսկ քաղաքը՝ արդյունաբերութեան: Սրանց արտադրանքի փոխանակութեամբ հակասութեան հիմնական աղբյուրներն են: Միայն սոցիալիստական մեքանիզմով տնտեսութեամբ կվերացնի այս հակասութեամբ: Իսկ սա կլինի, յերբ հողագործական աշխատանքը միացվի ֆաբրիկայի աշխատանքին: Յերբ չեն լինի նեղ գյուղատնտեսական և ֆաբրիկա-գործարանային բանվորներ, յերբ սրանք միանալով, կկազմեն ագրո-ինդուստրիալ, կամ ինդուստրիալ-ագրարային կոմբինատներ, վորտեղ սոցիալիստական յերկրագործութեան և արդյունաբերութեան աշխատողներն անընդհատ կհերթափոխվեն: Իսկ սրա համար անհրաժեշտ է արտադրողական ուժերի աշխարհագրական «հավասար» և տնտեսավարական բաշխում, «խոշոր» արդյունաբերության հնարավոր հավասարաչափ բաշխումն ամբողջ յերկրում» (Ենգելս-Դյուրինգ):

Զորրորդ հակասութեամբն է գյուղատնտեսութեան ինդուստրացման ցածր մակարդակն է, գյուղատնտեսութեան էլեկտրիֆիկացիայի աննշան նվաճումները: Գյուղատնտեսական մեքենայինարարութեամբ, մեքենա-տրակտորային կայանների աճումը և ընդհանրապես յերկրի ինդուստրացումը և էլեկտրիֆիկացիայի բարձր տեմպերն արագորեն վերացնում են նաև այս հակասութեամբ:

Այսպիսով մեզրոնում գյուղի և քաղաքի հակասութեան վերացման հիմնական ուղիներն են՝ ա) գյուղատնտեսության ինդուստրիայի աճումը. նրա տեխնիկական բազայի բարձրացումը և էլեկտրաէներգիայի ռզուսգործումը: Սրա հետևանքով գյուղատնտեսության արտադրականության բարձրացումը և գարգացման տեմպերի մատցումը արդյունաբերության գարգացման տեմպերին: բ) Գյուղատնտեսության սոցիալիստական ռեկոնստրուկցիան. համառոտած կոլեկտիվացումը և կուլակության վերացումը, վորով վերանում է նաև հիմնական խոչընդոտ մասնավոր սեփականությունը: գ) Խորհրդային կայանների, մեքենատրակտորային կայանների, ագրո-ինդուստրիալ և ինդուստրիալ-ագրարային կոմբինատների աճումը. ագրո-ֆաբրիկների կառուցումը: զ) Յերկրի ինդուստրացման, գործարանային շինարարության բարձր տեմպերը. փոխադրության նոր հնարարների ու յերկաբուղիների շինարարությունը, վորով սերտորեն կապում

եմ գյուղը քաղաքի հետ: Ե) Տնտեսության պլանային կազմակերպումը, գյուղի և քաղաքի փոխանակության կոուպերացումը, կոուպերացիան և սոցիալիստական մթերփափոխանակության աստիճանական հաստատումը: Դ) Կուլտուրական հետախնայության վերացումը պարտուզի և կուլտուրական հեղափոխության միջոցով: Տեխնիկային տիրապետելու լուրջ գիտական իրագործումը:

Մեզանում վերացված և քաղաքի շահագործումը գյուղին. արտադրության և փոխադրության միջոցները պետականացված են. ստեղծվել և զարգանում է շնորհիվ կոլեկտիվացման փոխադարձ ոգնության նոր վերաբերմունքը գյուղի և քաղաքի միջև: Տնտեսության պլանային կազմակերպումը թափանցել և ընդգրկել է նաև գյուղատնտեսությունը, իսկ գյուղի կոլեկտիվացման և տեխնիկակ. ու կուլտուրական հեղափոխության պրոցեսին համաքաղ վերանում է գյուղի և քաղաքի տարբերությունը և հակադրությունը: Յեթե նկատի ունենանք նաև խնդրադրման հումուրի բաղադրանքները և ազգային հանրապետությունները ու հետամնաց շրջանները արդյունաբերության զարգացման արագ տեմպերը, ապա պարզ կլինի, Վոր մենք ապրում ենք գյուղի և քաղաքի հակասության վերացման վերջին ետապը, ընդհուպ մոտեցել ենք այդ վերացման խնդիրներին լուծմանը:

«Միայն այն հասարակությունը, Վորի արտադրողական ուժերը ներդաշնակորեն գործում են մի ընդհանուր և մեծ սղանի համաձայն, կարող է թույլ տալ, Վոր արդյունաբերությունն այնպես ծախարկի ամբողջ յերկրում, ինչպես Վոր դա ամենից ավելի յե համապատասխանում նրա զարգացմանն ու պահպանմանը կամ, Վոր միևնույն է, արտադրության մյուս տարրերի զարգացմանը:

Այդպիսով գյուղի և քաղաքի հակադրության վերացումը Վոր միայն հնարավոր է, այլև գարձել և ուղղակի անհրաժեշտություն հենց իր արդյունաբերական արտադրության համար, ինչպես և հողագործական արտադրության համար, բայց այդ նաև հասարակական ատոջապահության համար: Միայն գյուղի և քաղաքի միաձուլումով կարելի յե վերացնել ողի, ջրի և հողի ներկա թուշնափորումը. միայն այդ միջոցով քաղաքի հյուսիսի մասաներն այնպիսի դրություն մեջ կդրվեն, Վոր նրանց արտաթորանքները փոխանակ թունավորումներ առաջ բերելու, կծառայեն բուսականության պարարտացմանը» (Ենգելս—Անտի-Ռյուրլինգ):

Համաձայն կենտրոնի հուլիսյան պլենումի վորոշումների, արդյունաբերական ձեռնարկների կառուցումը յերկրում պետք է զնա այնպես, Վոր չձանրաբռնի գոյություն ունեցող արդյունաբերական կենտրոնները նոր գործարանային շինարարությամբ: Նա պետք է ընթանա այն ուղիով (Վորքան այդ թեյադրում է տնտեսական նպատակահարմարությունը), Վորքանի արդյունաբերական ձեռնարկները կառուցվեն հում նյութի քաղային մոտիկ և ապագայում դառնան կոմունիստական հասարակարգի արտադրական քիչքների միացյալ կոմբինատների հիմքը: Արդյունաբեր-

րական արտադրականներն և տնտեսական նպատակահարմար բաշխելու համար պետք է նկատի ունենալ այնպիսի ֆակտորներ, ինչպիսիք են՝ բնական հարստությունը, վառելանյութը և հում նյութը, փախադրական հարմարությունները, բանությունը, եներգետիկ անուրանները և այլն: Քանի Վոր սոցիալիզմի-կոմունիզմի հարստության հիմնական արդյունքն աշխատանքն է, ապա արտադրողական ուժերի քիչ բաշխման հիմնական սկզբունքը պետք է լինի աշխատվել աշխատանքի քիչ բաշխում և կազմակերպումը:

«Յեկիրի արդյունաբերական շինարարության հետագա զարգացումը պետք է ընթանա գյուղացիական շրջաններում նոր արդյունաբերական ողանքի հիմնելու գծով, և դրանով իսկ կոտեցիի գյուղի և քաղաքի միջև հակադրության վերջնական վերացումը» (Կենտրոնի 1931 թ. հուլիսյան բանաձևից):

Գյուղի և քաղաքի հակասության վերացման նյութական կառուցողական բաղան արդյունաբերության և գյուղատնտեսության միացումն է: Գյուղատնտեսության հումուրքը վերամշակող արդյունաբերության միաձուլումն հումքի քաղային: Գյուղատնտեսական խնդրադրման տեղափորումը նրա վերամշակմանը յենթակա հումքի շրջանում, այդ յերկուսի որգանական միացումը միաձուլական անընդհատ արտադրական պրոցեսով: Այս պրոցեսի լուծումը կլուծի նաև գյուղատնտեսական աշխատանքի սեզոնից հետո աղատ մնացած բանուժի ողապործման խնդիրը: Մեխանիզացիայի յենթարկված գյուղատնտեսությունը լուծում է գյուղատնտեսության մեջ դրադված՝ բանվորների և կուլանտականների աշխատանքի սեզոնայնություն վերացումը:

Գյուղատնտեսության հումքի (գլխավորապես նախնական մշակման) համար տեղում արդյունաբերական ճյուղեր ստեղծելու քաղաքականությունը յերկրի բացատում նրանց Վորոշ ճյուղերի վերամշակումն ավարտելու աշխատանքներին կենտրոնացումն է: Պարավելի յայն մատչաբով, թեկուզ և հումքի քաղային հետո: Պարտադիր է և Վոր էլ տնտեսական անհրաժեշտություն, Վոր սոցյալ ուղյունի ամբողջ հումքի վերամշակումն ավարտվի սոցյալ շրջանում: Յեթե մի շրջանի բամբակի վերամշակման նախնական աշխատանքները (բամբակաղաիչ գործարաններ և այլն) ձեռնառն յե կառուցել արդեն, ապա միշտ էլ ձեռնառն է լինի, Վոր նույն շրջանն ունենա տեղափոխ գործարան և կոտրեղեններ արտադրի: Ահեն մի դեպքում այդ կախված է հումքի քաղային ուժեղությունից, մոտակա շրջանում նրա վերամշակման արդյունաբերության զարգացումից, տրանսպորտից, վառելիքի պաշարից և այլն:

«Այստեղից բխում է, Վոր քաղաքի և գյուղի հակասությունը նույնպես կլինանա: Միևնույն մարդիկ դրադվելու յեն և գյուղատնտեսական և գործարանային աշխատանքներով՝ փոխանակ Վոր այդ բանն անեն յերկու տարբեր դասակարգեր: Դա կոմունիստական արոցյալի անհրաժեշտ պայմանն է՝ թեկուզ նյութական աղաճառների հետևանքով: Հողագործ արդարանկություն մաս-

նախումբը գյուղերում և արդյունաբերականի կոռուպցիայում մեծ քաղաքներում—դա մի դրուժյուն է, վորը համապատասխանում է գյուղատնտեսության և արդյունաբերության միջ-բաժանակցային բարձր մակարդակին և վորը հետագա զարգացմանը խոչընդոտ է հանգիստում, մի հանգամանք, վոր իրեն զգալ և տալիս ներկայումս» (կոմունիզմի սկզբունքները) :

Այսպիսով գյուղական կյանքի սահմանափակվածությունը և իդիոսինկրիզմը կլեբանա, չեթե գյուղատնտեսությունը բարձրացվի տեխնիկական բարձր բաղադրի վրա և գյուղատնտեսական աշխատանքը միացվի գործարանային աշխատանքին հետ: Ժողովրդական տնտեսություն միասնական որդանիզմի տարրեր հատվածների աշխատակիցները հնարավորություն կունենան կատարելու՝ շատ բազմազան աշխատանքներ և անընդհատ փոխարինելու իրար:

Այս փիճակը միանգամից չէ, վոր ձևով պետք է բերվի: մենք ներկայումս սկսեց ենք այս իրադրությունը վոչ միայն գյուղատնտեսական-արդյունաբերական կոմբինատներ ստեղծելով, այլև նեղ մասնագիտական խորհրդատեսություններ ստեղծելով (հացահատիկային, անասնապահական, խոզաբուծական և այլն): Մասնագիտացման այս կուրսը ներկա շրջանում միանգամայն անհրաժեշտ է, նա նախադրյալներ կստեղծի հետագայում կոմբինատների անցմանը: Սկզբից մենք ստեղծում ենք մասնագիտական տնտեսություններ, ապա նրանց կազմակերպական-տնտեսական ամրացմանը զուգահեռ անցնում է կոմբինատների: Կոլտնտեսությունների գծով հաղթել ստեղծված կ ոմբինատները թույլ արդյունքներ տվին, ասկայն սա բացատրվում է գործի չնախապատրաստված և նոր լինելով, սա աճման հիվանդություն է: Կոլտնտեսությունների ուժեղացման հետ մեկտեղ կոմբինատները տնտեսական անհրաժեշտություն են դառնում:

«...Ազգային կալվածներում մեծ պաշտոների սարքավորումը վորպես կոմունայի քաղաքացիների ընդհանուր բնակարաններ, վորոնք զբաղվելու չեն արդյունաբերությամբ և գյուղատնտեսությամբ և միացնելու չեն գյուղի և քաղաքի կյանքի առափնյաությունները՝ առանց նրանց միակողմանիությունից և թերություններից ստեղծելու» (Նեղելը—կոմունիզմի սկզբունքները): Այսպիսով սոցիալիզմը պահանջում է այնպիսի բնակարանների կառուցում, վորոնք միացնելով գյուղի և քաղաքի կյանքի ու պայմանների դրական կողմերը, դերծ կլինեն նրանց բացասականից, և սա գյուղի ու քաղաքի տարբերության և հակադրության վերացման միջոցներից մեկն է: «Ուշոր քաղաքները պետք է վերանան և կլեբանան, թեկուզ և պրոցեսը լինի յերկարատև» (Նեղելը): Այս լիակատար սոցիալիզմի հասարակարգում կհալչեն նաև ներկայիս խոշոր քաղաքները: նրանք կունենան արտադրական կոնկրետ պրոֆիլ, կազատվեն միայն սպառող և քաղաքի հմալքով կենտրոնացված մասսայից, կունենան աշխատի մեծություն և մարդկային կոնտինդենտ, վորը բոլորում է արտադրությունը կազմակերպելու և վարելու պահանջներից:

Գյուղի և քաղաքի հակասության վերացման կարևորագույն միջոցներից մեկը փոխանակության կալվածակերպումն է: Գյուղատնտեսական և արդյունաբերական աշխատանքի առանձնացման վերացումը վերացնում է այդ պրոբլեմի բոլոր դժվարությունները, վորովհետև չի լինելու մեկուսացած արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրություն: Ներկայիս փոխանակությունն իր տեղը կղիջի արտադրական կոմունաների միջի սոցիալիստական միջբաժանակցային: միասնական տնտեսական կենտրոնի միջոցով, այլանային կարգով կբաշխվեն մթերքները կոմունաներին:

